



# ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

- ՆՈՐ ՄՈՏՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՈՋ**  
Գևորգ Կոստանյանը՝ ՀՀ գլխավոր դատախազ
- ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**
- ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱՁՆԵՐԸ**  
Միջազգային համաժողով Երևանում
- ԿՈՐՊՈՐԱՅԻԱՅԻ ԼՈՒՏԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
- ԻՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՔԸ**  
Պատմաիրավական վերլուծության փորձ

**ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱԽԱՉՆԵՐԸ**



2013 թվականի  
հոկտեմբերի 7-9-ը  
երևանում  
անցկացվեց  
Եվրոպայի  
դատախազների  
խորհրդատվական  
խորհրդի  
VIII լիազույմար  
նիստը



# №79

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՅՐԱՍ ՇԱՅԻՆՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝  
29.10.2013 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2013 թ.

# 2013

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնարկային հրատարակման համար թույլատրելի գիտական պարբերականների ցանկում:

# «ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԵԿ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱՆՔԸ` ՀԱՆՑԱՆՔ Է ԲՈԼՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ»

## ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ

30 սեպտեմբերի, 2013թ.

**Ազգային ժողովի հարգարժան նախագահ, Հարգելի պատգամավորներ, գործընկերներ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության դատախազությանն են վերապահված պետության համար հույժ կարևորություն ունեցող 6 լիազորություններ` 1) քրեական հետապնդում հարուցելը, 2) հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը, 3) մեղադրանքի պաշտպանումը դատարանում, 4) պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը դատարան, 5) դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը, 6) պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը:



Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունների պարզ թվարկումն անգամ բավական է, նույնիսկ ոչ իրավաբան մասնագետի համար, պատկերացում կազմելու, որ իրեն

վերապահված լիազորություններից ցանկացածի իրականացման ժամանակ թույլ տված նույնիսկ աննշան թերությունն ինչպիսի աղետալի հետևանքներ կարող է ունենալ ողջ համակարգի և պետության համար:

Ը ն դ հ ա ն ր ա պ ե ս մարդկության պատմության համար շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություն է համարվում այն գաղափարի հաստատումը, որ քաղաքակիրթ հասարակության մեջ մեկ անձի նկատմամբ կատարված հանցանքը` հանցանք է բոլորի

նկատմամբ: Եվ այս գաղափարի պաշտպանության վրա է, որ կառուցվում է ընդհանրապես ցանկացած երկրի դատախազական համակարգը: Այլապես մենք ունենում ենք մի հասարակություն, որտեղ յուրաքանչյուր ոք ինքնուրույն պետք է պաշտպանվի հանցագործություններից, իսկ սա իր հերթին բերում է մի իրավիճակի, որտեղ գործում է ուժեղի իրավունքը, ինչը հարիր չէ քաղաքակիրթ հասարակությանը, հետևաբար, բացարձակ անընդունելի է:

Ցավոք մեր պետության առջև այս պահին ծառայած են բազմաթիվ խնդիրներ որոնց առկայությունը մեզ դեռևս թույլ չի տալիս ունենալու մի այնպիսի պետություն, որտեղ բոլորն ապրում են ապահով և բարեկեցիկ կյանքով: Մեր առջև ծառայած խնդիրներից շատերը ունեն օբյեկտիվ պատճառներ և ինչ-որ չափով կարող են կապվել մեզմից անկախ հանգամանքների հետ: Օրինակ՝ տնտեսական ոլորտում փակ սահմաններ, անվտանգության ոլորտում մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված հարևաններ, բարդ աշխարհաքաղաքական իրավիճակ և այլն: Սակայն կա մի ոլորտ որտեղ հաջողության հասնելու համար ամեն ինչ բացառապես կախված է մեզանից. չկան օբյեկտիվ խոչընդոտներ, բոլոր խոչընդոտները սուբյեկտիվ են: Դա արդարադատության համակարգն է:

Ժողովրդավարական և իրավական պետության կառուցելու ճանապարհին, որտեղ ապահովված է իրավունքի գերակայությունը, որտեղ բոլորը հավասար են օրենքի առաջ և հարգված են մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները, մեր առջև չկա ոչ մի օբյեկտիվ խոչընդոտ, բոլոր խոչընդոտները սուբյեկտիվ են, այս հարցում մեզ ոչ ոք չի խանգարում, նշանակություն չունեն փակ սահմանները և աշխարհաքաղաքական իրավիճակը: Պատասխանատու ենք միայն մենք և պետք է պահանջենք միայն մեզանից:

Ինքս պատիվ ունեն 2004 թվականից ներկայացնելու Հայաստանի Հանրապետության կառավարությունը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում, որպես կառավարության լիազոր ներկայացուցիչ: Մինչ այս պահը Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ գործերով կայացվել է 42-վճիռ, որով արձանագրվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոմիտենցիայի այս կամ այն հոդվածի խախտում: Նշված 42 վճիռներից 36-ում խախտում է արձանագրվել 5-րդ և 6-րդ հոդվածներով, որոնք վերաբերում են արդար դատաքննությանը և անձի ազատության անձեռնմխելիության իրավունքին: Կարծում եմ, սա մտահոգիչ ցուցանիշ է հաշվի առնելով, որ այս գործերից յուրաքանչյուրում արձանագրված խախտումը կարող էր չլինել, եթե արդարադատություն իրա-

կանացնող համակարգը իր բոլոր օղակներում խստորեն առաջնորդվեր օրենքով:

Ասվածի համատեքստում կուզենայի անել մի կարևոր դիտարկում: Իմ կարծիքով Եվրոպական դատարանում Հայաստանի դեմ խախտում արձանագրած հենց առաջին գործը՝ **Սկրտչյանն ընդդեմ Հայաստանի**, չափազանց խորհրդանշական էր: Գործի հանգամանքների մեջ չմտնելով նշեմ միայն, որ այս գործը ըստ էության վերաբերում է անձին ընդամենը 500 դրամ, կրկնում են՝ 500 դրամ վարչական տուգանք նշանակելուն: Այս գործը, լինելով Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած առաջին գործը, ինձ համար ունի նաև մեծ խորհուրդ և իմ կարծիքով բնութագրում է հայ ժողովրդի վերաբերմունքը արդարության նկատմամբ: Հայ ժողովրդի պատմությունը դա ըստ էության մեծապես արդարության համար պայքարի պատմություն է, որի ընթացքում, ցավոք, պարտությունները ավելի շատ են եղել քան հաղթանակները: Բոլորիս համար էլ պարզ է, որ տվյալ անձի համար ընդամենը 500 դրամ տուգանք մուծելը էական նշանակություն չի ունեցել, խնդիրը եղել է արդարության զգացումը: Հայցը ներկայացնելով 2002 թվականին և հինգ տարի պայքարելուց հետո անձը վերջապես հասել է արդարության Եվրոպական դատարանում: Խորհրդանշական է նաև, որ այս գործով Եվրոպական դատարանը որևէ դրամական փոխհատուցում չի տվել հստակ հասկանալով, որ նման գործերում դրամական փոխհատուցումը չէ, որ կարևոր է: Եվրոպական դատարանը բառացիորեն նշել է իր վճռում, որ խախտման արձանագրությունը ինքնին արդեն հատուցում է տվյալ անձի համար:

Հարգելի պատգամավորներ՝ մենք երբեմն հակված ենք լինում մեր աշխատանքի արդյունավետությունը զնահատել վիճակագրական չոր թվերի օգնությամբ, առանց հաշվի առնելու, որ եթե հանցագործության այս կամ այն տեսակի նվազման կամ աճի թվերը հրապարակելուց զատ չի ներկայացվում կատարված աշխատանքը կամ թերացումները, ապա հասարակությունը հնարավորություն չի ունենում կապելու կատարված աշխատանքը դրական արդյունքների իսկ թերացումները բացասական արդյունքների հետ: Այս

դեպքում բնականաբար հասարակությունը հնարավորություն չի ունենում հասկանալու, թե որ օղակը իր առջև դրած խնդիրները հաջողությամբ հաղթահարեց, իսկ որ օղակը թերացավ: Խստագույնս պահպանելով օրինականության սկզբունքը կարելի է կարճ ժամանակահատվածում հասնել այնպիսի արդյունքների, որոնք ոչ միայն կարտացոլվեն վիճակագրության մեջ այլ նաև տեսանելի կլինեն հասարակության համար և կփոխեն արդարադատության նկատմամբ ընկալումը:

Ասածս հիմնավորելու համար կուզենայի մի քանի թիվ և փաստ բերել այն ոլորտից որի համար համար ինքս պատասխանատու եմ եղել անցած երկուս ու կես տարիների ընթացքում, խոսքս զինվորական դատախազության մասին է: Ինչպես գիտեք, 2011 թվականի հունվարից զբաղեցնում եմ ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը: Եթե խոսենք զուտ վիճակագրությունից, ապա պատկերը հետևյալն է՝ ՀՀ զինված ուժերում 2010թ արձանագրվել է զինվորական ծառայության հետ կապված

43 մահվան դեպք, 2011թ. 36, 2012թ. 29 և 2013թ. մինչև սեպտեմբեր ամիսը ներառյալ 14 մահվան դեպք:

Իհարկե, անհրաժեշտ է նշել, որ անգամ մեկ մահվան դեպքը զինված ուժերում խիստ մտահոգիչ է, սակայն, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ մահվան ելքով դեպքերը զինված ուժերում ակնհայտորեն նվազել են: Կարևոր է փաստել նաև, որ

2012թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում արձանագրված զինվորական հանցագործությունները 2011թ համեմատ նվազել են 21.2 տոկոսով, իսկ 2010 թվականի համեմատությամբ նվազումը կազմում է ավելի քան 30 տոկոս: Այսինքն, փաստ է, որ մենք ունենք հանցավորության կայուն նվազման միտում, ընդ որում, այդ տեմպերը պահպանվում է և չի կարող փոփոխվել, քանի որ հիմնական պայքարն ու ուղղվածությունը հանցավորությունը ծնող պատճառների և պայմանների չեզոքացումն է, հետևաբար, հանցավորության դրսևորման և աճի համար նպաստավոր որևէ պայման չկա: Կարծում եմ, որ զինված ուժերում հանցագործությունների նվազման միտումը ակնհայտ է և ինքնին խոսում է սովյալ ոլորտում ընտրված ռազմավարության և կատարված աշխատանքի արդյունավետության մասին:

Սակայն, եթե այստեղ կանգ առնենք և չարձանագրենք այն աշխատանքը, որի շնորհիվ ունենք այս իրավիճակը, ապա պատկերը թերի կլինի: Պաշտոնական վիճակագրության համաձայն որոշ հանցագործություններ նվազման միտումը դեռևս չի նշանակում, որ կատարված աշխատանքը բավարար է, կամ որ հասարակության մեջ կա բավարար ընկալում, որ զգալի աշխատանք է կատարվում: Իմ խորին համոզմամբ, հանցագործությունների թվի նվազումը ուղղակիորեն պայմանավորված է պաշտպանության

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ



**Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրության  
55 հոդվածի 9-րդ կետի համաձայն,  
ՀՀ Նախագահի առաջարկությամբ,  
ՀՀ Ազգային ժողովը  
2013 թվականի հոկտեմբերի 1-ին,  
ձայների բացարձակ  
մեծամասնությամբ (103 կողմ և 3 դեմ),  
վեց տարի ժամկետով  
Հայաստանի Հանրապետության  
գլխավոր դատախազ նշանակեց  
ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԻԿԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ:**

տոնական վիճակագրության համաձայն որոշ հանցագործություններ նվազման միտումը դեռևս չի նշանակում, որ կատարված աշխատանքը բավարար է, կամ որ հասարակության մեջ կա բավարար ընկալում, որ զգալի աշխատանք է կատարվում: Իմ խորին համոզմամբ, հանցագործությունների թվի նվազումը ուղղակիորեն պայմանավորված է պաշտպանության

նախարարության, զինվորական դատախազության և զինվորական իրավապահ այլ մարմինների կողմից համատեղ իրականացված և իրականացվող համակարգային բնույթի հետևողական աշխատանքով, որոնք իրենց հիմքում ունեն օրենքի առջև բոլորի հավասարության, ցանկացած իրավախախտման, այդ թվում՝ հանցագործության, նկատմամբ անհանդուրժողականության և անպատեհիության մթնոլորտի բացառման սկզբունքները: Այդ նպատակով իրականացվում են համատեղ գործնական կանխարգելիչ և օրենսդրական բնույթի միջոցառումներ, որոնք երկարաժամկետ համակարգային առումով հանգեցնելու են զինված ուժերում կարգապահության բարձրացմանն ու, հետևաբար, հանցավորության մակարդակի կայուն և հաստատուն նվազմանը:

2011թ. իրականացված միջոցառումներին հաջորդող, ի թիվս այլ միջոցառումների հատկապես, ցանկանում են առանձնացնել, 2011-2012թթ Ձինվորական կարգապահական նոր կանոնագրքի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի «Ձինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունները» գլխի նոր խմբագրության նախագծումը, որոնք ընդունվել են Ազգային ժողովի կողմից և ներկայումս գործում են: Եվ 2012թ ՀՀ զինվորական դատախազության, պետական այլ մարմինների և ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի հետ հեղինակային խմբով հրատարակած «Ձինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների զիտագործնական մեկնա-

բանություններ»-ը, որոնք ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով բաժանվել են ՀՀ Ձինված ուժերի սպաներին՝ վերջիններիս իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով:


**Հարգելի պատգամավորներ**

Անհրաժեշտ են համարում մշել, որ մենք կարիք ունենք վերանայելու և արդիականացնելու արդարադատության մեր ողջ համակարգը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ 21-րդ դարի հանցագործությունների դեմ անհնար է պայքարել միայն 20-րդ դարի մեթոդներով:

Մենք արդեն այս պահին լրջագույն խնդիր ունենք կապված քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության հետ: Անհրաժեշտ է որդեգրել պատժի նկատմամբ նոր՝ 21-րդ դարին հարկի մոտեցումներ: Անձին քրեակատարողական հիմնարկում պահելու իմաստը սոցիալական արդարության վերականգնումն է, պատժի ենթարկված անձի ուղղումն է և նոր

հանցագործությունների կանխումն է, այլ ոչ թե նրան հասարակությունից մեկուսացնելը և որոշ ժամանակով նրա մասին մոռանալը:

Այս առումով անհրաժեշտ են համարում շարունակել և խորացնել աշխատանքները մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական արժեքների ամրապնդման ուղղությամբ: Անժխտելի է, որ առանց այս արժեքների ամրապնդման անհնարին է ունենալ մրցունակ և բարեկե-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՈՐՈՇՈՒՄ

**ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԻԿԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ  
ՀՅՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԳՆՏԱՆԵՑ ԼԵՆՆԱԿԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության  
Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ է.  
Հայաստանի Հանրապետության  
գլխավոր դատախազ նշանակել  
**Գևորգ Սուրիկի ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**      **Յ. ԱՔՐԱՅԱՄՅԱՆ**

1 հոկտեմբերի  
2013 թվականի, քաղ. երևան

ցիկ պետություն, որտեղ հարգված են բոլորի իրավունքները և բոլորը հավասար են օրենքի առջև: Իմ խորին համոզմամբ միայն նման հասարակություններն են հաջողության հասնում այսօրվա աշխարհում:

**Քարգելի պատգամվորներ**

Իրավական պետության կառուցման, օրենքի առջև բոլորի հավասարության, հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և հանցագործություն կատարած յուրաքանչյուր անձի համարժեք քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ իրականացվող գործընթացը ՀՀ դատախազությունը իզորու չէ կատարել միայնակ, անհրաժեշտ է արդարադատություն իրականացնող և դրա իրականացմանը նպաստող բոլոր օղակների համակարգված և քրտնաջան աշխատանքը: Առաջին հերթին, իհարկե, նկատի ունեն ՀՀ դատական համակարգը: Առանց դատական համակարգի պատշաճ աշխատանքի իրավական պետություն կառուցման հնարավորությունն իսկ կլինի վտանգի տակ:

Մենք լուրջ անելիքներ ունենք դատախազության ոլորտում: Ասեմ անկեղծ՝ ստանալով Հայաստանի Հանրապետության Նախագահի բարձր վստահությունը, երբ գալիս էի հանդիպման ԱԺ խմբակցությունների հետ, ինձ մոտ տպավորություն էր, որ քննարկված ժամանակ ներկայացնելու են գլխավոր դատախազի պաշտոնում Նշանակվելու դեպքում աշխատանքի իմ սկզբունքները: Սակայն Ազգային ժողովում ներկայացված անխտիր բոլոր խմբակցությունների հետ քննարկումների արդյունքում ինձ համար պարզ դարձավ, որ այն սկզբունքները որոնք ես համարել եմ աշխատանքի իմ սկզբունքները, իրականում հանդիսանում են մեր սկզբունքները: ԱԺ բոլոր խմբակցությունների հետ հանդիպումների ժամանակ մենք, ըստ էության, արձանագրեցինք, որ մեր նպատակների և դրանց հասնելու ճանապարհի առումով բոլորս գրեթե համակարծիք ենք: Հետևաբար իմ պաշտոնավարման ընթացքում մեզ համար առաջնահերթ նպատակներ են լինելու:

**Առաջին՝** Հայաստանի Հանրապետությունում և հատկապես դատախազության համակարգում կոռուպցիայի դեմ անգի-

ջում պայքարը: Կոռուպցիան չի կարող տեղ ունենալ դատախազության ոլորտում դա ես համարում եմ անընդունելի: Ոչ պակաս կարևոր է նաև դատախազի մասնագիտական ունակությունները: Ոչ պրոֆեսիոնալ դատախազը, իմ կարծիքով, չարիք է, քանի որ նրա ոչ պրոֆեսիոնալության պատճառով կարող են ընդմիջտ խեղվել մարդկային ճակատագրեր: Դատախազության ցանկացած պաշտոնյա, ով համաձայն չէ այն ձևակերպման հետ, որ կոռուպցիան և ոչ պրոֆեսիոնալիզմը չեն կարող տեղ ունենալ դատախազության համակարգում, շատ շուտով ինքը տեղ չի ունենալու դատախազության համակարգում, սա միանշանակ է և չի կարող քննարկման առարկա լինել:

**Երկրորդ՝** օրենքով դատախազը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Այս հարցը նույնպես համարելու եմ իմ պաշտոնավարման ընթացքում մեր կարևորագույն խնդիրներից մեկը: Քաղաքականությամբ զբաղվելու ցանկություն ունեցող ցանկացած դատախազի, անկախ նրա զբաղեցրած պաշտոնից, ընձեռվելու է քաղաքականությամբ զբաղվելու լայն հնարավորություն, պայմանով, որ նա նախապես վայր կդնի դատախազի իր լիազորությունները:

**Եվ երրորդ՝** հասարակության մեջ երբեմն հնչում են կարծիքներ՝ կապված Հայաստանի Հանրապետությունում տիրող անպատժելիության մթնոլորտի առկայության հետ: Չնայած այն հանգամանքին, որ ես համաձայն չեմ այն ձևակերպման հետ, որ Հայաստանում համատարած անպատժելիության մթնոլորտ է, սակայն համարում եմ, որ մեկ դեպքն իսկ բավարար է նման տրամադրությունների վրա ազդելու համար, հետևաբար իմ կարևորագույն նպատակներից մեկը ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնում Նշանակվելու պայմաններում լինելու է օրենքի առջև բոլորի հավասարության ապահովումը, և այն, որ ցանկացած հանցագործ ստանա համարժեք պատիժ և հարգվեն գործին առնչվող բոլոր կողմերի համար օրենսդրությամբ նախատեսված իրավունքները:

Շնորհակալություն ուշադրության համար:



# ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՈՋ

**ՀՀ Նախագահ ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀՀ դատախազության կոլեգիայի անդամներին ներկայացրել է նորանշանակ գլխավոր դատախազ ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ**



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանն 2013թ. հոկտեմբերի 3-ին այցելել է Հայաստանի Հանրապետության դատախազություն և ՀՀ դատախազության կոլեգիայի անդամներին ներկայացրել ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանին:

Հանրապետության Նախագահը շնորհավորել է Գևորգ Կոստանյանին՝ պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, մաղթել հաջողություններ: Սերժ Սարգսյանը հույս է հայտնել, որ գլխավոր դատախազն իր նոր մոտեցումներով ու աշխատառճով, ՀՀ դատախազության աշխատակիցների օժանդակությամբ, կկարողանա արդյունավետորեն լուծել համակարգի առջև դրված խնդիրները:

Նախագահը նաև շնորհակալություն է հայտնել նախկին գլխավոր դատախազ Աղվան ՅՈՎՍԵՓՅԱՆԻՆ՝ երկարամյա աշխատանքի համար, ընդգծելով, որ մեր երկրի դատաիրավական համակարգում Աղվան ՅՈՎՍԵՓՅԱՆԸ դեռևս անելիք ունի:

**ՀՀ Նախագահի մամուլ գրասենյակ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ  
ԳԵՎՈՐԳ ՍՈՒՐԻԿԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ**

Ծնվել է 1977 թվականի հոկտեմբերի 4-ին, Երևան քաղաքում: 1999 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Ուսումնառություն է անցել Մեծ Բրիտանիայի Նոտինգեմի համալսարանում:

1995 թվականից աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում որպես օրենսդրության հարցերի վարչության առաջին կարգի խորհրդատու, 2001 թվականից՝ ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական: 2003-2004 թվականներին եղել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալը, իսկ 2006-2008 թվականներին՝ Գ. Կոստանյանը զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնը:

2008-2011 թվականներին Գ. Կոստանյանը եղել է Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնականը, միաժամանակ հանդիսանալով ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի մոնիտորինգի հանձնաժողովի նախագահը: 2004 թվականից Գ. Կոստանյանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչն է: 2011 թվականի հունվարին ՀՀ Նախագահի հրամանագրով Գևորգ Կոստանյանը նշանակվել է ՀՀ զինվորական դատախազ-ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ:

2002 թվականից դասավանդում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, իրավաբանական գիտությունների թեկնածու է, դոցենտ, սովորում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի դոկտորանտուրայում, մենագրության և մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Արժանացել է պարգևների ու խրախուսանքների:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

**2013 թվականի հոկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, ՀՀ Նախագահի ներկայացմամբ, Գևորգ Կոստանյանին վեց տարի ժամկետով նշանակել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ:**

# ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՂԱՏԱԽԱԶՆԵՐԸ

## Եվրոպայի Դատախազների Խորհրդատվական Խորհրդի 8-րդ լիազումար նիստը Երևանում

2013 թվականի հոկտեմբերի 7-9-ը, Երկրորդ անգամ\*, մեր հանրապետության մայրաքաղաք Երևանում կայացավ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՆԽ) 8-րդ լիազումար նիստը:

Հեղինակավոր միջազգային այդ կազմակերպության լիազումար նիստի աշխատանքներին մասնակցելու համար Երևան էին ժամանել դատախազներ և պատվիրակություններ ավելի քան 40 եվրոպական պետություններից և միջազգային կազմակերպություններից:

**Նիստի օրակարգային գլխավոր հարցը վերբերում էր ՁԼՄ-ների հետ դատախազության փոխհարաբերությունների արդիական հիմնահարցերի դիտարկմանը:**



ԵԴԽՆԽ լիազումար նիստում բացման խոսքով հանդես եկան ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ և ԵԽ-ի մարդու

իրավունքների և օրենքի զերակայության հարցերով գլխավոր տնօրեն Ֆիլիպ ԲՈՒՅԱՆ:

\* 2010թ. հոկտեմբերի 19-21-ը Երևանում անց է կացվել Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի 5-րդ լիազումար նիստը (տե՛ս. «Օրինականություն»N62, էջ 2-17):

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ իր խոսքում ողջունելով լիազուցար նիստին մասնակցելու համար Երևան ժամանած հյուրերին, մասնավորապես նշեց, որ զանգվածային լրատվամիջոցների հետ փոխհարաբերությունների համակարգումը, դատախազության գործունեության նկատմամբ հանրային կարծիքի ձևավորումն ու վստահության ամրապնդումը պետք է լինի առաջնային խնդիր դատախազության համար: Հայաստանը պետք է ձգտի ստեղծել ուժեղ դատախազություն, որն էլ կսահմանի օրենքի գերակայությունը երկրում:

**« Ե վ ռ օ պ ա յ ի դ ա տ ա խ ա զ ն Ե Ր Ի խորհրդատվական խորհրդի լիազուցար նիստը Երևանում կազմակերպելը խորհրդանշական է՝ նկատի ունենալով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի նախագահության ժամանակահատվածը: Իր հիմնադրումից սկսած՝ 2005 թվականից խորհուրդը մշակել և կարծիքներ է ներկայացրել դատախազության տարբեր մարմինների գործունեության հետ կապված:**

**Ժամանակակից մարտահրավերների դեմ պայքարում մեծ է ԵԴԽԽ-ի դերը: Քննարկվող փաստաթուղթը կոչված է ապահովել հավասարակշռությունը մի կողմից անկախ, անաչառ և հրապարա-**

**կային արդարադատության ապահովման, իսկ մյուս կողմից Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իր կարծիքը ունենալու և արտահայտելու ազատության, զանգվածային լրատվության գործառույթի՝ հանրությանը իրազեկել գործի քննության ընթացքի, ինչպես նաև անմեղության կանխավարկածի, արդար դատաքննության և անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու Կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների միջև: Մեզ համար չափազանց կարևոր է զանգվածային լրատվա-**



**միջոցների հետ փոխհարաբերությունների համակարգված կարգավորումը՝ դատախազության գործունեության նկատմամբ հանրային կարծիքի ձևավորման, վստահության ռեսուրսի ամրապնդման, քրեական քաղաքականությանը հասարակության աջակցման գործում:**

Այս հավասարակշռության ապահովումն անհրաժեշտ է մեկ ընդհանուր վերջնանպատակի՝ այն է. մարդու իրավունքների և հիմնական ազատությունների անվերապահ ապահովման համար», - իր խոսքում ընդգծեց ՀՀ գլխավոր դատախազը:

Ես մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրեն Ֆիլիպ ԲՈՒՅԱՆ շնորհավորելով Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի բարձր պաշտոնում նշանակվելու առթիվ, հույս հայտնեց, որ Հայաստանի Հանրապետության հետ իր ղեկավարած կառույցի համագործակցությունը կլինի էլ ավելի գործնական ու արդյունավետ: «Մենք չենք կարող ունենալ օրենքի գերակայություն եթե չունենք ուժեղ դատախազություն: Ճանաչելով Հայաստանի Հանրապետության նորանշանակ գլխավոր դատախազին՝ հանդգնած եմ, որ նա կկարողանա ստեղծել այն ուժեղ կառույցը որը կլինի օրենքի գերակայության հիմնասյունը: Հա-

մոզված եմ, որ Եվրոպական դատարանում նրա ձեռք բերած փորձը կներդրվի Հայաստանում», - նշեց Ֆիլիպ Բոսյան:

ԵԴԽԽ լիազուցար նիստի ընթացքում ի թիվս աշխատակարգային և կազմակերպչական հարցերի քննարկվեց և ընդունվեց «Դատախազների և զանգվածային լրատվության միջոցների փոխհարաբերությունների մասին» թիվ 8 կարծիքը: Ընդունված փաստաթղթում մասնավորապես նշված է.

- մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ անձի, խոսքի ազատության իրավունքի՝ ներառյալ տեղեկություններ ու զաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության իրականացումն օրենքով ապահովելու պահանջը,

- դատախազության գործունեությունը հրապարակային, թափանցիկ և արդյունավետ կազմակերպելու աշխատանքային կառուցակարգերը:

Նշենք, որ 2010 թվականին Երևանում գումարված 5-րդ լիազույնար նիստի արդյունքում ԵՂԽՆ-ն ընդունել է «Դատախազությունը և անչափահասների գործերով արդարադատությունը» 5-րդ կարծիքը, որը հայտնի է ԵՂԽՆ «Երևանյան հռչակագիր» անվանումով:

Հիշեցնենք, որ ԵՂԽՆ-ն ստեղծվել է

2005թ.՝ ԵՆ Նախարարների Կոմիտեի որոշմամբ և հանդիսանալով ԵՆ Նախարարների Կոմիտեի խորհրդատվական մարմին՝ կոչված է Քրեական Գործերով Եվրոպական Կոմիտեի համար մշակել Rec (2000) 19 հանձնարարականի իմպլեմենտացիայի հետ կապված խնդիրների վերաբերյալ եզրակացություններ՝ հանձնարարականի կատարմանը նպաստելու և Եվրոպայի դատախազական համակարգերի գործառույթների վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով:

*Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի Երևանյան 8-րդ լիազույնար նիստի ընդունած փաստաթղթերին մանրամասն կանդիդատանք «Օրինականություն» հանդեսի հաջորդ համարում:*

## ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է մարդու իրավունքների հանձնակատարին

2013 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Վևորգ Կոստանյանն ընդունել է ԵՆ մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուլիթմիեկսին գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին ԵՆ մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի տնօրեն Ի.Գաշեն, տնօրենի տեղակալ Բ.Ուրումովան, Հայաստանում ԵՆ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Օ.Պավլյուկը:



Հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա.Թամազյանը, Հ.Բադալյանը, Է.Բաբայանը:

Պարոն Կոստանյանը, ողջունելով հյուրերին, նշել է, որ կարևորում է համագործակցությունը Ե մարդու իրավունքների հանձնակատարի հետ՝ և որպես ՀՀ գլխավոր դատախազ, և որպես Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցիչ:

Գլխավոր դատախազը պատրաստակամություն է հայտնել կայուն ու բազմակողմ հիմքերի վրա շարունակելու համագործակցությունը Մարդու իրավունքների հանձնակատարի հետ: Պարոն Գ.Կոստանյանը հյուրերին ամփոփ ներկայացրել է իշխանությունների կողմից ձեռնարկված այն քայլերը, որոնք իրականացվել են մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների երաշ-

խիքների ապահովման գործում: Գլխավոր դատախազը բարձր է գնահատել Ե մարդու իրավունքների նախկին հանձնակատար Թ.Համմարբերգի հետ համագործակցությունը:

Պարոն Ն.Մուլիթմիեկսին, շնորհավորելով պարոն Կոստանյանին՝ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, շեշտել է, որ քաջատեղյակ է պարոն Կոստանյանի գործունեությունից, և վստահ է, որ արդյունավետ համագործակցություն կծնավորվի ՀՀ դատախազության հետ: Են հանձնակատարը հավելել է, որ իր այցը հետապնդում է ճանաչողական նպատակ:

Են պատվիրակության անդամներին հետաքրքրում էին մի շարք հարցեր՝ կապված

զինված ուժերում զինծառայողների իրավունքների, այլընտրանքային ծառայության հետ կապված խնդիրների, դատաիրավական բարեփոխումների փուլում դատախազության լիազորությունների ու գործառնությունների վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանը

հյուրերին հանգամանալից ներկայացրել է իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, ինչպես նաև առաջարկել է, ուղիղ կապ հաստատել Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի և ՀՀ գլխավոր դատախազության միջև՝ տեղեկատվության արագ ու ժամանակին փոխանակման համար:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻ ՀԵՏ

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ 2013թ. հոկտեմբերի 28-ին ընդունել է ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան ՄՈՒՀԱՄՄԱԴ ՌԵԻՍԻԻՆ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆԸ:



Դեսպան Ռեիսիին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար և շնորհավորել Գևորգ Կոստանյանին՝ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնում նշակակվելու կապակցությամբ: Մոհամմադ Ռեիսիին փոխանցել է նաև ԻԻՀ գլխավոր դատախազ Ղուլամ-հոսեյն Մոհսենի շնորհավորանքներն ու ԻԻՀ այցելելու հրավերը:

ԻԻՀ դեսպանը կարևորելով այս ոլորտում երկու երկրների համագործակցությունը, հույս է հայտնել, որ դրա արդյունավետ իրագործմանը կնպաստի նաև 2013թ. ապրիլին ՀՀ և ԻԻՀ գլխավոր դատախազությունների միջև կնքված «Փոխըմբռնման հուշագիրը»: Դեսպանը նշել է, որ Իրանի համար կարևորագույն խնդիր է թմրանյութերի ապօրինի շրջանառության հարցը, չնայած, որ այդ ուղղությամբ իրավապահ մարմինները հսկայածավալ աշխատանք են տանում:

ՀՀ գլխավոր դատախազը, կարևորելով ինչպես թմրանյութերի ապօրինի շրջանառու-

թյան, այնպես էլ՝ հանցավորության դեմ պայքարն ընդհանրապես, ընդգծել է, որ թմրանյութերի ապօրինի շրջանառության կանխարգելումն առավել արդյունավետ կդարձնի դրանց տարածման դեմ պայքարը: Այդ առումով լուրջ անելիքներ ունեն նաև մաքսային և սահմանապահ կառույցները՝ աշխատակիցների պատրաստվա-

ծության բարձր մակարդակ ապահովվելու տեսանկյունից:

ՀՀ գլխավոր դատախազը նաև նշել է, որ ԻԻՀ գլխավոր դատախազի հետ առաջիկա հանդիպմանը կքնարկվեն համատեղ գործնական քայլերը, որոնց իրականացման դեպքում թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարն առավել արդյունավետ կլինի:

Դեսպան Ռեիսիին ՀՀ գլխավոր դատախազին շնորհակալություն է հայտնել՝ դատապարտյալների հանձնման գործում ցուցաբերած աջակցության համար:

«ՀՀ-ում յուրաքանչյուրի իրավունքը երաշխավորված է, հանցագործությունը՝ պատժելի. սա է ՀՀ գլխավոր դատախազության օրինականության և իրավահամակարգի ամրապնդման ուղղությամբ գործունեության մպատակը», - հանդիպման ավարտին ասել է ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը:



ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ  
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**ԲԱԴԱԼՅԱՆ Հրաչյա Վարազդատի**

Ծնվել է 1958 թվականին, Արարատի մարզի Վերին Արտաշատ Գյուղում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

Աշխատանքային գործունեությունը դատախազությունում սկսել է աշխատելով Կիրովական (ներկայում՝ Վանաձոր) և Երևան քաղաքների դատախազություններում որպես քննիչ: Այնուհետև եղել է հանրապետության դատախազին առընթեր ՀԿԳ քննիչ: Հետագայում զբաղեցրել է Արտաշատի շրջանի, այնուհետև Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնները: 2001 թվականից Հ. Բադալյանը Երևան քաղաքի դատախազն էր՝ ՀՀ դատախազության կոլեգիայի անդամ:

ՀՀ Նախագահի հրամանագրերով նրան շնորհվել է արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան, պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով, արժանացել է այլ պարգևների ու խրախուսանքների: ՀՀ դատախազության պատվավոր աշխատող է:

ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 10-ի հրամանագրով Հ. Բադալյանը նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ:

**ԲԱԲԱՅԱՆ Էմիլ Մարտիկի**

Ծնվել է 1977 թվականին, Երևանում

Ավարտել է Երևանի «Վարդանանց» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Ուսումնառության է անցել և մագիստրոսի աստիճան է ստացել Լեյդենի (Հոլլանդիա) և Հայաստանի Ամերիկյան համալսարաններում:

Որպես գիտաշխատող աշխատել է Հայաստանի Ամերիկյան համալսարանում, այնուհետև եղել է ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալի օգնականը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի տեղակալը:

2008-2012 թվականներին զբաղեցրել է ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնը: 2012 թվականի հունվարից ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահն էր: 2003-ից դասավանդում է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի իրավագիտության ֆակուլտետում:

1995-1997թ.թ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Արդարադատության առաջին դասի խորհրդական է:

ՀՀ Նախագահի 2013թ. հոկտեմբերի 17-ի հրամանագրով Է. Բաբայանը նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ:

# ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր

*«Հ-ում 2006թ-ից սկսվել է «Քրեական դատավարության նոր օրենսգիրք ընդունելու գործընթացը, որի ժամանակ «Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է երկու աշխատանքային խումբ: Առաջինը «Նախագահի 2006թ. դեկտեմբերի 26-ի կարգադրությամբ ստեղծված Աշխատանքային խումբն էր, որի խնդիրն էր նախապատրաստել «Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ (2006-2010թթ. Աշխատանքային խումբ): Այս աշխատանքային խմբի շրջանակներում նախապատրաստված «Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը ստացավ գերատեսչությունների բացասական գնահատականը և հանվեց շրջանառությունից: «Նախագահի 2010թ.-ի ապրիլի 26-ի կարգադրությամբ ձևավորվել է նոր Աշխատանքային խումբ (2010-2013թթ. Աշխատանքային խումբ), որի գործունեության ընթացքում մշակվել և «Վ կառավարության կողմից հաստատվել է «Քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը: «Վ կառավարությունը «Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) 2013թ.-ի հուլիսի 10-ին ներկայացրել է «Վ ազգային ժողով:*

Սույն հոդվածում կանդիդատանք հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումների առանձին վիճահարույց հարցերի: Հոդվածը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում կներկայացվի հարցի նախապատմությունը՝

1. հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումները 2006-2010թթ. Աշխատանքային խմբում,
2. հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումները

2010-2013թթ. Աշխատանքային խմբում:

Երկրորդ մասում կներկայացվի հիմնախնդրի արդի իրավիճակը՝

1. գործող իրավակարգավորումների շրջանակներում հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության փոխհարաբերությունների առկա հիմնախնդիրները,
2. այդ խնդիրների լուծման սկզբունքները,
3. խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները:

## ՄԱՍ I

### **Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումների նախապատմությունը**

ՀՀ-ում իրականացվող քրեադատավարական բարեփոխումների ընթացքում խնդիր է դրվել վերանայել մինչդատական վարույթի գոր-

ծող համակարգը և իրավական կարգավորումը: Բարեփոխումների ընթացքում քննարկվել են մինչդատական վարույթից քրեական գործի



հարուցման կամ այսպես կոչված նյութերի նախապատրաստության փուլի վերացման հարցը, ինչպես նաև հետաքննության նորոլի ընկալման, օպերատիվ-հետախուզական գործունեության հետ հարաբերակցության խնդիրները:

**Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումները 2006-2010թթ. Աշխատանքային խմբում:** Այս ժամանակահատվածում առաջարկվում էր «հետաքննություն» սահմանադրական հասկացությունն ընկալել որպես հանցագործության վերաբերյալ հաղորդումների ստուգման և նյութերի նախապատրաստման գործընթաց: Այսպես, Աշխատանքային խմբի առաջարկի հիման վրա ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դատավարագետների կողմից նախապատրաստված քրեական դատավարության օրենսգրքի հիմնադրույթների վերաբերյալ տեղեկանքում նշվում էր հետևյալ մոտեցումը. «**Հետաքննությունը սկսվում է հանցագործության մասին հաղորդման ստացման կամ վարույթն իրականացնող մարմնի կողմից հանցագործության հատկանիշների հայտնաբերելու մասին արձանագրություն կազմելու պահից: Դատավարության այս փուլի խնդիրը հանցագործության հատկանիշների պարզումն է, հանցանք կատարած անձի հայտնաբերումը, այդ նպատակներով անհետաձգելի քննչական գործողությունների կատարումը և համապատասխան նյութերի նախապատրաստումը: Հետաքննության մարմնի կարևոր դերը ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքում պայմանավորված կլինի նաև այն հանգամանքով, որ կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և գրանցման իրավասությամբ, որպես կանոն, օժտված կլինի միայն հետաքննության մարմինը**»<sup>1</sup>:

Մեր կարծիքով հետաքննության նման ընկալումն ընդունելի չէր, քանի որ դրանով չէին լուծվում այն հիմնական խնդիրները, որոնք պայմանավորում էին հետաքննության ինստիտուտի բարեփոխման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողության սահմանադրականության հարցը:

2006-2010թթ. Աշխատանքային խմբին մեր

կողմից առաջարկվել էր հետաքննության հասկացության հիմքում դնել հետևյալ սկզբունքները.

1. հետաքննություն ասելով հասկանալ ներկայիս ընկալմամբ օպերատիվ-հետախուզական գործունեությունը,
2. հետաքննությունը կարող էր իրականացվել նախաքննությանը և դատական քննությանը զուգահեռ,
3. քրեական դատավարությունում նախատեսվել քննչական գործողությունների նոր կատեգորիա, այն է՝ հատուկ քննչական գործողություններ, որոնք համապատասխանում են գործող ընկալմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներին<sup>2</sup>:

Աշխատանքային խմբի մի շարք անդամների կողմից այս առաջարկները ենթարկվեցին սուր քննադատության և մերժվեցին:

**Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումները 2010-2013թթ. Աշխատանքային խմբում:** Այս ժամանակահատվածում ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դատավարագետների կողմից նախապատրաստվեց ՀՀ քր. դատ. օր-ի հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ), որը բովանդակային և կառուցվածքային առումով բարձր գնահատականի արժանի փաստաթուղթ<sup>3</sup>: ՀՀ կառավարությունը 10.03.2011թ.–ին հաստատեց Հայեցակարգը, որի 1.18.-րդ կետով նախատեսվում է փոխել «հետաքննություն» և «նախաքննություն» սահմանադրական հասկացությունների քրեադատավարական հարաբերակցությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունն ինկորպորացնել քրեական դատավարության օրենսգրքը՝ այն նույնացնելով հետաքննության հետ:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը հետաքննության սահմաններում ՀՀ քրեական դատավարությունն ինկորպորացնելու գաղափարի հիման վրա Հայեցակարգում սահմանվեցին հետևյալ սկզբունքային դրույթները.

**1. Հետաքննությունը մինչդատական վարույթում նախաքննության ընթացքում կիրառվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների և դրանց հետ կապված իրավահարաբերությունների ամբողջությունն է: Հետաքննությունը կարող է իրականացվել միայն նախաքննությունը սկսելուց հետո և**

<sup>1</sup> Պետություն և իրավունք: N 35, 2007, էջ 18:

<sup>2</sup> Ղանբարյան Ա. Հետաքննությունը քրեադատավարական օրենսդրության բարեփոխման գործընթացում: «Դատական իշխանություն», 2007, թիվ 8/97, էջ 32-38:

<sup>3</sup> Ղանբարյան Ա. Քրեական դատավարության ռազմավարության հայեցակարգը: «Օրինականություն», 2011, թիվ 63, էջեր 7-10:

ինքնըստինքյան վերջանում է նախաքննության ավարտով:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը քրեական դատավարության օրենսգիրք ինկորպորացնելը և քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման գործընթացը հետաքննություն անվանելը նպատակ է հետապնդում այն դարձնել ավելի կանխատեսելի, ինչպես նաև ներառել դատախազական հսկողության տիրույթ, ինչը քրեական ընթացակարգի շրջանակներում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման կարևոր երաշխիք է:

3. Քրեական վարույթի ընթացքում հետաքննություն կատարում են այն մարմինները, որոնք օրենքով իրավասու են իրականացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն: Վերջինս դատավարական բնույթ կարող է ստանալ միայն նախաքննություն կատարող անձի՝ քննիչի նախաձեռնությամբ, երբ նա նախաքննության խնդիրներից ելնելով համապատասխան հանձնարարություններ է տալիս օպերատիվ-հետախուզական գործունեություն (հետաքննություն) կատարող մարմիններին կամ անձանց:

4. Հետաքննության շրջանակներում քննիչի հանձնարարությամբ իրականացվող առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումները համարվում են գաղտնի քննչական գործողություններ (օրինակ՝ հետախոսային խոսակցությունները լսելը, նամակագրությունը վերահսկելը, ներքին դիտումը և այլն), որոնց արդյունքներն ապացուցողական նշանակություն են ստանում միայն դատավարական բոլոր երաշխիքների ապահովման պայմաններում (դատարանի որոշում, քննիչի գրավոր հանձնարարություն, օրենքով սահմանված ընթացակարգ և այլն):

Հայեցակարգային այս գաղափարներն արտացոլվեցին նաև Նախագծի սկզբնական տարբերակում, որտեղ սահմանված էր, որ հետաքննությունը կատարվում է քննիչի գրավոր հանձնարարությամբ: Հետաքննության մարմինն իրավասու է կատարել միայն հանձնարարության մեջ նշված գաղտնի քննչական գործողու-

թյունները (Հոդված 189): Հետաքննությունը կարող է կատարվել միայն նախաքննության ընթացքում: Հետաքննությունն ավարտվում է նախաքննության հետ միաժամանակ: Նախաքննության ավարտման պահին շարունակվող գաղտնի քննչական գործողությունները և օպերատիվ-հետախուզական միջոցառումները դադարեցվում են (Հոդված 190): Քրեական վարույթից դուրս կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տվյալները քրեական վարույթում ապացույց չեն, եթե քրեական վարույթի ընթացքում չեն ամրագրվել որպես սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ապացույց (Հոդված 86): Նշված դրույթներից երևում է, որ Նախագծի սկզբնական տարբերակում հեղինակներին հաջողվել էր իրականացնել Հայեցակարգում ամրագրված՝ հանցագործության հատկանիշների առկայության դեպքում օպերատիվ հետախուզական գործունեության դատավարականացման խիզախ և առաջադիմական գաղափարը:

Միևնույն ժամանակ, ի սկզբանե ակնկալվում էր, որ քրեաիրավական ոլորտում օպերատիվ-հետախուզական միջոցառումների դատավարականացման, քրեական վարույթի շրջանակներում օպերատիվ-հետախուզական միջոցառումները և գաղտնի քննչական գործողությունները բացառապես քննիչի հանձնարարությամբ իրականացնելու և առիասարակ նշված գործունեությունը հրապարակային դաշտ բերելու օրենսդրական լուծումները հանդիպելու էր ՀՀ օպերատիվ-հետախուզական մարմինների, մասնավորապես ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության դիմադրությանը<sup>4</sup>: Նախագծի վերաբերյալ նշված մարմիններից ստացված կարծիքներում քննադատվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների դատավարականացման մոտեցումը: ՀՀ ոստիկանության դիրքորոշման համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության և հետաքննության նույնացումն անթույլատրելի է: Հետաքննությունը պետք է դիտել հանցագործությունների մինչդատական քննության առանձին փուլ, որի պայմաններում հետաքննիչը և հետաքննության մարմնի պետը կհանդիսանան քրեական հետապնդման կողմում հանդես եկող ինքնուրույն սուբյեկտներ: Անհրաժեշտ է

<sup>4</sup> Հետաքրքիր է, որ Աշխատանքային խմբում օպերատիվ-հետախուզական միջոցառումները դատավարականացնելու, դրանք քննիչի հանձնարարությամբ իրականացնելու մոտեցմանը դեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության դիրքորոշումները ներկայացնում էին նշված պետական մարմինների քննչական ստորաբաժանումների ղեկավարները, այն պարագայում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության դատավարականացնելու գաղափարը միտված է բարձրացնել քննիչների դերակատարությունը ապացույցների հավաքման ոլորտում:

օրենսգրքում հստակ սահմանել մինչդատական քննության ընթացքում հետաքննության խնդիրները և լիազորությունները: Նպատակահարմար է հետաքննությանը վերապահել ոչ մեծ և միջին ծանրության առանձին հանցագործություններով քրեական վարույթ սկսելու և այն մեղադրական ակտով դատարան ուղարկելու լիազորություն»<sup>5</sup>: ԳԳ Ազգային անվտանգության ծառայությունը գտնում է. «**Հետաքննությունը պետք է դիտել որպես նախաքննությանը նախորդող առանձին փուլ՝ առանց քրեական վարույթ նախաձեռնելու իրավասության**»<sup>5</sup>:

Քննարկումների արդյունքում Աշխատանքային խումբը և ԳԳ արդարադատության նախարարությունը գնացին որոշակի փոխզիջումների և Նախագծի լրամշակված տարբերակում սահմանվեց.

**1. հետաքննությունը կատարվում է նախաձեռնված քրեական վարույթի մասին հետաքննության մարմնի կողմից պատշաճորեն տեղեկանալու հիմքով: Մինչդեռ Նախագծի նախնական տարբերակում սահմանված էր, որ հետաքննությունը կատարվում է քննիչի գրավոր հանձնարարությամբ:**

**2. Հստակեցվեց, որ հետաքննության շրջանակներում օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են կատարվել քննիչի գրավոր հանձնարարությամբ կամ հետաքննության մարմնի նախաձեռնությամբ, իսկ գաղտնի քննչական գործողությունները՝ բացառապես քննիչի հանձնարարությամբ:**

**3. Հետաքննության շրջանակներում կատարված գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներն անհապաղ ներկայացվում են քննիչին: Օպերատիվ-հե-**

**տախուզական միջոցառումների արդյունքում կազմված փաստաթղթերը և որևէ կրիչի վրա ամրագրված տվյալները քրեական վարույթում ապացույց չեն:**

Կարծում ենք նշված փոխզիջումները թույլատրելի չափի են և էականորեն չեն փոխում Հայեցակարգի հիմքում դրված օպերատիվ-հետախուզական միջոցառումները դատավարականացնելու գաղափարախոսությունը, քանի որ Նախագծի լրամշակված տարբերակում պահպանվել է հետևյալ սկզբունքը՝ քրեական վարույթի շրջանակներում ապացույց կարող են համարվել միայն քննիչի հանձնարարությամբ հետաքննության մարմինների ձեռք բերած տվյալները: Նախագծի լրամշակված տարբերակում սահմանվել է, որ հետաքննության մարմինները գաղտնի քննչական գործողություններ կարող են կատարել միայն քննիչի հանձնարարության հիման վրա, որի արդյունքները կարող են համարվել ապացույց: Հետաքննության մարմինները կարող են սեփական նախաձեռնությամբ իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, սակայն դրանց արդյունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, բացառությամբ քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում դատարանի թույլտվությամբ ստացված տեսագրությունները, ծայրագրությունները և այլ օբյեկտիվ փաստաթղթերը, եթե համապատասխան միջոցառումն իրականացվել է ենթադրյալ հանցագործությունը կանխելու, խափանելու կամ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու նպատակով (ԳԳ քր. դատ. օր-ի 86-րդ հոդվածի 2-րդ մաս, 96-րդ հոդվածի 3-րդ մաս):

## **ՄԱՍ II**

### **Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումների արդի իրավիճակը**

Իրավաբանական հանրությունում շարունակվում է ակտիվորեն քննարկվել քրեական վարույթի շրջանակներում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների հարաբերակցության հարցը: Քննարկումների ընթացքում

մասնակիցներն արտահայտում են հակասական կարծիքներ և դիրքորոշումներ, ինչը շատ դեպքերում պայմանավորված է օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության և պրակտիկայի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների և տեղեկատվության բացակայու-

<sup>5</sup> Նշված կարծիքները ներկայացվել են մաս 08.05.2013թ.-ին տեղի ունեցած՝ ԳԳ քրեական դատավարության նախագծում առկա վիճելի հարցերի վերաբերյալ խորհրդակցությունում:

թյամբ<sup>6</sup>: Թեև 2007թ-ից գործում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ ՕՀԳ մասին ՀՀ օրենք), սակայն շատ իրավաբաններ բավարար չափով չեն տիրապետում օպերատիվ-հետախուզական գործունեության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների, հանցագործության կանխման և խափանման իրավական գործիքների և ապացույցների հավաքմանն ուղղված օպերատիվ-հետախուզական միջոցառումների տարբերակման չափանիշներին: Անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիքների բացակայության հետևանքով բանավիճող կողմերը խոսում են տարբեր «լեզուներով և տերմինաբանությամբ»: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ներկայացուցիչներն, օգտվելով այս ոլորտի փակ լինելու հետևանքով մասնագետների մոտ բավարար տեղեկատվության բացակայության հանգամանքից, օպերատիվ-հետախուզական միջոցառումները դատավարականացնելու դեմ բերում են այնպիսի փաստարկեր, որոնք որևէ կապ չունեն Հայեցակարգի հիմքում դրված գաղափարախոսության հետ: Այսպես, օպերատիվ-հետախուզական մարմինների վկայակոչած հիմնական փաստարկներն են.

**1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ բացառապես քննիչի հանձնարարությամբ իրականացնելու դեպքում, քանի դեռ չկա քննիչի հանձնարարությունը, օպերատիվ-հետախուզական մարմինները չեն կարող իրականացնել որևէ գործունեություն:**

**2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումները դատավարականացնելու դեպքում կադրոնազերծվեն գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց տվյալները, քննիչը և դատախազը կտեղեկանան նրանց մասին, ինչի արդյունքում գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք կհրաժարվեն համագործակցել օպերատիվ-հետախուզական մարմինների հետ:**

**3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումները դատավարականացնելու դեպքում, քանի դեռ չի նախաձեռնվել քրեական վարույթ, հնարավոր չի լինի կանխել, խափանել հանցագործությունները, ձեռնարկել իրավիճակից բխող անհետաձգելի միջոցառումներ:**

Օպերատիվ-հետախուզական մարմինների ներկայացուցիչների բերած փաստարկների իրավաչափությունը վերլուծելու նպատակով առաջարկում ենք քննարկել՝ **1. գործող իրավակարգավորումների շրջանակներում հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության փոխհարաբերությունների հիմնախնդիրները, 2. հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության փոխհարաբերության բարեփոխման սկզբունքները, 3. հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումների իրականացման նվազագույն միջոցառումները:**

## **Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության փոխհարաբերությունների արդի հիմնախնդիրները**

Ներկայումս օպերատիվ-հետախուզական մարմինները քրեաիրավական ոլորտում իրենց գործունեությունն իրականացնում են

նախաքննության մարմիններից ավտոմոմ այն իմաստով, որ շատ հաճախ նախաքննության մարմինները նախապես տեղյակ չեն լինում

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետությունում քիչ թվով մասնագետներ են, ովքեր օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության ոլորտում իրականացրել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնց համար հասանելի են եղել այս ոլորտի գաղտնի գերատեսչական փաստաթղթերը, և միաժամանակ զբաղվել են օպերատիվ-հետախուզական պրակտիկ գործունեությամբ, օրինակ՝ Оганесян А.Р Правовое регулирование оперативно-розыскной деятельности в Республике Армения: Автореферат дис. ... канд. юрид. наук. Москва, 2011.: Այս ոլորտում պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվության բացը լրացնելու նպատակով մեր կողմից իրականացվել են ՀՀ ոստիկանության օպերատիվ աշխատակիցների հարցումներ, այս թեմայով կազմակերպվել են քննարկումներ, որոնց ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը ինչ-որ չափով պատկերացում է տալիս օպերատիվ-հետախուզական գործունեության պրակտիկ կողմի վերաբերյալ:

օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից հանցագործության փաստով ապացույցներ հավաքելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին: Այսպես, եթե օպերատիվ-հետախուզական մարմինները հանցագործության մասին հարողորում են ստանում, օրինակ՝ կաշառք պահանջելու վերաբերյալ, ապա նրանք օրենքով սահմանված կարգով դիմում են դատարան, համապատասխան թույլտվություն ստանալու դեպքում իրականացնում են կաշառք տալու նմանակում միջոցառումը, որի արդյունքում ստացված տեսաձայնագրառումը և այլ նյութերը ներկայացնում են քննիչին, ով հարուցում է քրեական գործ, քննչական գործողություններ կատարելու եղանակով ապացույցի կարգավիճակ է տալիս կաշառք տալու նմանակման ընթացքում ձեռք բերված տեսաձայնագրառմանը և այլ տվյալներին: Փաստորեն այս դեպքում օպերատիվ-հետախուզական մարմինը, տեղեկանալով հանցագործության մասին, առանց քրեական վարույթ նախաձեռնելու, առանց քննիչին տեղեկացնելու սկսում է ապացույց հավաքելու գործընթաց: Նման կարգավորումը և ձևավորված պրակտիկան առաջացնում են հետևյալ հիմնախնդիրները:

**1. Մարդու իրավունքների երաշխիքների անտեսում և արդյունավետ վերահսկողության բացակայություն:** Առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության հիմքով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումն, ընդհանուր առմամբ, փակ գործունեություն է, որի ընթացքում մարդու իրավունքների ապահովման երաշխիքների պահպանումը դուրս է արտագերատեսչական արդյունավետ վերահսկողությունից: Այսպես, դատարանը թույլատրում է իրականացնել հեռախոսային խոսակցության վերահսկում միջոցառումը, սակայն հետագայում չի ստուգում այդ միջոցառումների իրականացման ընթացակարգը կամ շարունակելու անհրաժեշտությունը: ՕՐԳ մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշ-

ման ժամկետի հաշվարկումը սկսվում է դրա ընդունման օրից և չի կարող 2 ամսից ավելի լինել: Որոշման ժամկետը կարող է երկարաձգվել օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման մասին որոշման ընդունման համար օրենքով սահմանված կարգով: Հեռախոսային խոսակցությունը լսելու միջոցառման ընդհանուր ժամկետը չի կարող 12 ամսից ավելի տևել: Առերևույթ հանցագործության հատկանիշների հիմքով քրեական վարույթի շրջանակներից դուրս նման միջոցառումների իրականացման դեպքում բացակայում է օրենսդրական այս պահանջի նկատմամբ արտագերատեսչական ուրևէ վերահսկողությունը: Մարդու իրավունքների համապատասխան երաշխիքների բացակայության դեպքում մարդու սահմանադրական իրավունքները կարող են շարունակվել սահմանափակվել երկու ամիսց ավելի ժամկետով, եթե նույնիսկ վերացել են գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումը շարունակելու իրավաչափ նպատակները (օրինակ՝ օպերատիվ-հետախուզական մարմինը հեռախոսային խոսակցության վերահսկման ընթացքում ձեռք է բերել անհրաժեշտ տեղեկությունը, սակայն իրավաչափ նպատակի բացակայության պարագայում շարունակում է հեռախոսային խոսակցության վերահսկողությունը նույնիսկ երկու ամիսն անցնելուց հետո):

Մարդու իրավունքների ապահովման տեսանկյունից իրավիճակն առավել սրվում է, երբ առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության դեպքում ապացույց հավաքելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը չի տալիս բավարար արդյունքներ և ձեռք չեն բերվում քրեական գործ հարուցելու հիմքեր: Այս իրավիճակում, մարդը, ում նկատմամբ իրականացվել են գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, դրանց ավարտից հետո չի տեղեկացվում իր վերաբերյալ իրականացված գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների մասին, ուստի չի կարող պահանջել ոչնչացնել իր վերաբերյալ ձեռք բերված նյութերը<sup>7</sup>:

<sup>7</sup> ՕՐԳ մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավիճիկ կայացվելուց հետո՝ ռեանայա ժամկետում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը:

**2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների փաստաթղթավորման վերաբերյալ օրենսդրական պահանջների խախտում և ապացույցների թույլատրելիության վիճարկում:** Մեր իրականացրած հարցումների և դիտարկումների արդյունքում պարզվել է, որ օպերատիվ-հետախուզական մարմինների աշխատակիցների աշխատանքի առավել անցանկալի հատվածը փաստաթղթեր կազմելն է:

ՕԶԳ մասին ԶԶ օրենքով սահմանված են հետևյալ հիմնական փաստաթղթերը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը (37 հոդված), օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը (38 հոդված), օպերատիվ-հետախուզական միջոցառումների արձանագրությունը (40 հոդված)<sup>8</sup>: Պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների վրա հիմնված քրեական գործերով դատաքննության ժամանակ պաշտպանները վիճարկում են օպերատիվ աշխատակիցների կայացրած փաստաթղթերի իրավաչափությունը, կամ էլ նման փաստաթղթերի բացակայության հիմքով ողջ օպերատիվ-հետախուզական միջոցառման և դրա

արդյունքների թույլատրելիությունը: Պետք է ընդունենք, որ հաճախ պաշտպանների բերած փաստարկները հիմնված են օրենքի պահանջների վրա: Ավելին, շատ դեպքերում օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից չեն պահպանվում նույնիսկ օրենքի ձևական պահանջները<sup>9</sup>: **Այսպես, ՕԶԳ մասին ԶԶ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ միջնորդությունը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը** (ընդգծումը մերն է): ԶԶ ոստիկանության համակարգում օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար միջնորդությունը դատարան պետք է ներկայացնի ԶԶ ոստիկանության պետը, մինչդեռ ձևավորված պրակտիկայի համաձայն՝ նշված փաստաթղթերը դատարան է ներկայացնում ԶԶ ոստիկանության պետի օպերատիվ գծով տեղակալը: Պաշտպանության կողմն, օրենսդրական այս պահանջի անտեսումը, կարող է դիտարկել մարդու իրավունքների խախտման հարթությունում,

<sup>8</sup> Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն արձանագրում է դրանք անցկացնող պաշտոնատար անձը: Արձանագրությունում պետք է նշվեն օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման տեղը, ժամանակը, հանգամանքները, օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող օպերատիվ աշխատակցի, օպերատիվ-հետախուզական միջոցառման այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները, ինչպես նաև այն անձանց (կամ մրանց օրինական ներկայացուցիչների) անունները և ազգանունները, որոնց վրա տարածվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ձեռնարկված բոլոր գործողությունները այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են, կիրառված գիտատեխնիկական մեթոդները և միջոցները, ինչպես նաև միջոցառման հետևանքով ձեռք բերված տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը: Արձանագրությունը ստորագրում է օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող պաշտոնատար անձը (անձինք):

<sup>9</sup> Նախագծի 252-րդ հոդվածի համաձայն՝ գաղտնի քննչական գործողության ընթացքն ու արդյունքներն արձանագրում է այն անցկացնող պաշտոնատար անձը: Այսինքն՝ այդ արձանագրությունները կազմվելու են ոչ թե քննիչի, այլ հետաքննության մարմնի աշխատակցի կողմից: Սակայն, նույնիսկ այս պարագայում հետաքննության մարմնի կողմից կազմված գաղտնի քննչական գործողությունների արձանագրությունները կլինեն առավել որակյալ, քանի որ դրանք կազմվելու են քննիչի համակարգման ներքո: Բացի այդ, գաղտնի քննչական գործողություն կատարելու մասին հանձնարարությունը տրվում է քննիչի կողմից գրավոր, որը պարունակում է տվյալներ կատարման ենթակա գաղտնի քննչական գործողության տեսակի, կատարման վերաբերելի պայմանների, դրա տևողության մասին: Քննիչն է դիմում դատարան՝ գաղտնի քննչական գործողության կատարումը թույլատրելու միջնորդությամբ:

քանի որ օրենքը մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համար դատարան դիմելու պատշաճ սուբյեկտ է ճանաչել առավել բարձր երաշխիք հանդիսացող ՀՀ ոստիկանության պետին և ոչ թե ոստիկանության պետի տեղակալին: Ի դեպ, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 02.10.2012թ. վճռի 128-րդ կետում եվրոպական դատարանը հեռախոսային խոսակցության վերահսկումը բացառապես կոնկրետ ծառայության ղեկավարի կողմից ներկայացված հիմնավոր միջնորդությամբ թույլատրելը դիտել է որպես իշխանության կողմից կամայական միջամտության դեմ երաշխիք:

Ապացուցողական նշանակություն ունեցող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արժանագրությունների և այլ փաստաթղթերի պատշաճ ձևակերպման օրենսդրական պահանջների նկատմամբ նման անտարբեր վերաբերմունքը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ի տարբերություն քննիչի և դատախազի, օպերատիվ-հետախուզական մարմնի աշխատակիցը, իր գործունեության ընթացքում չի առնչվում պաշտպանների կողմից ապացույցն անթույլատրելի ճանաչելու միջնորդությունների քննարկմանը և դատարանում երբեք հարկադրված չի եղել այս կամ այն ապացույցը օրենքի խախտմամբ ձեռք բերելու հարցի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել:

**3. ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանման աշխատակիցների կողմից հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու փաստացի հնարավորության բացակայություն:** Մեր ունեցած տեղեկություններով հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրական հնարավորություն ունեն ՀՀ ոստիկանության միայն հանրապետական մարմինների իրավասու ստորաբաժանումները: ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին չի տրամադրվում իրավական ակտերով սահմանված հատուկ տեխնիկական միջոցներ (օրինակ՝ տեսախցիկներ և այլն), որի արդյունքում նրանք փաստացի զրկվել են հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ տարրական օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հնարավորությունից, ինչն էլ էա-

պես սահմանափակում է ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների՝ հանցավորության դեմ պայքարի և ընթացքի մեջ գտնվող հանցագործության փաստն օբյեկտիվորեն ամրագրելու հնարավորությունը: Նման բարդություններից խուսափելու համար ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանման աշխատակիցները հաճախ խուսափում են նախաձեռնել տեսանկարահանմամբ կամ տեսաձայնագրառմամբ զուգակցվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու եղանակով նախապատրաստվող կամ ընթացքի մեջ գտնվող հանցագործությունների օբյեկտիվ փաստը ամրագրելու գործընթացը: Չունենալով աշխատանքի արդյունավետ միջոցներ՝ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանման աշխատակիցներն ընտրում են ավանդական, սակայն իր դարձն ապրած աշխատառճը, այն է՝ հանցագործության կատարման ընթացքում հնարավոր կասկածյալներից բացատրություն վերցնելու պրակտիկան: Օրինակ՝ երեխաներին պարբերաբար մուրացկանության մեջ ներգրավող անձի նկատմամբ հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ արտաքին դիտում կազմակերպելու փոխարեն, ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանման աշխատակիցները տվյալ անձին հրավիրում են ՀՀ ոստիկանություն և երեխաներին մուրացկանության մեջ ներգրավելու կասկածանքի կապակցությամբ բացատրություն վերցնում: ՀՀ իրավապահ մարմինները, նման աշխատառճի հետևանքով բացահայտելով իրենց, կորցնում են ընթացքի մեջ գտնվող հանցագործության օբյեկտիվ փաստը ֆիքսելու և անհերքելի ապացույց ձեռք բերելու հնարավորությունը: Նման իրավիճակներում կասկածյալը կարողանում է հակազդել իրավապահ մարմինների հետ համագործակցող անձանց և հարկադրել փոխելու ցուցմունքները: Կարծում ենք ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումները պետք է հնարավորություն ունենան դատարանի որոշմամբ իրականացնել հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական այնպիսի միջոցառումներ, որոնք անմիջականորեն չեն առնչվում մարդու սահմանադրական իրավունքների հետ, օրինակ՝ բնակարան չհամարվող շինությունում ներքին դիտումը, արտաքին դիտումը, բնակարանից դուրս կաշառք տալու կամ ստանալու նմանակումը:

## Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության փոխհարաբերությունները բարեփոխելու սկզբունքները

Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության փոխհարաբերությունների բարեփոխման հիմքում ընկած են հետևյալ հիմնական դրույթները:

**1. Առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության հիմքով ապացույց հավաքելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումների (զաղտնի քննչական գործողությունների) իրականացումը բացառապես քրեական վարույթի շրջանակում**

Ինչպես նշվեց, գործող պրակտիկայի համաձայն, եթե օպերատիվ-հետախուզական մարմինները կոնկրետ հանցագործության մասին ստանում են տեղեկություններ, օրինակ՝ կաշառք պահանջելու մասին, ապա քրեական վարույթի շրջանակներից դուրս, առանց քննիչի գիտության փաստացի իրականացում են ապացույցների հավաքման գործընթաց, օրինակ՝ իրականացնում են կաշառք տալու նմանակում: Օպերատիվ-հետախուզական մարմինն այդ միջոցառումների արդյունքում ստացված նյութերը, այդ թվում տեսանկարահանումները, որպես ապացույց ներկայացնում է քննիչին, այն պարագայում, երբ քննիչն ապացույց հավաքելու գործընթացում չի մասնակցել: Մինչդեռ քրեական վարույթում ապացույցների հավաքման կենտրոնական սուբյեկտը քննիչն է, ուստի անթույլատրելի է կոնկրետ հանցագործության փաստով, առանց քննիչի գիտության և նրա կողմից զաղտնի քննչական գործողությունների փաստաթղթավորման, իրականացնել ապացույցների հավաքմանն ուղղված գործողություններ, այնուհետև դրա արդյունքները ներկայացնել քննիչին: Քննիչն ի սկզբանե պետք է տեղեկացվի զաղտնի քննչական գործողություններ կատարելու ճանապարհով ապացույցներ հավաքելու մասին և ապահովի այդ գործողության որակյալ փաստաթղթավորումը:

Բացի այդ, նման գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից կազմված փաստաթղթերը շատ հաճախ չեն համապատասխանում օրենսդրության պահանջներին, որի հետևանքով դատարաններում վիճարկվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված ապա-

ցույցները: Մինչդեռ ապացույցների թուլատրելիության կանոններին տիրապետող քննիչի կողմից կամ նրա գիտությամբ կազմված փաստաթղթերն առավելապես կհամապատասխանեն օրենքի պահանջներին: Քննիչի հանձնարարությամբ իրականացվող զաղտնի քննչական գործողությունների փաստաթղթավորումը կկազմակերպվի քննիչի կողմից, իսկ դրա օրինականության համար պատասխանատու կլինի հսկողություն իրականացնող դատախազը:

**2. Քրեաիրավական (ապացուցման) նպատակ չհետապնդող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը քրեական վարույթից դուրս**

Օպերատիվ-հետախուզական գործունեության դատավարականացումը, այն քրեական վարույթի դաշտ բերելը վերաբերում է բացառապես առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության հիմքով ապացույց հավաքելուն ուղղված օպերատիվ-հետախուզական միջոցառումներին: Թերևս, օպերատիվ-հետախուզական մարմինների ներկայացուցիչների մոտ այս ոլորտի բարեփոխումների հիմնական թյուրըմբռնումը հանգում է հետևյալին.

**Առաջին**, միմյանց են խառնում մի կողմից՝ առերևույթ հանցագործության հատկանիշների հիմքով օպերատիվ-հետախուզական միջոցառումների (զաղտնի քննչական գործողությունների) միջոցով ապացույց հավաքելու գործունեությունը, մյուս կողմից՝ «ստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հանցագործության մեջ կասկածվող անձին բռնելը, հանցագործության խափանումը, ականների, պայթուցիկ նյութերի վնասագերծումը և այլն: Պետք է հստակ գիտակցել, որ հանցագործին բռնելը, պայթուցիկ նյութերի վնասագերծելը չեն համարվում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, դրանք իրականացվում են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Այս բարեփոխումները վերաբերում են բացառապես անձի մեղավորությունը հիմնավորելու համար ապացույց հավաքելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումների դատավարականացմանը և քրեական վարույթի դաշտ բերելուն:

**Երկրորդ**, նրանք կարծում են, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների դատավարականացման դեպքում դադար-



րեցվելու է ՕՀԳ մասին ՀՀ օրենքի գործողությունը և զրկվելու են քրեաիրավական ոլորտից դուրս և ապացուցման նպատակ չհետախուզող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնել: Մինչդեռ բարեփոխումների Հայեցակարգից նման բան չի բխում, քանի որ, ինչպես նշվեց, դատավարականացվում է օպերատիվ-հետախուզական գործունեության այն հատվածը, որը վերաբերում է առերևույթ հանցագործության հատկանիշների հիմքով օպերատիվ-հետախուզական միջոցառումների (զաղտնի քննչական գործողությունների) կատարմամբ ապացույց հավաքելուն: Ավելին, օպերատիվ-հետախուզական մարմինները ՕՀԳ մասին ՀՀ օրենքի հիման վրա, առանց քրեական վարույթ նախաձեռնելու, առանց քննիչի հանձնարարության կարող են իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ հետևյալ երկու դեպքերում.

**2.1 Հանցագործության հատկանիշներ չպարունակող վտանգի առկայության դեպքում առանց քրեական վարույթի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման թույլատրելիություն:** Օպերատիվ-հետախուզական մարմինները իրավասու են դեռևս հանցագործության չվերաճած վտանգի<sup>10</sup>, (կանխում, խափանում և այն) դեպքում, առանց քրեական վարույթ նախաձեռնելու, ինքնուրույն իրականացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն: Օրինակ՝ միջազգային ահաբեկչական կազմակերպության անդամն օրինական կարգով հատում է ՀՀ պետական սահմանը, նրա արարքներում բացակայում են կոնկրետ հանցագործության հատկանիշներ: Նման իրավիճակում առկա է վտանգ, ուստի ազգային անվտանգության մարմիններն առանց քրեական վարույթ նախաձեռնելու և առանց քննիչի գիտության տվյալ անձի նկատմամբ իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Եթե այդ ընթացքում պարզվում է, որ անձի արարքում առկա են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա օպերատիվ-հետախուզական մարմինները պարտավոր են դիմել քննիչին՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար, որի շրջանակներում մարդու իրավունքների ապահովման դատավարական երաշխիքների պահպան-

մամբ, կիրականացվի զաղտնի քննչական գործողությունների միջոցով ապացույցների հավաքման գործընթաց: Օպերատիվ-հետախուզական գործունեության (ոստիկանական գործունեության) և դատավարական գործունեության նման տարանջատում առկա է եվրոպական մի շարք երկրներում, այդ թվում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

Եթե օպերատիվ-հետախուզական մարմինները վտանգի հիմքով, քրեական վարույթից դուրս, իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որի ընթացքում պարզ է դառնում առերևույթ հանցագործության հատկանիշներ, և նրանք չեն դիմում քննիչին՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար, այլ սկսում են իրականացնել նոր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ապա դա կդիտվի ոչ բարեխիղճ գործունեություն, իսկ դրա արդյունքում ձեռք բերված տվյալները չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

Հանցագործության հատկանիշներ չպարունակող վտանգի կապակցությամբ բարեխիղճորեն իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները պետք է ներկայացվեն վարույթն իրականացնող մարմնին, որոնք օրենքով սահմանված կարգով կճանաչվեն ապացույց: Այս մոտեցումը որոշակի առումով արտացոլված է Նախագծի 96-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում դատարանի թույլտվությամբ ստացված տեսագրությունները, ձայնագրությունները և այլ օբյեկտիվ փաստաթղթերը կարող են ճանաչվել արտավարության փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին միայն այն դեպքում, երբ համապատասխան միջոցառումն իրականացվել է ենթադրյալ հանցագործությունը կանխելու, խափանելու կամ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու նպատակով:

**2.2 Ոչ քրեաիրավական նպատակներով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման թույլատրելիություն:** ՕՀԳ մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդ-

<sup>10</sup> Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությամբ տրվում է վտանգի հետևյալ բնորոշումը. «Վտանգը առերևույթ հանցագործության հատկանիշներ չպարունակող սպառնալիք է, որի անխաչընդոտ իրականացման (զարգացման) դեպքում այն բավարար հավանականությամբ կվճարի հասարակական հարաբերությունները»

վածում թվարկված են օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ **քրեաիրավական բնույթի նպատակներ** (հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը, հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը, քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը և այլն) և ոչ քրեաիրավական (օպերատիվ-ստուգողական աշխատանքի նպատակներ): **Ոչ քրեաիրավական նպատակներից են՝**

1. պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին առնչվելու թույլտվության որոշման կայացման համար տեղեկություններ հավաքելը,

2. ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերումը.

3. օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ համագործակցող կամ համագործակցած անձանց (և նրանց ընտանիքի անդամների) անվտանգությունն ապահովելու համար տեղեկություններ հավաքելը.

4. ոստիկանության կողմից օրենքով սահմանված կարգով սահմանային գոտում գտնվելու թույլտվության համար տեղեկություններ հավաքելը.

5. սահմանապահ զորքերի կողմից օրենքով սահմանված կարգով սահմանային շերտ մուտք գործելու և այնտեղ գտնվելու թույլտվության համար տեղեկություններ հավաքելը.

6. օպերատիվ-հետախուզական գործունեությանը մասնակցելու կամ դրա իրականացման հետևանքով ստացված նյութերին ծանոթանալու թույլտվության մասին որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը.

7. ազգային անվտանգության մարմիններում և ոստիկանությունում, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմիններում, աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելու համար տեղեկություններ հավաքելը.

8. օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան կամ կացության կարգավիճակ տալու մասին եզրակացություն կազմելու և որոշում ընդունելու համար

տեղեկություններ հավաքելը:

Ինչպես նկատում ենք, նշված նպատակներով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքում բացակայում են առերևույթ հանցագործության հատկանիշների մասին տեղեկությունները, չկա ապացույց հավաքելու նպատակ, ուստի բացակայում է նաև քրեական վարույթ նախաձեռնելու անհրաժեշտությունը: Ակնհայտ է, որ օրինակ՝ ազգային անվտանգության մարմիններում աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձին ուսումնասիրելու համար տեղեկություններ հավաքելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումները պետք է իրականացվեն քրեական վարույթից դուրս:

Մինևույն ժամանակ, ՕՀԳ մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեության ոչ քրեաիրավական բնույթի նպատակների և առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման պայմանների միջև առկա են որոշակի անհամապատասխանություն: Այսպես, ՕՀԳ մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ներքին դիտումը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ: Նման կարգավորումից բխում է, որ եթե օպերատիվ-հետախուզական միջոցառման նպատակն ազգային անվտանգության մարմիններում աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելն է, ապա այս դեպքում չեն կարող իրականացվել այնպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց իրականացման համար պահանջվում է հանցագործության մեջ կասկածի առկայություն: Բանն այն է, որ ազգային անվտանգության մարմիններում աշխատանքի դիմում ներկայացրած անձը ոչ մի հանցագործության մեջ չի կասկածվում, ուստի նրա նկատմամբ չի կարող իրականացվել օրինակ՝ հեռախոսային խոսակցության վերահսկում: Կարծում ենք, որ նման անհամապատասխանությունը պետք է վերացնել՝ թույլատրելով ոչ քրեաիրավական նպատակներով իրականացնել անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

**3. Օպերատիվ-հետախուզական մարմինների գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց բացահայտման անթույլատրելիություն**

Ապացույց հավաքելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումները քրեական դատավարության դաշտ բերելը (գաղտնի քննչական գործողությունները) բնավ չի նշանակում, որ քննիչը կամ դատա-

խազը տեղեկանալու են գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց տվյալներին: Հետաքննության մարմինները, առանց գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց տվյալները բացահայտելու, հնարավորություն ունեն քննիչի հանձնարարությամբ իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումները (գաղտնի քննչական գործողությունները):

### Հետաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումների իրականացման նվազագույն միջոցառումները

Վերը նշված սկզբունքների հիման վրա հետաքննության և օպերատիվ-հետախուզական միջոցառումների փոխհարաբերակցության առկա խնդիրները լուծելու նպատակով, առաջարկում ենք ձեռնարկել հետևյալ նվազագույն միջոցառումները.

**1. Առերևույթ հանցագործության (այդ թվում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստման և փորձի) հատկանիշներով ապացույց հավաքել բացառապես քրեական վարույթի շրջանակներում՝ քննչական և գաղտնի քննչական գործողությունների միջոցով:** Այս գործունեության իրավական հիմքը պետք է լինի ՀՀ քր. դատ. օր-ը:

Այս նպատակով անհրաժեշտ է նպաստել ապացույց հավաքելու լոռորտում օպերատիվ-հետախուզական միջոցառումները դատավարականացնելու և հետաքննության հասկացության մեջ ընդգրկելու գաղափարի կենսագործմանը:

**2. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները, առանց քրեական վարույթ նախաձեռնելու, պետք է իրականացվեն երկու դեպքում, 1. հանցագործության չվերաճած վտանգի առկայության դեպքում, 2. ոչ քրեաիրավական նպատակներով (օրինակ՝ օտարերկրյա քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն տալու նպատակով):**

Այս նպատակով անհրաժեշտ է.

Ա. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքից վերացնել բոլոր այն դրույթները, որոնք օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականա-

ցումը կապվում է հանցագործության հիմքով ապացույց հավաքելու հետ,

Բ. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում ներմուծել «վտանգ» հասկացությունը, տալ դրա բնորոշումը և հստակ սահմանել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացվում է հանցագործության չվերաճած վտանգի հիման վրա և ոչ քրեաիրավական նպատակներով:

**3. Մինչև վերը նշված միջոցառումների իրականացումը, ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներին հնարավորություն տալ իրականացնելու հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ այնպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնք անմիջապես չեն առնչվում սահմանադրական արժեքներին:** Դրանք են՝ տեխնիկական միջոցառումների կիրառմամբ արտաքին դիտում, բնակարան չհանդիսացող շինությունում ներքին դիտում, բնակարան չհամարվող տարածքում կաշառք տալու և ստանալու նմանակում:

Այս նպատակով անհրաժեշտ է.

Ա. ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների օպերատիվ աշխատակիցներին տրամադրել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (գաղտնի քննչական գործողություններ) իրականացնելու համար անհրաժեշտ հատուկ տեխնիկական միջոցներ,

Բ. նման բնույթի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (գաղտնի քննչական գործողություններ) իրականացնելու իրավական հիմքերի, կարգի և տակտիկական հնարքների վերաբերյալ կազմակերպել վերապատրաստման դասընթացներ:

# ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՑՈՂ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Վահրամ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ,  
իրավաբանական գիտություններ թեկնածու, դոցենտ

*Առաջին հայացքից, Քաղաքացիական օրենսգրքով<sup>1</sup> և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով<sup>2</sup> իրավաբանական անձի լուծարման հետ կապված իրավահարաբերություններն առավել ամբողջական կարգավորված ոլորտներից են: Դրանք առավել մանրակրկիտ են կարգավորված գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված իրավաբանական անձանց պարագայում, օրինակ՝ բանկեր, ապահովագրական ընկերություններ, վարկային կազմակերպություններ<sup>3</sup> և այլն: Սակայն նշված ինստիտուտի պրակտիկ կիրառության ուսումնասիրությունը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների օրենսդրության և խնդրին վերաբերող գիտական աշխատությունների վերլուծությունը մեզ թույլ տվեց վերհանել Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ և ներկայացնել դրանց լուծման ուղիները: Առկա հիմնախնդիրներն իրենց բացասական ազդեցությունն են գործում ոչ միայն լուծարման գործընթացում գոյություն ունեցող իրավահարաբերությունների ներքին և արտաքին կողմի վրա, այլև, ընդհանրապես, խաթարում են քաղաքացիական իրավահարաբերությունների կայունությունը:*

Ավանդաբար իրավաբանական անձի լուծարմանը մասնագիտական գրականության մեջ հատկացվել է հատուկ վերաբերմունք, իսկ նրա գոյության դադարումը համեմատվել է ֆիզիկական անձի մահվան հետ<sup>4</sup>: Ներկայումս իրավաբանական անձի լուծարումը կարելի է բնութագրել որպես մի գործընթաց, որի վերջնափուլում, իրավաբանական անձանց պետական գրանցա-

մատյանում լուծարման մասին համապատասխան գրառում կատարելուց հետո, իրավունքի սուբյեկտը կորցնում է պետության կողմից ճանաչված իրավունակությունը, իսկ նրա գոյությունը դադարում:

Իրավաբանական անձի լուծարման օրենսդրական բանաձևումն առկա է ինչպես Քաղաքացիական օրենսգրքում, այնպես էլ հարակից մի քանի օրենքներում,

<sup>1</sup> ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.98:

<sup>2</sup> ՀՀՊՏ 2001/34 (166), 06.11.01:

<sup>3</sup> Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք գլուխ 8-րդ, 9-րդ, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք բաժին 8-րդ, գլուխ 23 և այլն:

<sup>4</sup> Տե՛ս Мейер Д.И. Русское гражданское право (2 ч.), Издание 2-е, испр. М., 2000, էջ 153:

օրինակ, իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը<sup>5</sup> դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձի անցնելու (Քաղ. օր-ի հոդվ. 67-րդ, կետ 1-ին), լուծարումն ընկերության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 27, կետ 1-ին), ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք<sup>6</sup> հոդվ. 51, կետ 1-ին), իսկ գործունեության առանձին ոլորտներում բանկային, ապահովագրական, ներդրումային և այլն, ընդգրկված իրավաբանական անձանց լուծարման գործընթացը կարգավորող օրենքներում պարզապես օգտագործվում է լուծարում եզրույթը՝ առանց դրա հասկացության բանաձևման<sup>7</sup>:

Լուծարման հասկացության վերը նշված օրենսդրական ձևակերպումների, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքի 435 հոդվածով ամրագրված իրավաբանական անձի լուծարմամբ պարտավորությունների դադարման հիմքի<sup>8</sup> առկայության պայմաններում կարելի էր համաձայնվել տեսության

մեջ արտահայտված այն տեսակետին, որ իրավաբանական անձի լուծարման դեպքում բացակայում է ոչ միայն ունիվերսալ, այլև սինգուլյար իրավահաջորդությունը<sup>9</sup>, սակայն, այլ իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձի պարտականությունների մասով իրավահաջորդություն հնարավոր է: Օրինակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի<sup>10</sup> 16-րդ հոդվածի 7-րդ մասը հնարավոր է համարում, որ իրավաբանական անձի լուծարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային մարմնի ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշմամբ դրվեն այդ իրավաբանական անձի որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություն ունեցող սեփականատերերի և (կամ) ղեկավար մարմնի անդամների վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմնից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով, եթե նշված պարտավորությունները ծագել են այդ անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով:

Կարծում ենք, որ գործող օրենսդրությամբ, լուծարված իրավաբանական անձի իրավունքների մասով, իրավահաջորդության հնարավորության բացառումը ևս կա-

<sup>5</sup> Կարծում ենք, որ քաղաքացիական օրենսգրքում «գործունեություն» բառը սխալ է օգտագործված, քանի որ լուծարմամբ դադարում է իրավաբանական անձի գոյությունը, այլ ոչ թե գործունեությունը:

<sup>6</sup> ՀՀ ՊՏ 2001/38 (170), 07.12.01:

<sup>7</sup> Մեր կողմից անընդունելի է օրենսդրի այն մոտեցումը, երբ Քաղաքացիական օրենսգրքում իմպերատիվ կերպով տրված որևէ հասկացություն այլ օրենքներում փոփոխվում կամ կրկնվում է: Գտնում ենք, որ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված հասկացություններն այլ օրենքներում չպետք է աղճատվեն կամ փոփոխվեն: Այլ օրենքներում այդ ինստիտուտներին անդրադառնալիս պետք է բավարարվել ընդամենն ինստիտուտի անվանումը նշելով:

<sup>8</sup> Հարկ ենք համարում նշել, որ Քաղաքացիական օրենսգրքի նշված նորմը թերի է, մասնավորապես, այն չի պատասխանում այն հարցին, թե նման իրավակարգավորման պայմաններում ինչպես պետք է լուծվի իրավաբանական անձի լուծարումից հետո անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավահաջորդության հարցը կամ իրավաբանական անձի լուծարումից հետո նրան պատկանած ակտիվների հայտնաբերման դեպքում ով պետք է տնօրինի դրանք և այլն: Կարծում ենք, որ նշված նորմում պետք է ամրագրել օրենքով նախատեսված դեպքերում այդ կանոնից բացառություններ սահմանելու հնարավորությունը:

<sup>9</sup> Տե՛ս Слоневская А.Ю. Ликвидация коммерческих организаций. Автореф. дис. ... канд. юрид. наук. СПб., 2004, էջ 9:

<sup>10</sup> ՀՀ ՊՏ 1997/11, 20.05.97:

րելի է դիտել որպես թերություն, քանի որ նման իրավակարգավորման պայմաններում իրավաբանական անձի լուծարումից հետո բավարարում չստացած կամ մասնակի ստացած պարտատերերը կամ գույք չստացած մասնակիցները իրենց պահանջները ներկայացնելու հնարավորությունից զրկվում են այն դեպքում, երբ իրավաբանական անձի լուծարումից հետո հայտնաբերվում է տվյալ անձին պատկանած գույք: **Օրինակ, պատկերացնենք մի իրավիճակ, երբ ընկերության պահեստապետը հափշտակել է ընկերությանը պատկանող 1000000 դրամ արժողությամբ որևէ գույք և հափշտակության փաստը բացահայտվել է իրավաբանական անձի լուծարումից վեց ամիս կամ մեկ տարի անց: Գործող իրավակարգավորման պայմաններում այդ գույքը կդիտվի որպես տիրազուրկ գույք, քանի որ մենք չուենք իրավաբանական անձի որևէ իրավահաջորդ, կամ օրենքով սահմանված շահագրգիռ որևէ անձ, ով կկարողանա պահանջ ներկայացնել այդ գույքի նկատմամբ, ինչը, մեր կարծիքով, արդարացի չէ:**

Այդ իսկ պատճառով էլ, առաջարկում ենք քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

**«5. Լուծարված և իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից հանված իրավաբանական անձին պատկանող գույքի հայտնաբերման դեպքում շահագրգիռ անձը կամ լիազոր պետական մարմինն իրավունք ունեն լուծարման գործընթացը վերսկսելու և հայտնաբերված գույքը շահագրգիռ անձանց միջև բաշխելու պահանջով դիմել դատարան:**

**Շահագրգիռ անձը նման պահանջ ներկայացնելու իրավունք ձեռք է բերում նաև այն դեպքում, երբ գույքի բաշխումն իրականացվել է օրենսգրքով սահմանված հերթերի խախտմամբ:**

Նման դեպքերում դատարանը նշանակում է լուծարային կառավարիչ:

Լուծարման գործընթացի վերսկսումը

թույլատրվում է իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից իրավաբանական անձին հանելու մասին գրառումը կատարելու ամսաթվից հետո երեք տարվա ընթացքում՝ պայմանով, որ առկա գույքի արժեքը բավարար է լուծարման գործընթացը վերսկսելու համար և հայտնաբերված գույքը հնարավոր է բաժանել շահագրգիռ անձանց միջև:»:

Կարծում ենք, որ նման նորմի ներմուծումը հնարավորություն կտա իրավաբանական անձի գույքի հաշվին բավարարել շահագրգիռ անձնաց պահանջները, իսկ լուծարման շղարշը որպես իրավունքի չարաշահման հնարավորություն օգտագործելու ցանկություն ունեցող անձանց կզրկի այդ մեխանիզմից օգտվելու հնարավորությունից:

**Չաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք նաև փոփոխել Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ի կետը և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

**«1. Իրավաբանական անձի լուծարմամբ նրա գոյությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձնաց անցնելու, բացառությամբ սույն օրենսգրքով և օրենքով նախատեսված դեպքերի:»:**

Ինչպես նաև, անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել այն օրենքներում, որոնցում փորձ է կատարվել տալ այս կամ այն կազմակերպատիրական ձևն ունեցող իրավաբանական անձի լուծարման հասկացությունը, դրանցում օգտագործել բացառապես լուծարում եզրույթը՝ առանց դրա էությունը պարզաբանող հասկացություններ ներառելու:

Իրավաբանական անձը կարող է լուծարվել կամ կամավոր կերպով, կամ էլ հարկադրաբար<sup>11</sup>՝ դատական կարգով:

**Իրավաբանական անձը դատարանի որոշմամբ՝ հարկադրաբար, կարող է լուծարվել՝**

● **դատարանի կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ**

<sup>11</sup> Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Гусева Т.А., Зубов В.И., Ларина Н.В. Ликвидация юридических лиц. М. Изд-во “ФБК-ПРЕС”, 2003:

թույլ տված օրենքի խախտումների հետ<sup>12</sup>,

● առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների,

● դատարանի կողմից իրավաբանական անձին սնանկ ճանաչելու<sup>13</sup>,

● ինչպես նաև օրենքով սահմանված այլ հիմքերով (ՀՀ քաղ. օր., հոդվ. 67):

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով իրավաբանական անձանց լուծարման դեպքում լուծարումն իրականացվում է վճռում նշված մարմնի, իսկ նման նշման բացակայության դեպքում՝ իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված իրավաբանական անձի մարմնի կողմից («Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի<sup>14</sup> հոդվ. 24, կետ 4-րդ):

Կամավոր կերպով ընկերությունը կարող է լուծարվել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով այն ստեղծվել էր, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար այն ստեղծվել էր:

Քաղաքացիական օրենսգիրքը հստակ չի պատասխանում այն հարցին, թե լուծար-

ման մասին որոշումը կայացնելու պահից ինչ ճակատագրի են արժանանում լուծարվող իրավաբանական անձի կողմից ստանձնած պարտավորությունները: Ասվածը հիմնավորվում է դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ: Մասնավորապես, լուծարման իրավահարաբերություններին առընչվող սուբյեկտների համար երբեմն պարզ չէ, արդյոք ընկերության լուծարման գործընթացում գտնվելն առաջացնում է օրենքի հիման վրա առաջացած բոլոր պարտավորությունները կատարելու ընկերության պարտականությունը, այդ թվում՝ հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջացող պարտավորությունները<sup>15</sup>: Նշված գործերով վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ եթե ընկերության լուծարման կամ գործունեության դադարեցման մասին պետական գրանցամատյանում որևէ գրառում չի կատարվել, ընկերությունը թեև գտնվում է լուծարային գործընթացում, սակայն համարվում է գոյություն ունեցող: Դրանից բխում է, որ ընկերության համար ծագում են, իսկ ընկերությունն իր հերթին պարտավոր է կատարել օրենքի հիման վրա առաջացած բոլոր պարտավորությունները, այդ թվում հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջացող պարտավորությունները:

Բացի այդ, կարծում ենք, որ քաղաքացի-

<sup>12</sup> Կարծում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքում ամրագրված իրավաբանական անձի դատական կարգով լուծարման այս հիմքն արդարացի չէ և դրա պրակտիկ կիրառությունը կարող է տարատեսակ չարաշահումների տեղիք տալ: Պատկերացնենք մի իրավիճակ, երբ իրավաբանական անձը ստեղծելուց հետո երեք տարի անց հայտնաբերվել են իրավաբանական անձի ստեղծման գործընթացում թույլ տրված օրենքի անշան խախտումներ և մրցակից ընկերությունը, հետապնդելով նրան շուկայից դուրս մղելու նպատակ, կազմակերպում է տվյալ սուբյեկտի դատական կարգով լուծարման գործընթացը: Գտնում ենք, որ օրենսդրի նման մոտեցումը կարող է խաթարել քաղաքացիական իրավահարաբերությունների կայունությունը, ուստի առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) դատարանի կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տված օրենքի կոպիտ խախտումների հետ և եթե այդ խախտումները հնարավոր չէ վերացնել.»:

<sup>13</sup> Սույն ուսումնասիրության շրջանակներում իրավաբանական անձին սնանկ ճանաչելուն վերաբերող խնդիրները չեն ուսումնասիրվում, քանի որ դրանք իրենց բնույթով կորպորատիվ իրավահարաբերություններ չեն հանդիսում:

<sup>14</sup> ՀՀ ՊՏ 2001/14 (146), 18.05.01:

<sup>15</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 4 Դ 1/0063/05/08, 4 Դ 1/0091/05/10, 4 Դ/2317/05/10, 4 Դ/0790/05/10, 4 Դ/0237/05/10, 4 Դ/2469/05/09 գործերի նախապատմությունը և դրանցով վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը:

ական օրենսգրքով լուծարման մասին որոշման կայացումը պետք է ամրագրվի որպես լուծարվող իրավաբանական անձի իր պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ կատարման հիմք և հստակ սահմանվեն մեծ իրավիճակներում պարտատերերի կողմից ներկայացման ենթակա պահանջների շրջանակը, այնպես ինչպես որ դրանք սահմանված են վերակազմակերպման դեպքում:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց կամավոր կերպով լուծարումն իրենից ներկայացնում է բավականին բարդ և ժամանակատար գործընթաց, որը, հիմքում ունենալով բաժնետիրական ընկերության կազմակերպարական ձևին բնորոշ առանձնահատկությունները, պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի:

**Փուլ առաջին.** լուծարվող ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) կողմից բաժնետերերի ընդհանուր ժողովի լուծմանն են ներկայացվում ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողով մշակակելու հարցերը:

**Փուլ երկրորդ.** գումարվում է բաժնետերերի ընդհանուր ժողով, որը, ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ սահմանված չէ, որոշում է կայացնում ընկերության լուծարման<sup>16</sup>, ինչպես նաև լուծարային հանձնաժողով<sup>17</sup> ստեղծելու մասին: Լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը պարտավոր են այդ մասին անհապաղ<sup>18</sup> տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին, որն իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում տվյալ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին: Լուծարային հանձնաժողովի մշակակման պահից ընկերության գործերի կառավարման լիազորություններն անցնում

<sup>16</sup> Քաղաքացիական օրենսգրքը, ինչպես նաև այլ հարակից օրենքները չեն պատասխանում այն հարցին, թե ընկերության պարտատերերը և այլ շահագրգիռ անձինք ինչպես պետք է վարվեն այն դեպքում, երբ լուծարման մասին որոշումը կայացրած իրավաբանական անձի մարմինները չեն կատարում իրավաբանական անձի լուծարման գործընթացն ապահովելու համար պահանջվող գործողությունները: Կարծում ենք, որ մեծ իրավիճակներում, շահագրգիռ անձանց դիմումով, լուծարումը պետք է իրականացվի դատարանի որոշմամբ և շահագրգիռ անձանց այդ իրավունքը պետք է հստակ ամրագրել Քաղաքացիական օրենսգրքում:

<sup>17</sup> «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն անհարկի սահմանափակել է Քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին կետով ընձեռված հնարավորությունը՝ լուծարումն իրականացնել նաև լուծարողի միջոցով: Բացի այդ, գտնում ենք, որ օրենքով լուծարվող ընկերություններին կարելի է հնարավորություն տալ լուծարումն իրականացնել նաև առանց լուծարային հանձնաժողով ստեղծելու և այդ գործառույթի իրականացման հնարավորությունն ընձեռել ընկերության գործադիր մարմնին, իսկ խորհրդի առկայության դեպքում՝ խորհրդին: Նամանավանդ, պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ որպես լուծարային հանձնաժողովի նախագահ մշակակվում է գործադիր մարմնի ղեկավարը: Օրինակ, մեծ իրավակարգավում է նախատեսում Շվեյցարիայի բաժնետիրական օրենսդրությունը, տես՝ Ageev A.B., Акционерное законодательство Швейцарии: подстатейный комментарий, М., 2005, էջ 141:

<sup>18</sup> Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցներին, իրենց պարտականությունների կատարման հարցում որոշակիություն հաղորդելու նկատառումներից ելնելով, առաջարկում ենք նախատեսել հստակ ժամկետ, մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին կետում «անհապաղ» բառը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:



են լուծարային հանձնաժողովին<sup>19</sup>: Լուծարվող ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարային հանձնաժողովը:

Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահի դրությամբ ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվելու լուծարային հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին: Լուծարային հանձնաժողովի անդամները, ժողովի որոշմամբ սահմանված կարգով, կարող են վարձատրվել:

Չնայած այն հանգամանքին, որ լուծարման մասին որոշումը կայացնելուց հետո կորպորացիան շարունակում է հանդիսանալ իրավունքի սուբյեկտ, ընդհանուր ժողովը շարունակում է պահպանել իր գոյությունը որպես կառավարման բարձրագույն մարմին, բայց և այնպես լուծարման ողջ ժամանակահատվածում ընդհանուր ժողովի իրավասությունների շրջանակն էականորեն սահմանափակվում է:

Տեսական գրականության մեջ միանշանակ չէ լուծարային հանձնաժողովի իրավական կարգավիճակի վերաբերյալ մոտեցումը: Որոշ հեղինակներ գտնում են, որ լուծարային հանձնաժողովը պետք է դասվի իրավաբանական անձի կառավարման մարմինների շարքը: Այդ կապակցությամբ **Գ.Ս. Շապկինան** նշում է, որ լուծարային հանձնաժողովը հանդիսանում է կառավարման առանձնահատուկ դիրք զբաղեցնող մարմին, ինչը պայմանավորված է նրանով, որ այն գործում է բացառապես կորպորացիայի լուծարման ժամանակ և բացակայում է նորմալ գործող կազմակերպություններում<sup>20</sup>:

**Դ.Վ. Լոմակինի** կարծիքով՝ լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձի

մարմին չի կարող համարվել, քանի որ նրա նպատակը կառավարչական կամ վերահսկողական գործառնությունների իրականացման միջոցով կորպորացիայի բնականոն գործունեությունն ապահովելը չէ, այլ լուծարման գործընթացի կազմակերպումը և անցկացումը: Ավելին, լուծարման հանձնաժողովի կազմավորումը չի հանգեցնում կորպորացիայի բոլոր մարմինների գործունեության դադարեցմանը<sup>21</sup>:

Մենք համամիտ ենք, տեսության մեջ արտահայտված այն կարծիքին, որ լուծարային հանձնաժողովը, կորպորացիայի լուծարման փուլում, հանդիսանում է կորպորացիայի կառավարման մարմին, դրան բնորոշ բոլոր հատկանիշներով: Ավելին, լուծարային հանձնաժողովին լուծարման գործընթացում ընդգրկելու պարագայում այդ լուծարային հանձնաժողովի գործունեությունը կդառնա առավել թափանցիկ և վերահսկելի: Ի տարբերություն լուծարային կառավարչի, լուծարման հանձնաժողովը միշտ հանդես է գալիս լուծարվող իրավաբանական անձի անունից և ներկայացնում է իրավաբանական անձի շահերը<sup>22</sup>:

Ժողովը հաստատում է նաև ամփոփիչ հաշվեկշիռը, որոշումներ է ընդունում լուծարման կարգի և ժամկետների, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքի բաշխման կարգի մասին:

Կարծում ենք, որ լուծարումից հետո մնացած գույքը մասնակիցների միջև բաշխելու կարգը հաստատելու իրավունքը ժողովին վերապահելը հանդրսանում է գործող օրենսդրության լրջագույն բացերից մեկը: Դրա բերում է նրան, որ հաճախ խոշոր բաժնետերերը կամ մասնակիցներն հաստատելով այդ կարգը իրացվելի ակտիվները վերցնում են իրենց, իսկ փոքրամասնու-

<sup>19</sup> Քաղաքացիական օրենսգիրքը հստակ չի կարգավորում այն հարցը, թե լուծարային հանձնաժողովի ստեղծումից հետո ինչ ճակատագրի են արժանանում գործադիր մարմինը, խորհուրդը կամ վերստուգիչ հանձնաժողովը: Մենք գտնում ենք, որ հստակ պետք է սահմանվի այն փաստը, որ լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո գործադիր մարմնի և խորհրդի լիազորությունները դադարում են, իսկ վերստուգիչ հանձնաժողովին պետք է տրվեն լուծարման գործընթացի նկատմամբ ակտիվ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ լիազորություններ:

<sup>20</sup> Տե՛ս Шапкина Г. С. Новое в российском акционерном законодательстве. М., 2002, էջ 71:

<sup>21</sup> Տե՛ս Ломакин Д.В. Очерки теории акционерного права и практики применения акционерного законодательства. М., 2005, էջ 108-110:

<sup>22</sup> Տե՛ս Зурабян А.А. Корпоративные правоотношения как вид гражданских правоотношений. дис. ... канд. юрид. наук. М., 2007, էջ 124-125:

թյուն կազմող բաժնետերերին կամ մասնակիցներին հատկացնում գույք, որը շուկայում երբեմն հնարավոր չի լինում իրացնել:

Խոշոր բաժնետերերին, նման եղանակով, իրենց իրավունքը չարաշահելու հնարավորությունից զրկելու և կորպորացիայի լուծարումից հետո մնացած գույքը մասնակիցների միջև արդարացի բաշխելու հնարավորություն ստեղծելու նպատակից ելնելով՝ **առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածը համալրել հետևյալ խմբագրությամբ նոր 6.1 կետով.**

**«6.1 եթե իրավաբանական անձի մասնակիցներից որևէ մեկը դեմ է գույքը հիմնադիրներից (մասնակիցներից) մեկին հանձնելուն, ապա նշված գույքը լուծարային հանձնաժողովի կողմից ենթակա է իրապարակային սակարկությունների միջոցով վաճառքի:»**

**Փուլ երրորդ.** լուծարային հանձնաժողովը իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ իրապարակող մանուլում հայտարարություն է տալիս՝

- ընկերության լուծարման,
- պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետների մասին:

Պահանջների ներկայացման ժամկետը պետք է լինի լուծարման մասին հայտարարությունը իրապարակելու պահից առնվազն 2 ամիս: Հայտարարության իրապարակման պահը համարվում է ընկերության լուծարման գործընթացի սկիզբը: Գույքային պարտավորությունների մեծ ծավալի, կասկածելի կամ վիճելի պարտավորությունների առկայության դեպքում լուծարային հանձնաժողովը իրավունք ունի սահմանել պահանջների ներկայացման ավելի երկար ժամկետներ<sup>23</sup>: Հարկ ենք համարում նշել, որ պահանջների ներկայացման առավելագույն ժամկետներ քաղաքացիական օրենսգրքով սահմանված չեն:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարային հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարային

հանձնաժողովի դիմումի հիման վրա:

Ընկերության բաժնետերերը, այլ արժեթղթերի տերերը և պարտատերերն իրավունք ունեն ծանոթանալու ընկերության լուծարման առնչվող բոլոր փաստաթղթերին:

**Փուլ չորրորդ.** լուծարային հանձնաժողովը իրականացնում է ընկերության գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և ընկերության լուծարման մասին տեղեկացման, ինչպես նաև դեբիտորական պարտքերի ստացման համար:

Լուծարման ընթացքում ընկերությունը իրավունք ունի կնքելու նոր գործարքներ և ստանձնելու նոր պարտականություններ՝ միայն ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունը ավարտելու անհրաժեշտության դեպքում: Լուծարվող ընկերության գույքի օտարմանը կամ պարտքերի մարմանն ուղղված բոլոր գործողությունները կարող են իրականացվել միայն լուծարային հանձնաժողովի համաձայնությամբ:

Կարելի ասել, որ լուծարման մասին որոշման ընդունման պահից կորպորացիայի «գործնական կյանքը»<sup>24</sup> դադարում է, նրա իրավունակությունը ենթարկվում զգալի սահմանափակման: Մասնավորապես, կորպորատիվ իրավահարաբերությունների իրականացումն արդեն ուղղվում է ոչ թե շահույթ ստանալուն կամ կանոնադրային նպատակներին հասնելուն, այլ լուծարման ընթացակարգի իրականացմանը:

**Փուլ հինգերորդ.** պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետի ավարտից հետո լուծարային հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող ընկերության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

**Փուլ վեցերորդ.** գումարվում է բաժնետերերի ընդհանուր ժողով, որը հաստատում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռը:

**Փուլ յոթերորդ.** եթե լուծարվող ընկերության դրամական միջոցները բավարար

<sup>23</sup> Տե՛ս Тихомирова М.Ю. Юридические лица, М., 2003, էջ 29:

<sup>24</sup> Տե՛ս Писемский П. А. Акционерные компании с точки зрения гражданского право, М, 1976, էջ 209:

չեն լինում պարտատերերի պահանջների բավարարման համար, ապա լուծարային հանձնաժողովը իրապարակային սակարկությունների միջոցով իրականացնում է ընկերության գույքի վաճառք:

**Փուլ ութերորդ.** Լուծարային հանձնաժողովը վճարումներ է կատարում լուծարվող ընկերության պարտատերերին: Լուծարային հանձնաժողովը իրավունք չունի սկսել ընկերության պարտատերերի պահանջների բավարարման գործընթացը, եթե ընկերության գույքի արժեքը կամ դրամական միջոցների քանակը բոլոր պարտատերերի պահանջները բավարարելու համար բավարար չեն և առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի<sup>25</sup> 3-րդ հոդվածով նախատեսված պարտապահին սնանկ ճանաչելու հիմքերը և անվճարունակության հատկանիշները: Պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) պարտավոր է պարտապահին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար: Պարտապահին սնանկ ճանաչելու դիմումը պետք է դատարան ներկայացվի ոչ ուշ, քան համապատասխան հիմքերի հայտնաբերումից հետո՝ երկամսյա ժամկետում («Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 5, կետ 2,3):

Հարկ ենք համարում նշել, որ օրենքի նշված նորմի կիրառությունը գործնականում լուրջ խնդիրների է առընչվում այն դեպքում, երբ բավարար միջոցներ չունեցող լուծարվող իրավաբանական անձի պարտավորությունների չափը 1000000 դրամից պակաս է լինում:

Այս առումով հատկանշական է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից քննված թիվ ԱՐԴ/0026/04/11 քաղաքացիական գործը: Գործի քննության շրջանակներում պարզվել է, որ լուծարման մասին որոշում կայացրած «Բաղրամյանի նավթամթերք» փակ բաժնետիրական ընկերության լուծարային հանձնաժողովը ընկերությունը սնանկ ճանաչելու դիմումով դիմել է դատարան, քանի որ ընկերության կողմից չկատարված հարկային պարտավորությունների չափը կազմել է 421000 ՀՀ դրամ և հաշվապահական հաշվառման համաձայն՝ ընկերությունն ակտիվներ չի ունեցել: Առաջին ատյանի դատարանը «Բաղրամյանի նավթամթերք» փակ բաժնետիրական ընկերության լուծարային հանձնաժողովի դիմումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված պարտապահին սնանկ ճանաչելու հիմքերը և անվճարունակության հատկանիշները<sup>26</sup> բացակայում են: Ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանվել է և գործը ուղարկվել նույն դատարան՝ ամբողջ ժավալով նոր քննության:

Որպես վճիռը բեկանելու հիմք վերաքննիչ դատարանը դիտել է այն փաստարկը, որ առաջին ատյանի դատարանը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սնանկության հիմքը չի դիտել որպես ինքնուրույն դեպք և արդյունքում, նշված նորմի կիրառումը պայմանավորել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված

<sup>25</sup> ՀՀՊՏ 2007/7 (531), 31.01.07:

<sup>26</sup> Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): ...

2) սեփական նախաձեռնությամբ՝ (կամավոր սնանկության դիմում) եթե պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն), տես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 3, կետ 2):

սնանկության հատկանիշների առկայությամբ՝ թույլ տալով նյութական իրավունքի խախտում, որն էական ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա: Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործով անհրաժեշտ է իրականացնել նոր քննություն պարզելու համար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սնանկության հատկանիշների առկայությունը<sup>27</sup>:

Կարծում ենք, որ վերաքննիչ դատարանի վերը նշված գործով բերված փաստարկները բավարար չափով հիմնավոր չեն, քանի որ վերաքննիչ դատարանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պարտապանի դատարան դիմելու պարտականությունը սահմանող նորմը դիտարկել է որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հիմքերից զատ որպես սնանկության ինքնուրույն հիմք:

Նշված գործով վճռաբեկ բողոքի բացակայության պայմաններում դժվար է միանշանակ պնդել նման գործերով Հայաստանի Հանրապետությունում ձևավորված միասնական դատական պրակտիկային մասին, սակայն գտնում ենք, որ դատարանների կողմից տարբեր մոտեցումների դրսևորումը հիմնականում պայմանավորված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի անկատարությանը: **Մասնավորապես, առաջարկում ենք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում որպես սնանկության ինքնուրույն հիմք և անվճարունակության հատկանիշ մատնանշել այն դեպքը, երբ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար:**

Պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը վերը նշված դեպքերում և ժամկետում չներկայացնելու դեպքում դիմում ներկայացնելու պարտականություն ունեցող հանձնաժողովի անդամները պարտատերերի առջև սուբսիդիար պատասխանատվություն են կրում պարտապանի այն պարտավորությունների համար, որոնք առաջացել են վերը նշված ժամկետը լրանալուց հետո («Սնանկության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 7, կետ 1):

Լուծարային հանձնաժողովը լուծարվող ընկերության պարտատերերին վճարումներ է կատարում ՀՀ քաղ. օր-ի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ հաշվեկշռին համապատասխան: Դատարանի վճռի հիման վրա ընկերությունից բռնագանձման ենթակա գումարները ևս վճարվում են ՀՀ քաղ. օր-ի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ:

Իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

**առաջին հերթին** բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի **գրավով ապահովված** պարտավորություններով պարտատերերի պահանջները<sup>28</sup>.

**երկրորդ հերթին** բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով<sup>29</sup>.

**երրորդ հերթին** վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող ան-

<sup>27</sup> Գործի նախապատմության և վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների մասին առավել մանրամասն տես՝ թիվ ԱՐԴ/0026/04/11 քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի 29.09.2011 թվականի որոշումը:

<sup>28</sup> Մենք կհսում ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ կյանքին և առողջությանը պատճառված վնասների և աշխատավարձի վճարները գրավով ապահովված պարտավորությունների հանդեպ ստորադասելը սխալ է, ուստի օրենսգրքով սահմանված հերթերը վերանայման կարիք ունեն: Այդ մասին առավել մանրամասն տես՝ Բարսեղյան Տ.Կ. Գործարարական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009, էջ 87:

<sup>29</sup> Կարծում ենք, որ լուծարման գործընթացն առավել կանխատեսելի կլինի, նշված նորմի կիրառությունը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք չի տա, եթե օրենսդիրը հստակ սահմաներ կապիտալիզացման չափորոշիչները: Առաջարկում ենք, որպես այդպիսին օգտագործել «Սնանկացման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 2-իդ կետով սահմանված չափորոշիչները:

ծանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

**չորրորդ հերթին** մարվում է բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը. հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.

**վեցերորդ հերթին** հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

**Կարծում ենք, որ, իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման հերթերով սահմանված պարտատերերի թվից պետք է բացառություն կազմեն իրավաբանական անձի մասնակիցները և նրանց հետ փոխկապակցված անձինք, և նրանց նկատմամբ լուծարվող իրավաբանական անձի պարտավորությունները պետք է բավարարվեն վերջին՝ յոթերորդ հերթում:** Նման նորմի ներմուծումը կբարձրացնի լուծարվող իրավաբանական անձի մասնակիցների պատասխանատվությունը իրավաբանական անձի բնականոն գործունեությունը առավել արդյունավետ կազմակերպելու մասով, ինչպես նաև, մասնակիցներին կզրկի ընկերության այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով պահանջների բավարարում ստանալու հնարավորությունից:

Լուծարման հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջների բավարարումը մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում, մինչև իրավաբանական անձի լուծարման հաշվեկշռի հաստատումը, պարտատերն իրավունք ունի հայց հարուցել ընդդեմ լուծարման հանձնաժողովի:

Լուծարման հանձնաժողովի կողմից պահանջներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո պարտատիրոջ ներկայացրած պահանջները բավարարվում են լուծարված իրավաբանական անձի գույքից, որը մնացել է պարտատերերի՝ ժամանակին ներկայացված պահանջները բավարարելուց հետո:

Լուծարման հանձնաժողովի կողմից մերժված պարտատերերի պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են մարված:

Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին ընկերությունը պարտատերերի նկատմամբ որևէ պարտավորություն չի ունենում, ընկերության գույքը բաշխվում է բաժնետերերի միջև<sup>30</sup>:

**Բաժնետերերի միջև գույքը բաշխվում է հետևյալ հաջորդականությամբ.**

- առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն Օրենքի 57 հոդվածով սահմանված կարգով,

- երկրորդ հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահաբաժինները,

- երրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները,

- չորրորդ հերթին կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև<sup>31</sup>:

Գույքի բաշխումը յուրաքանչյուր հերթով կատարվում է նախորդ հերթի լրիվ բաշխումն ավարտելուց հետո:

Կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի առանձին դասերի լուծարային արժեքի վճարումներն իրակա-

<sup>30</sup> Գտնում ենք, որ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կարող են լուծարման գործընթացի շրջադարձ կատարել և ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարման գործընթացը դադարեցնել:

<sup>31</sup> Մեզ համար ընդունելի չէ օրենսդրի այն մոտեցումը, որն արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին հնարավորություն է տալիս, դրանց լուծարային արժեքը ստանալուց հետո, հավասար հիմունքներով, հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հետ միասին մասնակցել մնացած գույքի բաշխմանը:

նացվում են կանոնադրությամբ սահմանված հերթականությամբ: Յուրաքանչյուր հերթի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները կատարվում են նախորդ հերթի լուծարային արժեքի լրիվ վճարումից հետո:

Եթե ընկերության գույքը լիովին չի բավարարում արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահաբաժինները բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Իսկ եթե ընկերության գույքը լիովին չի բավարարում արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաժնետերերի միջև բաշխվում է՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համասնորեն:

Լուծարվող ընկերության պարտավորությունների վերաբերյալ պարտատիրոջ հայցով դատարանում որևէ հայց քննվելու դեպքում արգելվում է ընկերության գույքը բաժանել բաժնետերերի միջև՝ մինչև դատարանի վճիռի օրինական ուժի մեջ մտնելը:

**Փուլ իններորդ.** պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը:

**Փուլ տասներորդ.** լուծարման հաշվեկշիռը ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:

**Փուլ տասնմեկերորդ.** ընկերության լու-

ծարման գործընթացի ավարտման և նրա գոյությունը դադարած լինելու մասին կատարվում է համապատասխան պետական գրանցում: Պետական գրանցում կատարելու համար իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին են ներկայացվում դիմում, բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին, լուծարման հաշվեկշիռը, տեղեկանքներ հարկային և սոցիալական ապահովության մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին, կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ և պետական գրանցման վկայականը:

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով իրավաբանական անձանց լուծարման դեպքում լուծարումն իրականացրած անձն ընկերության լուծարման գործընթացի ավարտման և նրա գոյությունը դադարած լինելու մասին համապատասխան պետական գրանցում կատարելու համար իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին է ներկայացնում դիմում, դատարանի վճիռը, տեղեկանքներ հարկային և սոցիալական ապահովության մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին, կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ և պետական գրանցման վկայականը:

Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

**Заведующий кафедрой гражданского право ЕГУ, доцент**

**ВАГРАМ АВЕТИСЯН - Особенности корпоративных правоотношений, возникающих в связи с ликвидацией корпорации.** - Исследование корпоративных правоотношений, возникающих в связи с ликвидацией корпорации, является одной из основных проблем корпоративного права. С учетом данного обстоятельства в статье рассмотрены правоотношения, связанные с ликвидацией юридического лица, что является основанием для прекращения корпоративных правоотношений. Автором предпринята попытка выработать понятие ликвидации юридического, выявить проблемы возникающие при ликвидации юридического лица и сделан целый ряд предложений по изменению и дополнению действующего законодательства РА.

**Head of Chair of Civil Law of Yerevan State University, PhD**

**VAHRAM AVETISYAN - Specific features of corporative legal relations connected with the liquidation of a corporation.** - Analysis of corporative legal relations connected with the liquidation of a corporation is one of the vital issues of corporative law. Taking into account this fact the main of study in the article is the corporative legal relations connected with the liquidation of a legal person which serves as a basis for determination of corporative legal relations. Herein the author work out the concept of liquidation of company's and appropriate proposals are made in order to change and amend the current legislation of the RA based on the positive international experience and his personal legal practice.

# ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՂԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**Եղիշե ԲԱԶՈՅԱՆ**

Երևանի Ֆրանսիական  
համալսարանի դասախոս

*Պառլամենտական վերահսկողության տեսակային կատեգորիան թույլ է տալիս որոշակի ընդհանրացում կատարել այդ ինստիտուտի բնութագրական հատկանիշների համակարգում և առանձնացնել դրա իրականացման մեխանիզմի առանցքային տարրերը: Այսպես, պառլամենտական վերահսկողությունն իրականացվում է առաջին հերթին սահմանադրական, օրենսդրական և այլ իրավական նորմերի հիման վրա, երկրորդ՝ սուբյեկտների կոնկրետ շրջանակի կողմից, երրորդ՝ համապատասխան պատշաճ ընթացակարգով, չորրորդ՝ հաստատված օբյեկտների նկատմամբ, հինգերորդ՝ տիպիկ հանգամանքներով պայմանավորված: Այդ տարրերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների օրինաչափությունները նպաստել են պառլամենտական վերահսկողության կայուն մոդելների առաջացմանը, որոնք էլ հենց կազմում են այդ ինստիտուտի ձևերը:*

Հենվելով արտասահմանյան երկրների պրակտիկայի վրա և ի նկատի ունենալով նաև **Հայաստանի Հանրապետության** սահմանադրական ամրագրումները կարելի է դասակարգել պառլամենտական վերահսկողության ձևերը հետևյալ հիմքերով՝

ա/ ըստ ամրագրող իրավական ակտի /սահմանադրական, օրենսդրական, ռեզլամենտար/, ընդ որում պետք է ասել, որ Հայաստանի Հանրապետությունում պառլամենտական վերահսկողության ձևերն ամրագրված են միայն հիմնական օրենքով և ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքով ի տարբերություն այլ երկրների, որտեղ նշված իրավական ակտերից բացի պառլամենտական վերահսկողության առանձին ձևերն ու ոլորտները սահմանվում են նաև սովորական և սահմանադրական օրենքներով /**Ռուսաստանի Ղաշնություն**/, օրգանական օրենքներով և օրդոնանսներով /**Ֆրանսիա**/, ստատուտներով /**Մեծ Բրիտանիա, Կանադա**/,

բ/ ըստ վերահսկող սուբյեկտի /կոլեգիալ, անհատական, օրինակ՝ պատգամավորները, տարբեր ոլորտներում գործող պառլամենտական լիազորները, պառլամենտը, պառլամենտական հանձնաժողովներն ու կոմիտեները և այլն/,

գ/ ըստ իրականացման ռեժիմի<sup>1</sup> /նշտական, միջնորդավորված, իրավիճակային/,

դ/ ըստ իրավական հետևանքների /իմպերատիվ, դիսպոզիտիվ, հանձնարարական/:

Պառլամենտական վերահսկողության ձևավորման հենց սկզբից ենթադրվում էր, որ այդ ինստիտուտը գործադրվելու է անմիջականորեն պառլամենտի կողմից՝ դրսևորվելով ընդամենը մի քանի ձևերով, սակայն պետական շինարարության ընթացքում շարունակաբար բարդացող սահմանադրական գործընթացներն անհրաժեշտաբար առաջացրեցին գործադիր իշխանության գործունեության նկատմամբ պառլամենտական վերահսկողության նոր սուբյեկտներ, ձևեր և ուղղություններ,

<sup>1</sup> **Капаев Р. Ш.** Конституционно-правовые формы парламентского контроля за исполнительной властью в Российской Федерации; Автореф. дисс. канд. юр. наук. Ростов на Дону 2005 ст. 6

որոնք համապատասխանում են արդեն զարգացման արդի ժամանակաշրջանի պահանջներին: Ջարգացնելով միտքը ավելացնենք, որ պետական մարմինների փոփոխարարությունների զարգացման դինամիկայի հետ միասին ու պետության գործառույթների բարդացմանը համընթաց, ինչպես նկատում է նաև **Ն. Պողոսյանը**, պետք է փնտրել վերահսկողության իրականացման նոր տեսակներ, ձևեր, միջոցներ, որոնք ավելի արդյունավետ կարող են լինել ներկա սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում<sup>2</sup>:

Պաշխանական վերահսկողությունը պատմականորեն ծագել է որպես երկրի ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը տնօրինող պետության գլխի գործունեության նկատմամբ պաշխանական ներգործությունն ամրագրող գործառույթ: Մինևս ժամանակ այդ գործառույթի ծավալն ու դրսևորումները մեծավ մասամբ կախված են տվյալ պետությունում ընդունված կառավարման ձևից: Հենց այդ պատճառով էլ պաշխանական վերահսկողության ստորև ներկայացվող ձևերն ընդրկում են գործադիր իշխանության /պետության գլուխ, կառավարություն/ նկատմամբ արտասահմանյան երկրների սահմանադրական պրակտիկայում կիրառվող անմիջական ներգործության դրսևորումները և ամբողջացվում են ըստ սահմանադրական իրավունքում ընդունված կառավարման բոլոր ձևերի: Ըստ այդմ գործադիր իշխանության նկատմամբ պաշխանական վերահսկողության ընդունված ձևերն են՝

**Հարցեր կառավարությանը.**- սա պատգամավորների կողմից կառավարությանը կամ նրա առանձին անդամների ուղղված պահանջ է ինչ որ մի խնդրի առնչությամբ որոշակի տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, որոնք կարող են լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր և ծառայում է ոչ միայն կառավարությանը վերահսկելու գործին, այլև վերջինիս քննադատելու նպատակ է հետապնդում: Դրա համար էլ այդ հարցերն ունեն բազմազան

ուղղվածություն և կարող են կրել ինչպես տեղեկատվական, այնպես էլ ընդգծված հակակառավարական բնույթ /հակակառավարական ուղղվածության հարցեր բնականաբար ավելի շատ հնչեցնում են ընդդիմադիր պատգամավորները/: Սովորաբար պաշխանական կամ նրա պալատների նիստերի ընթացքում ռեզլամենտար կարգավորմամբ հատուկ ժամանակ է հատկացվում հարցեր տալու և դրանց պատասխանը ստանալու համար: Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, Պետական Դումայի նիստերի ընթացքում կառավարությանը հարցեր ուղղելու պատգամավորներին հատկացված ժամանակահատվածը հատուկ ամվանում ունի և կոչվում է «կառավարական ժամ»<sup>3</sup>: Կառավարությունն իր ցանկությամբ պատասխանում է այդ հարցերին բանավոր կամ գրավոր կերպով և բացի այդ միշտ սահմանվում է որոշակի ժամկետ այդ հարցերին պատասխանելու համար՝ «իրատապ հարցերի» վերաբերյալ մեկ օրից /Մեծ Բրիտանիա/ մինչև մեկ ամիս /Ֆրանսիա/:

**Հարցապնդում/-ինտերպելյացիա/-**սա պաշխանական /պալատների/ կամ պատգամավորական խմբերի գրավոր պահանջ է ուղղված գործադիր իշխանությանը առհասարակ /կառավարությանը/ հասարակական հետաքրքրություն ներկայացնող որևէ հարցի կամ խնդրի կապապցությամբ բացատրություններ ստանալու համար: Այլ տարբերակով հարցապնդումը պաշխանական կողմից կառավարությանն ուղղված պահանջ է իր կողմից իրականացվող ներքին ու արտաքին քաղաքականության վերաբերյալ բացատրություններ ներկայացնելու համար<sup>4</sup>: Այն, որպես կանոն, ընդունված է պաշխանական տարրերի գերակշռությամբ գործող կառավարման ձև ունեցող երկրներում, սակայն **Մեծ Բրիտանիայում** և կառավարման բրիտանական համակարգն ընդունած երկրներում ինտերպելյացիան չի կիրառվում<sup>5</sup>: Հարցապնդման հիմնական տարբերությունը հարցից **նախ** նրանում է, որ այն ինքնըստինքյան կարող է կառավարության

<sup>2</sup> **Погосян Н.** Счетная Палата РФ М. 1998 с 107

<sup>3</sup> Парламентское право России под. ред. Степанова И. М. и Хабриевой Т. Я.; М., 1999 с 189: Ղազախի հետազոտող **Թուլեուբեկովը** համարում է, որ Ղազախստանի պաշխանական ստորին պալատի՝ Մաջիլիսի, վերահսկողական լիազորությունների այնպիսի ձևերից ինչպիսիք են պետական բարձրագույն մարմիններին ու նրանց պաշտոնատար անձանց հարցեր ուղղելը և կառավարության ու առանձին նախարարների հաշվետվությունները լսելը իրականացվում են Մաջիլիսի կանոնակարգով սահմանված «կառավարական ժամ»-ի ընթացքում: Толыебеков А. Парламентский контроль в Республике Казахстан; “Конституционное и муниципальное право” N 9/2012 с 74.

<sup>4</sup> **Мишин А. А.** Конституционное право зарубежных стран: М., 1998 с 219.

<sup>5</sup> **Мишин А. А.** Նույն տեղում:



գործունեության վերաբերյալ որոշակի գնահատական պարունակել, **երկրորդը՝** հարցապնդումը, որպես կանոն, կառավարությանն ուղղվում է գրավոր և **երրորդը**, որ ամենակարևորն է, ինչպես հանրցապնդման, այնպես էլ դրա պատասխանի վերաբերյալ պատվամենտում կարող են քննարկումներ սկսվել: Դրանց արդյունքներով հնարավոր է քվեարկություն առաջանա պատվամենտում կառավարությանը կամ նրա որևէ անդամին անվստահություն հայտնելու վերաբերյալ: Նման հետևանքների հնարավորությամբ հարցապնդման այս տեսակը սահմանադրական իրավունքում անվանում են հատուկ տերմինով՝ **ինտերպելյացիա**: Չեռակապես չպետք է շփոթել **հարցապնդումն** ու **ինտերպելյացիան**, որոնք բովանդակությամբ նույնն են, սակայն տարբերվում են իրենց հետևանքներով: Գերմանիայի պառլամենտի ստորին պալատում իրականացվող հարցապնդման ընթացակարգը, որը համապատասխանում է ինտերպելյացիային, անվանվում է «**Մեծ հարցապնդում**» և պետք է առաջադրվի Բունդեսթագի՝ առնվազն 30 պատգամավորների կողմից<sup>6</sup>: Հարցապնդումը, որպես պառլամենտական վերահսկողության ձև առավել զարգացած է պառլամենտական հանրապետությունում և սահմանադրական միապետությունում: Ինտերպելյացիան համարվում է կառավարության վրա ներգործության արդյունավետ ձևերից մեկը, քանի որ կառավարության անդամներին առաջարկվում է ամմիջականորեն հաշվետու լինել իրենց գործողությունների համար: Դա ոչ միայն տեղեկատվություն ստանալու միջոց է, այլ նաև օրենսդիր բարձրագույն մարմնի կողմից ամմիջական վերահսկողություն իրականացնելու ձև, որն իր առաջացմամբ և զարգացմամբ աղերսվում է պառլամենտական համակարգի ողջ պատմության հետ: **Ֆրանսիայում** հարցապնդումը որպես գործադիր իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողության ձև սկսել է կիրառվել վաղուց և դեռևս 1791 թ. Սահմանադրությունը նախատեսում էր, որ նախարարները պետք է իրավունք ունենան արտահայտվելու,

եթե վերջիններից իրենց գործողությունների համար բացատրություն են պահանջում<sup>7</sup>: **Ֆրանսիայի** 1958 թվականից գործող Սահմանադրության 48-րդ հոդվածը պառլամենտի անդամների հարցերի և կառավարության պատասխանների համար սահմանում է շաբաթական մեկ նիստ<sup>8</sup>, իսկ կոնկրետ օրերն ու ժամերը կանոնակարգվում են արդեն **Ֆրանսիայի** պառլամենտի պալատների կանոնակարգերով: Բայց ի տարբերություն **Ֆրանսիայի** նախորդ չորս հանրապետությունների, **Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության** սահմանադրական պրակտիկայում կառավարությանը անվստահություն հայտնելու վերաբերյալ քննարկումներ սկսելու հնարավորություն ենթադրող հարցապնդման ինտերպելյացիոն տեսակը չի կիրառվում<sup>9</sup>: **Ռուսաստանի Դաշնության** օրենսդրությունն այդ հարցում ավելի հեռուն է գնացել և կառավարությանը հարցապնդումներով դիմելու իրավունքից գատ «Դաշնային ժողովի պատգամավորի իրավական կարգավիճակի մասին» ՌԴ օրենքով ամրագրել է գույշ պալատների անդամների իրավունքը հարցապնդումներով դիմելու նաև Գլխավոր դատախազին, ՌԴ կենտրոնական բանկի նախագահին, գործադիր իշխանության դաշնային բոլոր մարմինների ղեկավարներին<sup>10</sup>: Գրավոր հարցապնդումներ ստացած մարմինը կամ պաշտոնատար անձը դրան պետք է պատասխանի 15 օրյա ժամկետում: Ընդ որում վերահսկողության այդ ձևը հաճախ է օգտագործվում Ռուսաստանի Դաշնության պառլամենտի կողմից: Բավական է ասել, որ օրինակ Պետական Դումայի 1996 թ.-ի նստաշրջանների ընթացքում գործադիր իշխանությանն ուղղված 597 հարցապնդում է կատարվել<sup>11</sup>:

**ՀՀ** Ազգային ժողովի կանոնակարգի 105.1 հոդվածի 1-ին մասի սահմանմամբ հարցապնդումը կառավարության իրավասությանը վերապահված հարցի վերաբերյալ խմբակցության կամ պատգամավորական խմբի կողմից կառավարությանն ուղղված գրավոր հարցումն է<sup>12</sup>: Սակայն պետք է նշել, որ կառավարությանն ուղղված հարցապնդում իրականացնելու

<sup>6</sup> Парламенты мира: Сравнительное исследование; подготов. М. Амеллером., М., 1967 с 467.

<sup>7</sup> Սանրամասն այս մասին տես. Ֆրանսիայի 1791 թ.-ի Սահմանադրության «Թագի նախարարների մասին» և «Օրենսդիր իշխանության իրականացման մասին» գլուխները, Хрестоматия по истории государства и права зарубежных стран /Под ред. З.М. Черниловского М., 1984 էջ 217-227:

<sup>8</sup> Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությունը: Երևան 1996, էջ 71:

<sup>9</sup> Конституционное право зарубежных стран/Учебник для вузов., М., 2009 с 315.

<sup>10</sup> Парламентское право России под. ред. Степанова И. М. и Хабриевой Т. Я., М., 1999 с 188.

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Տես ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական վեբ կայքը; www.parliament.am

պառլամենտի իրավունքը օրենսդրորեն բավականին սահմանափակ է և պատգամավորական խմբերն ու խմբակցությունները մեկ նստաշրջանի ընթացքում այդ իրավունքից կարող են օգտվել ընդամենը մեկ անգամ, ինչն, անշուշտ, բավարար չէ վերահսկողության այդ ձևից պատշաճ արդյունավետություն ակնկալելու համար: Դրան պետք է ավելացնել նաև, որ ՀՀ կառավարությանը 20 օրյա ժամկետ է տրված հարցապնդումներին պատասխանելու համար, որի ավարտին պատասխան չենրկայացնելու կամ ժամկետի խախտմամբ ներկայացնելու դեպքերում, կանոնակարգը որևէ կարգավորում չի պարունակում, իսկ ինչ վերաբերվում է հարցապնդման արդյունքով կառավարության նկատմամբ անվստահության հայտնելու որոշում կայացնելու հնարավորությանը, ապա այն այդպիսի հետևանքներ չի նախատեսում բացի իրավասու պետական կառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց առաջարկություններ ներկայացնելու որոշումներից: Սրանից հետևում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից կիրառվող հարցապնդումն իր հետևանքների առումով ինտերպեյցիոն բնույթ չունի:

Ասվածի լույսի ներքո անհրաժեշտ ենք համարում ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում փոփոխություն կատարելու միջոցով հանել մեկ նստաշրջանի ընթացքում հարցապնդում անելու պատգամավորական խմբերի ու խմբակցությունների թվային սահմանափակումները, հարցապնդման քսանօրյա ժամկետի ավարտին պատասխան չենրկայացնելու կամ ժամկետի խախտմամբ ներկայացնելու համար սահմանադրական պատասխանատվության կոնկրետ միջոցներ սահմանել պատասխանատուների նկատմամբ և որ ամենակարևորն է, հարցապնդումների արդյունքում խախտում կամ թերացում թույլ տված մարմինների և նրանց պաշտոնատար անձանց խախտումների փաստերով քննարկումներ սկսելու և դրանց արդյունքում Ազգային ժողովին կառավարության անվստահություն հայտնելու հնարավորություն տրամադրել:

**Պառլամենտական մարմինների միջոցով հետաքննություն իրականացնելը** - վերահսկողություն իրականացնելու այս ձևին դիմում են աշխարհի գրեթե բոլոր պառլամենտներում անկախ կառավարման ձևից: Քննարկելով հետաքննություն իրականացնելու իրավունք ունեցող պառլամենտական մարմնի/մարմինների/ հարցը պետք է ասել, որ դրանք քննիչ կո-

միտներն ու հանձնաժողովներն են, ինչպես նաև հատուկ մասնագիտացված կոմիտեները: Քննիչ կոմիտեներն ու հանձնաժողովներն օգտագործվում են ոչ միայն առանձին իրավիճակների ու իրադարձությունների քննության համար, կամ վարչակազմի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, այլև դրանք իրենց ուսումնասիրման թիրախ են դարձնում քաղաքական կուսակցությունների<sup>13</sup>, արհմիությունների, հասարակական կազմակերպությունների և նույնիսկ առանձին անձանց գործունեությունը<sup>14</sup>: Պառլամենտական քննություն իրականացնող մարմիններն օժտվում են մշակակալի լիազորություններով: Նրանք գործադիր իշխանության բոլոր մարմիններից, ինչպես նաև քաղաքական ու հասարակական կազմակերպություններից փաստաթղթեր, նյութեր և տեղեկատվություն պահանջնելու իրավունք ունեն, ցուցմունքներ վերցնելու համար իրավասու են իրավիճակ պաշտոնատար անձանց, առանձին քաղաքացիների և քննության համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտի փորձագետների: Առանձին երկրներում /**Իտալիա, ԳՂՀ**/ այդ հանձնաժողովներն օժտվում են նույնիսկ այնպիսի լիազորություններով ինչպիսիք ունեն իրավապահ մարմինները, ընդ որում, վերջիններս պարտավոր են քննիչ հանձնաժողովներին ամեն տեսակի օժանդակություն ցուցաբերել: Պառլամենտական քննության անցկացումը վերահսկողության իրականացման հատուկ տեսակ է, որն ինչպես իր առանձնահատուկ ընթացակարգով, ընդգրկման խորությամբ, այնպես էլ արդյունքների ծավալով ու հասարակական հնչեղության աստիճանով տարբերվում է վերահսկողության բոլոր հայտնի տեսակներից: Այն կարելի է բնորոշել որպես պառլամենտական իրավունքի առանձին ինստիտուտում միավորված իրավական նորմերի ամբողջություն, որը կարգավորում է պետության ու հասարակության համար վնասակար հետևանքներ ունեցող և հասարակական մեծ հետաքրքրություն ներկայացնող փաստերի ու հանգամանքների քննություն իրականացնող պառլամենտի /նրա պալատների/ գործունեության հետ կապված հասարակական հարաբերություններ: Որպես անմիջական վերահսկողություն տեսակ պառլամենտական քննությունն առանձնանում է նաև այն հանգամանքով, որ նրան ներհատուկ են պառլամենտական վերահսկողության դասակարգման հիմքերին բնորոշ գրեթե բոլոր տեսակային հատկանիշները, քանի որ քննու-

<sup>13</sup> Мишин А. А. Конституционное право зарубежных стран., М., 1998 с 221.

<sup>14</sup> Հ. Խաչատրյան Պառլամենտ և պատգամավոր: Երևան 1994 էջ 44:

թյան իրականացման ընթացակարգային ամբողջ շղթան իր փուլերով կրում է և՛ նախաձեռնողական, և՛ տեղեկատվական, և՛ ուղեկցող, և՛ հաջորդող, և՛ կանխիչ, և՛ որոշիչ /ռեզոլյուտիվ/, դրան ավելացրած նաև՝ քաղաքական բնույթ:

Պաշտամենտական քննիչ հանձնաժողովների ստեղծման միջոցով գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացման արդյունավետությունը բավականին ցածր է կառավարման կիսանախագահական ձևի երկրներում, քանի որ չնայած կառավարության պաշտամենտական պատասխանատվության ինստիտուտի առկայությանը /այդ պատասխանատվությունը երկակի է՝ պաշտամենտի առջև՝ և պետության գլխի առջև/ իրականում այն չեզոքացվում է նախագահին սատարող պաշտամենտական մեծամասնության գոյության փաստով, որն էլ օրենսդիր մարմնում արգելափակում է քննություն իրականացնելու նպատակ հետապնդող հանձնաժողովների ստեղծման վերաբերյալ ընդդիմության բոլոր առաջարկությունները: Այսպես, ուսումնասիրելով **Ֆրանսիայի** 5-րդ Հանրապետության սահմանադրական արակտիկայում հատուկ հանձնաժողովների ստեղծման հաճախականությունը, **Քերիմովը** նկատում է, որ պաշտամենտական վերահսկողության այդ ձևը երկրում նշանակալի զարգացում չի ապրել<sup>15</sup> և հիմնականում դրա պատճառն այն է, որ գործադիր իշխանությունը հատուկ հանձնաժողովների ստեղծմամբ շահագրգռված չէ<sup>16</sup>:

**Ռուսաստանի Դաշնությունը** գիտակցելով պաշտամենտական քննությունների ինստիտուտի կարևորությունը երկրի պետական մեխանիզմի արդյունավետության ապահովման գործում 2005 թ.-ի դեկտեմբերի 27-ին ընդունված «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի պաշտամենտական հետաքննության մասին» օրենքով<sup>17</sup> հատուկ ամրագրել է կառավարության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու Դաշնային ժողովի իրավունքը քննիչ կոմիտեների գործունեության միջոցով: Սակայն, համեմատելով Պետական Դումայի վերահսկողական լիազորությունների ծավալը, գործադիր իշխանության նկատմամբ այլ

երկրների պաշտամենտների հետ հատկապես քննություն իրականացնելու և քննիչ հանձնաժողովներ ստեղծելու առումով, ռուս մասնագետներից ոմանք<sup>18</sup> այն սահմանափակ են համարում և փաստում, որ այդ ուղղությամբ վիճակը բարելավելու համար դեռ շատ անելիք կա երկրում:

**Իմփիչմենթի ընթացակարգով վարույթի հարուցումը.** սա պաշտամենտական վերահսկողության յուրահատուկ ձև է, որը գործադրվում է հատկապես պետության գլխի նկատմամբ և սահմանադրական իրավունքում իր այսօրվա նշանակությամբ հիմքում ունի պետության գլխին պաշտոնանկ անելու նպատակը: Գործնականում վերահսկողության այս ձևն իր տեսակով վերաբերելի է պաշտամենտական քննության ձևին, սակայն ունի կոնկրետ առանձնահատկություն. Կիրառվում է բացառապես նախագահական և կիսանախագահական հանրապետությունների պետության գլուխների նկատմամբ: Պատմականորեն իմփիչմենթի վարույթի հարուցումը ծագել է **Անգլիայում** 16-րդ դարում, որը կիրառվում էր անգլիական պաշտամենտի Համայնքների պալատի կողմից թագավորական պաշտոնյաներին Լորդերի պալատի դատին հանձնելու միջոցով նրանց կամայականություններից պաշտպանվելու նպատակով: Իսկ աշխարհում առաջին անգամ իմփիչմենթի ընթացակարգը պետության գլխի նկատմամբ կիրառվել է իր տրամաբանական ավարտին է հասցվել դարձյալ **Անգլիայում** 1649 թ.-ի հունվարին այդ երկրի թագավոր **Կառլոս 1-ի** գլխատման փաստով: **Անգլիայից** այդ ընթացակարգն անցել է ԱՄՆ Սահմանադրության մեջ և այսօր իր գուտ տեսքով արտացոլում է Կոնգրեսի իրավունքը «դատելու» երկրի նախագահին, փոխնախագահին և դաշնային ցանկացած այլ պաշտոնյայի, եթե վերջիններս իմփիչմենթի կարգով մեղավոր ճանաչվեն պետական դավաճանության, կաշառակերության կամ այլ ծանր հանցագործությունների ու հանցանքների համար /հոդված 2, բաժին 4/<sup>19</sup>: Հետաքրքիր է, որ 1789թ.-ից սկսած ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը մոտ 50 անգամ հանդես է եկել իմփիչմենթի կարգով

<sup>15</sup> **А. Д. Керимов** Парламентское право Франции., М., 1998 с 64 .

<sup>16</sup> **А. Д. Керимов** Նշվ. աշխ. էջ 65.

<sup>17</sup> **Л.А. Нудненко** К истории разработки и принятия федерального закона “О парламентском расследовании Федерального Собрания Российской Федерации”. “Государство и право”: No 8 / 2008 с. 7.

<sup>18</sup> **В. Е. Чиркин** Конституционное право: Россия и зарубежный опыт., М., 1998 с 359, А.А. Керимов Парламентаризм в современной России: Особенности становления и развития. Автореф. дис. канд. полит. Наук. Екатеринбург 2006 с 4.

<sup>19</sup> **Հ. Խաչատրյան** Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը: Երևան 1991 էջ 110:

վարույթ սկսելու նախաձեռնություններով, բայց միայն 12 դեպքով է գործը հասել Սենատին, /եթե իմփիչմենթի կարգով վարույթ հարուցելու իրավունքը Ներկայացուցիչների պալատին է պատկանում, ապա մեղադրանքների հաստատման իրավունքը վերապահված է Սենատին/ որը, համաձայն Սահմանադրության, այդ դեպքերում հանդես է գալիս որպես «դատարան»<sup>20</sup>: Իմփիչմենթի վարույթն, ըստ էության, արտադատական պատասխանատվության հատուկ տեսակ է, որի հարուցումը մտնում է օրենսդիր բարձրագույն մարմնի բացառիկ իրավասության մեջ և անմիջական սահմանադրական հետևանքը պետության գլխի պաշտոնանկությունն է, ինչից հետո նրա նկատմամբ կարող է սկսվել նաև քրեական հետապնդում: **Ռուսաստանի Դաշնության** 1993 թ.-ի գործող Սահմանադրությունն, ի թիվս այլ երկրների, 93-րդ հոդվածով նույնպես նախատեսել է պետության գլխի նկատմամբ իմփիչմենթի ընթացակարգով վերահսկողություն իրականացնելու Դաշնային ժողովի իրավունքը, որը կարող է իրականացվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հատկանիշներով նախագահի դեմ պետական Դունայի կողմից առաջադրված մեղադրանքների հիման վրա և պետք է ամրագրված լինի համապատասխանաբար ՌԴ նախագահի գործողություններում հանցագործության հատկանիշների առկայությունը հաստատող ՌԴ Գերագույն դատարանի և մեղադրանքի առաջադրման համար սահմանված ընթացակարգի կանոնների պահպանման վերաբերյալ ՌԴ սահմանադրական դատարանի եզրակացություններով<sup>21</sup>: Ընդ որում, ՌԴ նախագահին արտադատական կարգով պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը վերը նշվածից բացի պարունակում է ևս մի հավելյալ օղակ՝ այն է, որ Պետական Դունայի կանոնակարգի 117-րդ հոդվածով սահմանված կարգով նախագահի դեմ մեղադրանքներ առաջադրելու մասին առաջարկությունն ուղարկվում է Պետական Դունայի կողմից համամասնության հիմունքներով ստեղծված հատուկ հանձնաժողովին /ստեղծվել է Պետական Դունայի 1998 թ.-ի հուլիսի 19-ի կայացված որոշմամբ/, որի խնդիրը մեղադրանքների առաջադրմանը ներկայացվող ընթացակարգային կանոնների պահպանման և այդ մեղադրանքների հիմնավորվածության ստուգումն է<sup>22</sup>:

Ներկայումս, իմփիչմենթի ընթացակարգը որոշակի փոփոխություններով ու լրացումներով ընդունված է շատ երկրների պառլամենտների, այդ թվում նաև ԳՀ Ազգային ժողովի կողմից: Այդ համատեքստում պետք է ավելացնել, որ իմփիչմենթի կարգով նախագահական և հատկապես կիսանախագահական երկրների պետության գլուխներին իրենց երկրների հիմնական օրենքներով պաշտոնանկ անելու ընթացակարգը խիստ բարդացված է, իսկ հաջող ելքը՝ գրեթե անհնարին:

Ներկայումս իմփիչմենթի ընթացակարգը որոշակի փոփոխություններով ու լրացումներով ներմուծված է շատ երկրների պառլամենտների, այդ թվում նաև ԳՀ Ազգային ժողովի լիազորությունների մեջ: ԳՀ 2005թ.-ի խմբագրությամբ գործող Սահմանադրության 57-րդ հոդվածը սահմանում է, որ ԳՀ Նախագահը **կարող է /ընդգծումը մերն է/** պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար: Ընդ որում նախ. Ազգային ժողովը պաշտոնանկության հարցի վերաբերյալ իր անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ ընդունված որոշմամբ պետք է դիմի ԳՀ սահմանադրական դատարան և միան դրանից հետո այդպիսի եզրակացության առկայության պայմաններում նախագահին պաշտոնանկ անելու վերաբերյալ վերջնական որոշում կայացնի իր անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Պետք է ասել, որ ԳՀ նախագահի պաշտոնանկության հիմքերն ամրագրող սահմանադրական նորմը բավականին տարօրինակ ձևակերպում ունի թեկուզ և այն պատճառով, որ ԳՀ քրեական օրենսգրքը բացի «**ծանր հանցագործություններ**» եզրույթից նախատեսում է նաև հանցագործությունների այնպիսի խումբ, որոնք բնութագրվում են որպես առանձնապես ծանր /ԳՀ քր. օրենսգրքը, հոդվ. 19/: Ստացվում է, որ ԳՀ նախագահին կարելի է պաշտոնանկ անել միայն ծանր հանցագործությունների համար, մինչդեռ առանձնապես ծանր հանցագործությունների համար ոչ: Սա ակնհայտ բացթողում է և մեր համոզմամբ անհրաժեշտ է ԳՀ Սահմանադրության 57-րդ հոդվածը վերաշարադրել այնպես, որ նախագահի պաշտոնանկության հիմքերի մեջ ներառվի նաև «**առանձնապես ծանր հանցագործություններ**» եզրույթը: ԵՎ ընդհանրապես, հարկ է ավելացնել ԳՀ նախագահին սահմանադրական պատաս-

<sup>20</sup> Impeachment. Selected materials. Wash. 1973 p. 125.

<sup>21</sup> Конституция Российской Федерации., М., 1996 с 26.

<sup>22</sup> **О. Н. Булаков, И.Н. Рязанцев** Парламентское право России; курс лекций. М., 2007 с 78.

խանատվության ենթարկելու հիմքերի ցանկը, հաշվի առնելով նաև այն սկզբունքը, որ ինչքան նշանակալից են լիազորությունները, այնքան էլ մեծ պետք են լինի վերահսկողությունը դրանց իրականացման նկատմամբ<sup>23</sup>:

**Կառավարությանն անվտանգություն հայտնելը պարսավանքի բանաձևի միջոցով կամ վստահության քվե չտրամադրելը.**

Սա կարելի է ասել պառլամենտական վերահսկողության բարձրագույն ձևն է և մինչույն ժամանակ դրա արդյունքը, որը դրսևորվում է որպես հետևանք պառլամենտական վերահսկողության այլ ձևերի: Գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության այս ձևն ըստ էության քաղաքական պատասխանատվության միջոց է: Հետևապես տեղին է ասել, որ կառավարության քաղաքական պատասխանատվության ընթացակարգի կիրառումը կարող է դառնալ վերջինիս նկատմամբ վերահսկողական մեխանիզմների օգտագործման արդյունքը<sup>24</sup>: Այսինքն՝ վերահսկողության այս ձևն իր ներքին բովանդակությամբ տեղավորվում է կառավարության քաղաքական պատասխանատվության ինստիտուտի շրջանակներում: Ընդ որում, կառավարության պատասխանատվությունը, որպես կանոն, կրում է կոլեկտիվ բնույթ, այսինքն տարածվում է կառավարության ամբողջ կազմի վրա, ինչպես օրինակ **Ֆրանսիայում**, **Իսպանիայում**, **Ճապոնիայում**: Բայց այն կարող է լինել նաև անձնավորված /ինդիվիդուալ/ և տարածվել կառավարության կոնկրետ անդամի նկատմամբ, ինչպես օրինակ **Իտալիայում**, **Հնդկաստանում**: Սակայն պետք է ասել, որ պատասխանատվության այս տեսակը բավականին հազվադեպ է կիրառվում<sup>25</sup>: Կառավարության պատասխանատվությունն ունի դրսևորման երկու ձև՝ **առաջինն** անվտանգության հայտնումն է, իսկ **երկրորդը**՝ վստահության քվեի չտրամադրումը: Այդ երկու ձևերն իրարից տարբերվում են նրանով, որ անվտանգության հայտնումը, որը մի շարք երկրներում կրում է նաև պարսավանքի բանաձև անվանումը, իրականացվում է անմիջականորեն պատգամավորների նախաձեռնությամբ, մինչդեռ վստահության քվեի չտրամադրումը կարող է իրականացվել միայն կառավարությունն կողմից իր վստահության հարցն օրենսդիր բարձրագույն մարմնի առջև դնելու կապակցությամբ: Վեր-

ջինս կիրառվում է, որպես կանոն, պառլամենտական և կիսանախագահական երկրներում, բայց իր նշանակությանը նվազ արդյունավետ է հատկապես այն երկրներում, որտեղ կառավարությունը հենվում է պառլամենտում իրեն սատարող կայուն մեծամասնության վրա: Եվ բացի այդ, կառավարությունն իր վստահության հարցը պառլամենտում դնում է կոնկրետ հանգամանքների կապակցությամբ /բյուջեի, կառավարության հեղինակած որևէ օրինագծի, գործունեության ծրագրի ընդունման և այլն/, որը կարող է ուղեկցվել վստահության քվե չտրամադրելու դեպքում պառլամենտն արձակելու անթաքույց սպառնալիքով: Այդ համատեքստում պետք է ասել, որ պառլամենտական ժամանակակից պրակտիկայում կառավարությանը հանգստի ուղարկելը վստահության քվե չտրամադրելու արդյունքում բավականին հազվադեպ տեղի ունեցող երևույթ է և որպես կանոն ավելի հաճախ դրան «զոհ» են դառնում կոալիցիոն կառավարությունները /օր. **Իտալիայում**:/

Պարսավանքի բանաձև անվանումով կառավարությանն անվտանգություն հայտնելու ուղղակի նորմ է պարունակում **Ֆրանսիայի** գործող Սահմանադրության 49-րդ հոդվածը, որը կարող է քվեարկության դրվել Ազգային ժողովի անդամների առնվազն 1/10-ի կողմից առաջադրվելու դեպքում, իսկ դրա չընդունման դեպքում նմանատիպ բանաձև նույն նստաշրջանի ընթացքում այլևս չի կարող առաջադրվել<sup>26</sup>: Կառավարությանն անվտանգություն հայտնելու համար ՀՀ Սահմանադրությունն ավելի «կոշտ» կանոններ է սահմանել իր 84-րդ հոդվածում, ըստ որի այդպիսի որոշման նախագիծ կարող է դրվել քվեարկության միայն այն դեպքում, եթե այն ստորագրվել է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի կողմից: Հետաքրքիր է, որ 2005թ.-ի նոյեմբերյան փոփոխություններով գործող ՀՀ Սահմանադրությունը նույն հոդվածով ՀՀ նախագահին նույնպես օժտել է կառավարության նկատմամբ Ազգային ժողովում անվտանգության բանաձև ներկայացնելու իրավունքով:

Այսպիսով, պարսավանքի բանաձևի ընդունումը տարբեր երկրներում ամրագրված է սահմանադրական այնպիսի ձևակերպումներով, որոնք նպատակ ունեն պաշտպանել կառավարությանը վերահսկողության այդ ձևից:

<sup>23</sup> **Трофимова Г.А.** Основания конституционно-правовой ответственности Президента РФ; “Конституционное и муниципальное право” N 1/2011 с. 18.

<sup>24</sup> **Алебастрова И. А.** Конституционное право зарубежных стран. М., 2008 с 336.

<sup>25</sup> **Мишин А. А.** Конституционное право зарубежных стран. М 1998 с 218

<sup>26</sup> Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությունը. Երևան 1996 էջ 71:

**Վերահսկողության իրականացումը կառավարության կազմավորման ընթացքում** - Պաշտամենտական հանրապետություններում և կիսանախագահական հանրապետություններում մեծ մասում իր նշանակման ժամանակ կառավարությունը պետք է ստանա օրենսդիր բարձրագույն մարմնի վստահության քվեն: Որոշ երկրներում կառավարության ղեկավարին պետության գլուխը ձևականորեն նշանակում է ինքնուրույն կերպով, սակայն այդ անելիս նախագահը կաշկանդված է օրենսդիր բարձրագույն մարմնի կամքով, քանի որ հակառակ դեպքում կառավարությունը չի կարող օգտվել վերջինիս վստահությունից: **Իսպանիայում** օրինակ նորանշանակ կառավարությունը համաձայն այդ երկրի 1947 թ.-ի գործող Սահմանադրության 94-րդ հոդվածի պետք է ստանա պաշտամենտի երկու պալատների վստահության քվեն, իսկ **Ֆրանսիայում** դրա անհրաժեշտությունն առաջանում է միայն պաշտամենտի ստորին պալատի Ազգային ժողովի առջև: **Իսպանիայի** կառավարության նախագահը /Իսպանիայում կառավարության գլուխն այդպես է անվանվում/ նշանակվում է թագավորի կողմից այն դեպքում, եթե նախօրոք կստանա պաշտամենտի անդամների մեծամասնության օժանդակությունը /Սահմանադրության 99-րդ հոդվածի 3-րդ մաս/<sup>27</sup>: Դրանցից բացի այլ երկրների սահմանադրական պրակտիկայում գոյություն ունի նաև վերը նկարագրվածից տարբերվող այլ եղանակ՝ երբ կառավարության գլխին որոշում է ինքը պաշտամենտը, իսկ պետության գլուխն արդեն դրանից հետո իր հրամանագրով նշանակում է վերջինիս: **Գերմանիայում** Բունդեսբազն ինքն է ընտրում երկրի կանցլերին, որից հետո միայն նախագահն իր հրամանագրով նշանակում է և՛ վերջինիս, և՛ նրա առաջարկությամբ նաև դաշնային կառավարության անդամներին /ԳԴՀ Սահմանադրության 63-րդ հոդված, 64-րդ հոդվածի 1-ին մաս/: Գրեթե նույն ընթացակարգն է գործում նաև **Ճապոնիայում**, որտեղ պաշտամենտի պալատներն իրենց կազմից առաջադրում են վարչապետին, որից հետո այդ նշանակումը ստանում է Կայսերական հաստատում /Ճապոնիայի Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս/<sup>28</sup>: Կան նաև այնպիսի երկրներ, որտեղ պետության գլուխն ընդհանրապես որևէ մասնակցություն չի ունենում վարչապետի նշա-

նակման հարցում: **Շվեդիայի** օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Ռիկստագի նախագահն, օրինակ, հայտարարում է երկրի վարչապետի նշանակման մասին պաշտամենտի ներսում անցկացված ընտրությունների արդյունքում, որը հետագայում այդ երկրի միապետի կողմից նույնիսկ ձևական նշանակման ակտի անհրաժեշտություն չի առաջացնում<sup>29</sup>: Կառավարման նախագահական ձևի երկրներում, որտեղ կառավարության գլխի և պետության գլխի պաշտոնները նույնացվում են նախագահի ինստիտուտում, պաշտամենտի մասնակցությունը գործադիր իշխանության գլխի ձևավորման հարցում հասցված է նվազագույնի և հետևաբար այստեղ կառավարության կազմավորման հարցում դրսևորվող պաշտամենտի վերահսկողության արդյունավետությունը բավականին ցածր է: Այսպես օրինակ, նախագահական հանրապետության դասական օրինակ համարվող **ԱՄՆ** նախագահն ընտրվում է ընտրիչների կոլեգիայի կողմից և կոնգրեսը զբաղվում է միայն նախագահի ընտրություններին մասնակցած քաղաքացիների ձայների հաշվարկման գործով և միայն այն դեպքում, երբ ընտրվելու համար թեկնածուներից ոչ մեկը ձայների բացարձակ մեծամասնություն չի հավաքում, Կոնգրեսի Ներկայացուցիչների Պալատն ընտրում է երկրի նախագահին, իսկ Սենատը՝ փոխնախագահին: Դրան հակառակ, պաշտամենտական կառավարման ձևն ընտրած երկրներում օրենսդիր բարձրագույն մարմինների մասնակցությունը պետության գլխի ընտրությանը ոչ միայն ձևական չէ, այլև ամենաուղակի ձևով արտահայտվում է կամ պաշտամենտի կամ նրա մասնակցությամբ լայն կազմով կոլեգիայի կողմից պետության գլխի ընտրության փաստով: Այսպես օրինակ, Գերմանիայի Դեպուտատների պալատն այդ երկրի Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրում է երկրի նախագահին իր լիազումար նիստերից մեկի ժամանակ: Իսկ **Յնդկաստանում** նախագահն ընտրվում է հատուկ կոլեգիայի կողմից, որի կազմի մեջ են մտնում պաշտամենտի երկու պալատների ընտրված ներկայացուցիչները, ինչպես նաև այդ երկրի վարչատարածքային միավորների նահանգների օրենսդիր մարմինների ներկայացուցիչները /Յնդկաստանի 1949թ.-ի գործող Սահմանադրության 54-րդ, 55-րդ հոդվածներ/:

<sup>27</sup> Տես. <http://worldconstitutions.ru> Конституция Испании; էլեկտրոնային կայքը:  
<sup>28</sup> Տես <http://worldconstitutions.ru/> Конституция Японии;  
<sup>29</sup> Տես էլեկտրոնային իրավական պորտալ, [/www.sweden4rus.nu/rus/info/juridisk/konstitucija\\_shvecii.asp](http://www.sweden4rus.nu/rus/info/juridisk/konstitucija_shvecii.asp)

# ԻՐԱՎՈՒՆՔԻ «ՀԵՏԴԱՍԱԿԱՆ» ՀԱՍԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐԶ

**Յուրի ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ասպիրանտ

*Վերջին ժամանակներս թե՛ արևմտյան և թե՛ ռուսական գրականության մեջ խոսվում է, այսպես կոչված, իրավունքի «հետդասական» հասկացության մասին<sup>1</sup>:*

*Իրավունքի հետդասական ուղղության ճանաչված մասնագետ, դոկտոր Ռ. Ալեքսիի կարծիքով. «Իրավունքը նորմերի համակարգ է, որը 1. պարունակում է ճշմարտության հավակնություն, 2. բաղկացած է նորմերի համագումարից, որոնք պատկանում են սոցիալապես գործող սահմանադրությանը և չեն հանդիսանում չափազանց անարդար, ինչպես նաև այդ սահմանադրությամբ հաստատված նորմերի համագումար, որոնք օժտված են սոցիալական գործնականության նվազագույնով, կամ նման գործնականության հնարավորությամբ և չեն հանդիսանում չափազանց անարդար; և վերջապես 3. ներառում է սկզբունքներ և նորմատիվ փաստարկներ, որոնց վրա հիմնված է իրավակիրառման ընթացակարգը, որպեսզի համապատասխանի ճշտության հավակնությանը»<sup>2</sup>: Մեկ այլ գերմանացի ուսումնասիրող՝ իրավունքի սոցիոլոգ Ռ. Գեբհարդը, առաջարկում է իրավունքի սոցիոմշակութային սահմանում և առանձնացնում է նրա չորս հատկանիշ. նորմատիվությունը /իրավունքը՝ որպես նորմերի համակարգ/, իրավունքի կազմակերպվածությունը, այսինքն՝ նրա կազմակերպչական ասպեկտը /արտահայտվում է պետական ապարատի մեջ, որն ապահովում է պարտադրությունը/, իրավունքի սիմվոլիզմը՝ նրա խորհրդանշային ասպեկտը /իրավունքը՝ որպես կոլեկտիվ գիտակցության տարր/, և գործնականությունը և ծիսականությունը իրավունքը՝ որպես գործողություն և ծես<sup>3</sup>:*

Չխորանալով ներկայացված տեսակետների իրավաչափության մեջ՝ նկատենք, որ նրանցից բոլորը միտված են իրավունքի ինտեգրացմանը<sup>4</sup>, իրավունքի տարբեր ասպեկտների դիալեկտիկ միավորմանը: Նման փորձերը կարելի է միայն ուղջունել, եթե դրանք չեն վերածվում մեխանիկական էլեկտիկայի:

Եթե դիտարկենք իրավունքը որպես

բարդ, բազմակողմ երևույթ, ապա նրա տարբեր դրսևորումները և գոյության մոդուսները (**Լ.Ս. Մամուտի խոսքերով**) կարող են ընդգրկվել չորս հատկանիշներով:

**Իրավունքի առաջին հատկանիշը**, որտեղ համընկնում են գրեթե բոլոր գիտնականների կարծիքը, հանդիսանում է նրա նորմատիվությունը: Նորմատիվությունը նշանակում է, որ իրավունքը իրենից ներկայացնում է,

<sup>1</sup> Սամրանյան տե՛ս **Честнов И.Л.** Постклассическая теория права. СПб., 2012.

<sup>2</sup> Алекси Р. Понятие и действительность права (ответ юридическому позитивизму). М. 2011. С. 3-4.

<sup>3</sup> Gephart W. Recht als Kultur Zur kultursoziologischen Analyse des Rechts. Frankfurt /Main, 2006, էջ 106-107.

<sup>4</sup> **Поляков А.В.** Прощание с классикой, или как возможна коммуникативная теория права. Российский ежегодник теории права, И1, 2008, СПб, 2009.с. 10-11.

նախ և առաջ, սոցիալական նորմերի՝ վարքի կանոնների համագումար, որոնք կարգավորում են մարդկային հարաբերությունները<sup>5</sup>: Նորմատիվությունը դրսևորվում է հաղորդականության մեջ՝ այդ ինտեգրացիաների ընթացքում ծագած համաձայնությամբ միավորված մարդկանց փախգործակցության: Նորմատիվությունը նշանակում է, որ իրավունքը կարգավորում է ոչ առանձին, սակայն տարածված և կրկնվող կենսական

համար, թե դրա համար նախադրյալ է հանդիսանում համապատասխան անձի համապատասխան գիտելիքները և մոտիվները: Եթե հիմք ընդունենք վերջինը, ապա խնդիր է առաջանում, թե ինչպիսի՞ գիտելիքների և ինչպիսի՞ մոտիվների առկայությունը թույլ կտա խոսել որևէ նորմին հետևելու մասին: **Երկրորդ պատճառը կայանում է նրանում**, որ որոշակի նորմ կարող է պահպանվել որոշակի ծավալով, ինչը նույնպես ճիշտ

**«...Իրավունքի առաջին հատկանիշը՝ նրա նորմատիվությունն է...»**

է վավերացման նկատմամբ նրա խախտման դեպքում: Դրա արդյունքում սոցիալական

իրավիճակներ, և դրական գնահատված գործողություններ և իրադրություններ: Իրավունքի նորմատիվությունը պրևնտյան իրավաբանական գրականության մեջ նշվում է գործնականություն կամ իրականություն տերմինով: «Իրականություն» տերմինը առավել համահունչ է նորմի գոյությանը /թեև, եթե էլենք պրագմատիկ մեթոդաբանությունից, ապա այս երկու տերմինները հանդես են գալիս որպես հոմանիշ և նշանակում են գրեթե նույն բանը: Իրավունքի գոյությունը հենց արտահայտվում է նրա գործնականության մեջ: Նորմատիվիզմում շեշտվում է իրավունքի նորմի իրավաբանական ուժի տեսակետից, ինչը վերաբերում է մեծ չափով նրա ձևական ասպեկտին:

գործնականությունը և դրանով իսկ նորմի սոցիալական իրականությունը կարող է հասնել տարբեր մակարդակների:

Քանակային չափանիշը այստեղ չի օգնելու, մանավանդ, որ հաշվարկել արգելիչ նորմերի հետևությունների քանակը հնարավոր չէ: Քանի՞ անգամ ենք մենք օրվա ընթացքում հետևում քրեական օրենքագրքին /խոսքը գնում է իրավապաշտ բնակչության մասին/: Մեկ անգամ, հարյուր անգամ, թե պետք է խոսենք իրավունքի հետևության մասին ամեն րոպե: Հետևությունները չափվում են միայն հակադարձ մեթոդով՝ իրավախախտումների քանակով: Մյուս կողմից, եթե քրեական օրենքագրքի որևէ հոդված պրակտիկայում տարվա ընթացքում չի կիրառվում /իսկ այդպիսիները գոյություն ունեն/, չի վկայում դա արդյո՞ք նրանց ապաքրեականացման անհրաժեշտության մասին: Վերնշվածից ելնելով՝ հնարավոր է եզրակացնել. իր նորմատիվությունը նշանակում է վարքի համապատասխան կանոնի տարածվածություն: Ճիշտ է, դա բավական լայն չափանիշ է, սակայն այն ոչնչով չի զիջում էլ ավելի սահմանված չափանիշներին՝ «բացահայտ ամարդարություն», այսինքն, երբ ամարդարությունը, «զերազանցում է որոշակի սահմանը»<sup>6</sup>:

«Իրականության ասպեկտի ներմուծումը իրավունքի հասկացության մեջ նշանակում է այդ հասկացության մեջ ինստիտուցիոնալ իրավաստեղծման համատեքստի ներմուծում՝ իրավունքի կիրառում և իրավունքի իրագործում»,- գրում է **Ռ. Ալեքսին**: Միաժամանակ այստեղ խնդիր է առաջանում, իրավունքի նորմին հետևելու տերմինների բազմանշանակության, և իրավունքի սոցիալական իրականությունն արտահայտող վավերացումների կիրառումը: «Այսպես, կարելի է հարցնել, հանդիսանում է արդյո՞ք արտաքին վարքը, որը համապատասխանում է որոշակի նորմին, բավարար՝ նրան հետևելու

Տարածվածության չափանիշը, որպես իրավունքի նորմատիվության հատկանիշ,

<sup>5</sup> Դրանով սոցիալական նորմերը տարբերվում են տեխնիկական նորմերից, որոնք կարգավորում են մարդկանց և տեխնիկայի հարաբերությունները: Իրավունքը ամրագրում է նման տեխնիկական կանոններ միայն այն դեպքում, երբ պոտենցիալ կրում են սոցիալական նշանակություն: Այսինքն տեխնիկական կանոնները վերածվում են սոցիալակն նորմի:

<sup>6</sup> **Алекси Р.**, նշվ. աշխ, էջ 32-33, **Радбрух Г.** Философия права. М., 2004, с. 234.



լրացվում է գնահատող ասպեկտով<sup>7</sup>: Դա բխում է սոցիոհումանիտար գիտելիքներում լեզվաբանական շրջադարձից: Մարդու ցանկացած գործողություն ուղեկցվում է նրա գնահատականով /և մարդու հոգեբանական ակտիվության այլ տեսակներով՝ մոտիվներ, հետաքրքրություններ, կարծրատիպեր, կարգադրություններ և այլն/: Ուստի իրավունքի գնահատականը՝ որպես արդար և անարդար մտնում է իրավունքի նորմատիվության մեջ: Հետևաբար՝ Ռ. Ալեքսիի առաջարկած իրավունքի հատկությունը՝ որպես «ճշմարտության հավակնություն» վերաբերում է իրավունքի նորմատիվությունը<sup>8</sup>:

Այս հարցում շատ ավելի ընդունելի է **Յու. Հաբերմասի** տեսակետը, որը ձևավորում է «նշանակության հավակնությունը» որպես նորմատիվության արդարացման չափանիշ և հաղորդականության բնութագիր: «Հաղորդական են ես անվանում այնպիսի ինտերակցիաներ, -գրում է Հաբերմասը, -որոնցում նրա մասնակիցները համաձայնեցնում և կոորդինացնում են իրենց գործողությունների ծրագիրը: Ընդ որում, այս կամ այն դեպքում ձեռք բերված համաձայնությունը չափվում է նշանակության հավակնության ինտերսուբյեկտային ճանաչմամբ: Այն դեպքում, երբ փոխհամաձայնեցման պրոցեսները ընթանում են էքսպլիցիտ վերբալ ձևով, հեղինակները (դերասանները) խոսելով իրար հետ, իրենց խոսքային գործողություններով առաջ են քաշում նշանակության հավակնություն, հենց իրենց իսկ խոսքերի ճշմարտության, ճշտության հավակնությունը»<sup>9</sup>: Կառուցելով նորմերի արդարացման և հիմնավորման իր հայեցակարգը՝ որպես նշանակության հավակնու-

թյուն ձեռք բերելու միջոց, Յու. Հաբերմասը նկատում է. «Այս կամ այն նորմի երկարատև հաստատունը կախված է նաև նրանից, թե կարելի՞ է ավանդույթների տվյալ համատեքստում բավարար հիմնավորումներ բերել, որպեսզի դրանց հասցեատերերի միջավայրում համապատասխան հավակնությունը գոնե արդարացված երևա: Ժամանակակից հասարակությունների նկատմամբ կիրառությանը դա նշանակում է. չկա լեգիտիմություն, չկա զանգվածների լոյալություն»<sup>10</sup>:

Իրավունքի նորմատիվության գնահատող ասպեկտը արտահայտվում է **իրավունքի լեգիտիմության** մեջ և այսօր կատարում է առաջատար դեր՝ զլոբալացման և մոլտիկուլտուրալիզմի հետ կապված /չնայած այդ քաղաքականության անկմանը/: Իրավունքի լեգիտիմության խնդիրը, ինպես նաև նրա ճանաչումը բնակչության կողմից, առանձին լայնածավալ թեմա է՝ ինքնուրույն ուսումնասիրության համար: Գոյություն ունի իրավունքի լեգիտիմության մի քանի փիլիսոփայիրավական հայեցակարգեր: Դասական գիտաբանության տեսակետից դրանցից առավել տարածվածներից է բնական իրավունքի տեսությունը: Այսօր այն բխում է իրավունքի և բարոյականության անհրաժեշտ «տերմինաբանական» կապից: Այսպես, Ռ. Ալեքսիին ամրում է, որ բարոյականությունը մտնում է իրավական համակարգ իրավունքի սկզբունքների միջոցով: Ընդ որում, իրավունքի սկզբունքներն էլ հանդիսանում են գերիշխող բարոյագիտություն<sup>11</sup>: Հիմնական իրավունք հանդիսացող բարոյագիտական սկզբունքները ներկայանում են «իրավունքի կայսրությունում» «բարձ-

<sup>7</sup> Իրավունքի իրականությունը, Ալեքսիի կարծիքով, ներառում է արտաքին ասպեկտը, որը բաղկացած է նրա հետևության հաճախականությունից և նրա խախտման վավերացումների դեպքում, և ներքին, որը կապված է նրա հետևության կամ կիրառման մոտիվացիայի հետ: **Алекси Р.**, մշվ. աշխ., էջ 17-19:

<sup>8</sup> «Համաձայն ճշտության փաստարկի՝ որպես առանձին իրավական նորմեր և առանձին իրավական որոշումներ, այնպես էլ իրավական համակարգերն ընդհանրապես պարտադիր օժտված են ճշտության հավակնությամբ»: **Алекси Р.**, Նշվ. աշխ., էջ 43:

<sup>9</sup> **Хабермас Ю.**, Моральное сознание и коммуникативное действие. М., 2000, с. 91.

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 97-98.

<sup>11</sup> «Պրակտիկ հարցի լուծման համար նշանակալի սկզբունքներից միշտ կարելի է գտնել այնպիսիները, որոնք վերաբերում են ինչ-որ բարոյագիտության» **Алекси Р.** Указ. соч. с. 95-96; **Харт Г.Л.А.** Понятие права. СПб, 2007. С. 204.

րագույն մակարդակով» **Ռ. Դվորկինի** մոտ<sup>12</sup>: Սակայն, ինչպես ապացուցեց **Ա. Մակինտայրը**, «Ռացիոնալ վեճի վերջնական լուծման համար անհրաժեշտ կլինեն դիմել այնպիսի մորմի կամ մորմերի հանրագումարի, որոնց հեղինակությունը ոչ մի ռացիոնալ մտածող չէր կարող ժխտել<sup>13</sup>: Պատահական չէ, որ **Ռ. Դվորկինը** գրում է, որ Սահմանադրության հիմքում ընկած ստանդարտների անորոշությունը անխուսափելիորեն առաջ է բերում տարակարծություններ<sup>14</sup>: Ուստի «իրավունք» բառը տարբեր համատեքստերում ունի տարբեր «գորություն»<sup>15</sup>: Այսպիսով՝ բարոյագիտական փաստարկներում սկզբունքների առումով միշտ հնարավոր են չհամընկնող դիրքեր, ընդ որում այնքան հակադիր, որ չեն ենթադրում անգամ փոքր-ինչ համաձայնություն: Դա, մասնավորապես, արտահայտվում է, գրեթե բոլոր սոցիալական կատեգորիաների էական վիճարկելու-

աշխարհում համընդհանուր բարայագիտության հիմքի վրա ձևավորված լեգիտիմությունը հնարավոր չէ (դրա վառ ապացույցը Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններն են՝ կրոնական և ազգային հողի վրա):

Լեգիտիմության այլ տարբերակը հիմնված է հետմետաֆիզիկական մտածողության վրա<sup>17</sup>: Մոդեռնի նախագծի կողմնակիցները հիմնական հույսը կապում էին ձևական ռացիոնալականության հետ: Նրանք ելնում են նրանից, որ ժամանակակից աշխարհում հնարավոր չէ հիմնավորել որևէ բովանդակային գիտելք՝ գոյաբանական և իմացաբանական ռեյալիստիկ մի պատճառով: Նրա էությունը կայանում է նրանում, որ սոցիալական աշխարհը հոսում է, փոփոխական, ենթակա է մշտական Ֆլուկտուացիաների, որոնք ավելի ու ավելի են շատանում հետինդուստրիալ հասարակու-

**«...Նորմատիվությունը նշանակում է նաև վարքի համապատասխան կանոնի տարածվածություն...»**

թյան դարշրջանում, ուստի և հնարավոր չէ «հաստատագրված» գիտելիքը նման հասարակության մասին: Նման դրույթից, օրինակ, բխում է իրա-

թյան մեջ՝ ներառյալ իրավունքի սկզբունքները: Այնպիսի հասկացություններ, ինչպես **ազատություն, արդարություն, դեմոկրատիա**, հանդիսանում են բազմապլան հասկացություններ, կրում են գնահատող բնույթ, ուստի նրանց բովանդակության մասին բանավեճն անբովանդակակից է. գրեթե ցանկացած տեսակետ կարելի է ինչպես հիմնավորել, այնպես էլ ժխտել: Բացի դրանից նրանք միշտ բաց են նոր մեկնաբանությունների համար<sup>16</sup>:

Հետևաբար, մուլտիկուլտուրականությանը, այսինքն՝ անհամընկնող բարոյական արժեքներով բնութագրվող ժամանակակից

վունքի լեգիտիմացման համար միջոց ծառայող որոշում ընդունելու գործընթացի միջոցով իրավունքի հիմնավորման փորձը: Մասնավորապես, **Ն. Լումանը** հիմնավորում է դա նրանով, որ անկախ գործողությունների ռացիոնալ մոտիվացիայից, նրանց գործառությունը որոշակի սոցիալական համակարգի ներսում կարող է իռացիոնալ գտնվել: Եվ ընդհակառակը, իռացիոնալ գործողությունները, օրինակ տգիտության կամ անգամ անբարոյական վարքի պայմաններում, կարող են այդ համակարգում ռացիոնալ գործառույթներ կատարել<sup>18</sup>: Նման տեսակետի կողմնակից է **Ցու. Հաբերմասը**:

<sup>12</sup> Dworkin R. Law's Empire. Cambridge. London, 1986.  
<sup>13</sup> MacIntyre. Three Rival Versions of Moral Inquiry: Encyclopaedia, Genealogy and Tradition, L., 1990, p. 172.  
<sup>14</sup> **Дворкин Р.** О правах в сербеез. М., 2004, с. 188.  
<sup>15</sup> Նույն տեղում, էջ 257:  
<sup>16</sup> **Gallie W.** Essentially Contested Concepts // Proceedings of the Aristotelian Society. 1955. Vol. 53. P. 67-173.  
<sup>17</sup> **Habermas J.**, Legitimatiosprobleme im Spaetkapitalismus. Frankfurt/Main. 1973.; **Honneth A.** Verdinglichung. Eine anerkennungstheoretische Studie. Frankfurt/Main. 2005.  
<sup>18</sup> **Luhmann N.** Zweckbegriff und Systemrationalitaet. Frankfurt am Main., 1973. S. 14.

Նա պնդում է, որ ինքնավար դեմոկրատական օրենսդրությունը պահանջում է իրավունքի ենթադրության որոշ պրոցեդուրներ, որոնք ապահովում են լեգիտիմությունը և հնարավոր է դարձնում իրավական համակարգի հետագա ձևավորումը<sup>19</sup>:

Բացի այս ամենից, իրավունքի լեգիտիմությունը միշտ կարող է բացահայտվել հետին հաշվով՝ անցած դարաշրջանների պատմական հետազոտություններում օբյեկտիվ ցուցանիշներով, իրավունքի պաշտոնական նորմերի հետ փաստացի վարքի համադրության մեջ: Նորմատիվության հատկանիշը, չնայած նրա կարևորությանը, չի արտահայտում **իրավունքի յուրահատուկ հատկություն**, որը թույլ է տալիս տարբերել այն այլ սոցիալական ինստիտուտներից՝ բարոյականությունից, կրոնից և այլն: Անցյալի և ներկայի իրավաբանների մեծամասնությունը որպես այդպիսին անվանում են **իրավունքի նորմերի հարկադրականությունը**: Նման տեսակետի կողմնակիցները ենթադրում են, որ իրավական նորմերի հիմնական հատկանիշն է հանդիսանում, օրինակ այն, որ դրանց չհետևելու դեպքում իհաջորդի պետական հարկադրանքը, իսկ բարոյականների խախտման դեպքում՝ միայն բարոյագիտական քննադատության քայլեր<sup>20</sup>: Ընդ որում, ստացվում է, որ իրավունքը ստեղծվում է պետության կողմից /հայտարարելով որևէ գործողություններ արգելված և ամրապնդելով այդ «արգելվածությունը»՝ համապատասխան պատժի կիրառման սպառնալիքով/ իր հայեցողությամբ: Իսկապես, ցանկացած վարք կարող է արգելված հայտարարվել և պատժվել պետության տրամադրության տակ գտնվող հարկադրական միջոցների ամենայն խստությամբ:

Սակայն բավական կասկածելի է ներկայանում պետության իրավունքի ձևավորման մասին թեզը: Փաստացիորեն, պետությունը բավականին ուշ երևույթ է: Պետություն տերմինը առաջավել է 16-րդ դարից ոչ շուտ<sup>21</sup>:

Ակնհայտ է, որ իրավունքը գոյություն ուներ շատ ավելի վաղ, երբ կազմակերպված հարկադրանքը սկսել է իրականացվել ինքնիշխան իշխանության կողմից:

Մյուս կողմից, արդյո՞ք պետությունը կարող է արգելված հայտարարել ցանկացած իրավական վարք: Կառավարել միայն բռնու-

**«...Իրավունքի նորմատիվության գնահատող ասպեկտը արտահայտվում է իրավունքի լեգիտիվության մեջ...»**

թյան միջոցով երկար ժամանակ անհնար է:

Քննադատության է ենթարկվում այս տեսակետը նաև մեր օրերում: Ցանկացած պետության օրենսդրության մեջ միշտ ձևավորվում է ոչ միայն արգելիչ և հարկադրող իրավական նորմեր, այլև խրախուսվող: Վերջիններիս հատկությունը հենց կայանում է նրանում, որ դրանք ենթադրում են սուբյեկտի կամքի արտահայտումը, այսինքն ժխտում են հարկադրանքի ցանկացած հնարավորություն: Միաժամանակ իրավաբանական պարտականության չկատարելը դեռ չի հանգեցնում պատժամիջոցների կիրառման, դա տեղի կունենա միայն այն դեպքում, երբ այդ չկատարումը վերաձևակերպվի հակաիրավականության սկզբունքին համաձայն իրավունքի արգելիչ նորմի: Այսպիսով՝ հարկադրիչ, այսինքն վավերականացված են հանդիսանում միայն արգելող իրավական նորմերը: Այդ պատճառով հարկադրանքի հատկանիշը չի հանդիսանում այլ սոցիալական նորմերից իրավունքի տարբերման հիմնական չափանիշ:

Միաժամանակ կարելի է նշել այսօր սովորության իրավունքի գոյության փաստը, որը, օրինակ, թույլ է տալիս քաղաքացիական օրենսգիրքը:

Պաշտպանելով **Լ.Ի. Սպիրիդոնովի** կողմից մշակած դիալեկտիկական-սոցիալական դոկտրինը որպես **իրավունքի յուրահատուկ հատկություն, որոշենք նրա համապարտադրությունը**: Ընդ որում, համա-

<sup>19</sup> Habermas J., Faktizität und Geltung. Frankfurt am Main. 1992. P. 3.

<sup>20</sup> Kelsen H. Reine Rechtslehre. 2. Aufl. Wien, 1960. S. 45-51

<sup>21</sup> Ильин М.В., Слова и смыслы. Опыт описания ключевых политических понятий. М., 1997, с. 187-202

պարտադրությունը կայանում է ոչ թե իրավական նորմերի պարտադրության մեջ, այլ նրանում, որ դրանք օբյեկտիվորեն նպաստում են սոցիալական ամբողջի գործառու-թյանը<sup>22</sup>: Սահմանելով բոլորի համար հավասար հասարակական կյանքի մասնակիցների վարքի մասշտաբ, նրանք ապահովում են նրանց փոխազդեցությունը որպես միասնական սոցիալական համակարգի տարրերի, և ամրապնդում են բազմաթիվ սոցիալական անհատների կապերը հասարակու-թյունների մեջ: Իրավական նորմերը հաստատում են պայմանները, որոնց դեպքում անհատը ի վիճակի է բավարարել իր պահանջումները միայն մյուսի պահանջ-ումները բավարարելու դեպքում: Այս պայմանների զանգվածային խախտումը կարող է հանգեցնել փոխանակային կապերի հավասարակշռության խախտմանը, այն հիմ-

արդյունքի վրա ազդում է գործոնների /սոցիալական, կենսաբանական, ֆիզիկական, բնական աղետներ, արևի ակտիվություն/ այնպիսի քանակ, որ կանխատեսել դրանք հնարավոր չէ: Ցանկացած բնական երևույթ գտնվում է կոռեկցիոն կապի մեջ այդ վերջնական արդյունքի հետ և ազդեցություն է գործում դրա վրա: Առավել դժվար է բացահայտել իրավա-կան բաղադրիչը այդ դետերմինացնող պրոցե-սից:

Դիտարկվող խնդիրը դժվարանում է նրանով, որ ցանկացած սոցիալական ինստիտուտ բազմաֆունկցիոնալ է, այսինքն՝ կարող է իրականացնել տարբեր գործառույթներ: Այդ պատճառով տարբեր պատմական իրավիճակներում մինևույն իրավա-կան նորը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել, կիրառվել և հանգեցնել տարբեր արդյունքների: Իսկապես, ո՞րն է ավելի արդյունավետ՝ միապալատ պառլամենտը, երկպալատ կամ գուցե՝ «եռապալատ»: Միանշանակ պատասխանել այս հարցին հնարավոր չէ:

**«...Երկար ժամանակ միայն բռնության ուժով կառավարելն անհնար է...»**

քի, որի վրա կառուցված է ժամանակակից սոցիալական համակարգը, ուստի դրանք ամրագրող նորմերը համապարտադիր են<sup>23</sup>:

Այսպիսով՝ իրավական նորմերի համապարտադրությունը կարելի է ներկայացնել որպես նրանց առավել սոցիալական կարևորություն, նշանակություն՝ սոցիումի ամբողջության ապահովման տեսակետից: Այսպիսի ձևակերպումն, ընդհանուր առմամբ, ճիշտ է, սակայն կարիք ունի կոնկրետացման և լուսաբանման: Ծագող խնդիրներից կարևորը կայանում է նրանում, թե ինչպես որոշել հասարակության ամբողջականությունը, և բացահայտել հենց այն նորմերը, որոնք ապահովում են այն: Անել դա չափազանց դժվար է, եթե ընդհանրապես հնարավոր է, քանի որ մինչ այսօր բցահայտված չէ իրավունքի նորմի արդյունավետության խնդիրը: Նրա էությունը կայանում է նրանում, որ վերջնական

Ինչպիսի՞ հնարավոր ելք կարելի է գտնել ստեղծված իրավիճակից: Ինչպե՞ս սահմանել այն սոցիալական նորմերը, որոնք իսկապես իրավական են, այսինքն՝ ապահովում են հասարակության ամբողջականությունը:

Որոշակի իրավունքի նորմի արդյունավետության ցանկացած էմպիրիկ հաստատումը, չի ապահովագրում մեզ սխալներից: Պատմասոցիալական իրավիճակի փոփոխության հետ իշխանությունների բաժանումը կարող է անախրոնիզմ լինել, իսկ մանիպուլյացիաների և հասարակական կարծիքի փոփոխականության մասին այսօր հայտնի է ամենքին:

Միայն այսօրվա դիրքերից մենք կարող ենք վստահության առավել կամ պակաս չափով ասել, թե ինչպիսի իրավական նորմեր էին բացակայում, օրինակ, Դին Եգիպտոսում, ինչը պատճառ է դարձել այդ քաղաքակրթության անկման<sup>24</sup>, իսկ ապագայի

<sup>22</sup> **Спиридонов Л.И.** Теория государства и права. Курс лекций. СПб. 1995, с. 150\* **Кравец В. Т.** Понятия нрава. Российский сжогодыик-теории права. Вып. 1.

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Իրավունքի նորմերը ինքնին ի վիճակի չեն բերել քաղաքակրթության անկման կամ զարգացման: Սակայն եթե հիշենք, որ իրավունքի նորմերը ամրագրում են սոցիալապես կարևոր կապերը սոցիալական կարգավիճակների միջև, ապա այդպիսի ենթադրությունն արդեն չի առաջացնում կտրուկ մերժում:

դիրքերը՝ խորհել ժամանակակից ազգային օրենսդրության մասին:

Ուստի ստիպված ենք բավարարվել քչով՝ ճանաչելով մեր հիմունքների թերությունների սկզբունքային հնարավորությունը: **Նախ**՝ այդպիսի չափանիշ է հանդիսանում սոցիումի գոյությունը, որն ապահովում են նրա ինքնապահպանումը: Դա ապացույց է հակառակից: Երբ մահանում է քաղաքակրթությունը, դա համապարտադիր նորմերի և համապատասխան հասարակական հարաբերությունների բացակայության ցուցանիշ է սոցիալական կարգավիճակների միջև կապեր, որոնք ամրագրվում են իրավունքով: Բոլոր այլ սոցիալական նորմերը /բարոյագիտական, կրոնական և այլն/ ինքնին ապահովել սոցիումի վերարտադրությունը երկար ժամանակահատվածում ի գորու չեն. նրանք միայն աջակցում են իրավունքի գլխավոր գործառույթի իրագործմանը: Եթե ինչ-որ սոցիալական նորմ, օրինակ՝ «մի՛ սպանիր» պատվիրանը, ձևակերպվում, է որպես կրոնական, սակայն օբյեկտիվորեն հանդիսանում է քրեական, հասարակությանը անհրաժեշտ, ապա այսպիսով այն անխուսափելիորեն վերածվում է իրավականի /անկախ նրանից, թե իչնպես և որտեղ է այն ձևակերպվել/<sup>25</sup>:

**Երկրորդ**, իրավունքի նորմի համապարտադրության անուղղակի չափանիշ է հանդիսանում նրանց առավել կամ պակաս երկարատև կայունությունը /պահպանումը/, այդ թվում նաև կոլեկտիվ, անգիտակցականի նախատիպի ձևով՝ տվյալ մշակույթի /քաղաքակրթության/ առասպելներում, հեքիաթներում, լեգենդներում ամրագրված և զանգվածային վարքի կարծրատիպերում արտահայտվող: Այսպիսով՝ նորմատիվության հատկանիշը հաստատում է համապարտադրության չափանիշը՝ որպես առավել գործառույթային նշանակություն:

Իրավունքի «ոչ պոզիտիվիստական»

հայեցակարգը, որ ճանաչում է «իրավունքի» և «բարոյագիտության» «տերմինաբանական կապը», իրավունքի էական հատկանիշ է ենթադրում «բարոյագիտական փաստարկը»<sup>26</sup>: Չբացառելով նրա կարևորությունը՝ այն, մեր կարծիքով, մտնում է, իրավունքի նորմատիվության մեջ որպես նրա ներքին հոգեբանական ասպեկտ: Բացի դրանից, նրա խնդրահարույց լինելը, կայանում է անորոշության մեջ՝ տարբեր բարոյական արժեքների կողմնակիցների տեսակետների համաձայն:<sup>27</sup>

Իրավունքի այլ հետդասական հաղորդակցական չափանիշ առաջարկում է **Ա. Վ. Պոլյակովը**: Իրավական հաղորդակցության իմաստը նա տեսնում է<sup>28</sup> «իրավունքի սուբյեկտների փոխգործակցության մեջ, մի

*«... Առ այսօր բացահայտված չէ իրավունքի նորմի արդյունավետության խնդիրը...»*

կողմից, և կորյեկատիվ պարտականությունների սուբյեկտների՝ մյուս: Իրավունքների և պարտականությունների իրագործումը, որոնք պայմանավորում են իրավունքի գոյության հնարավորությունը, և կազմում են նրա իմաստը»: Ընդ որում, իրավունքներն ու պարտականությունները առաջանում են նրանց փոխադարձ ճանաչման ընթացքում հաղորդակցության միջոցով, այսինքն՝ իրավունքի ճանաչման միջոցով: «Սակայն ի՞նչ է նշանակում իրավունք /իրավական տեքստերի/ ճանաչում: Դա վարքի որոշ ընդհանուր շրջանակների ճանաչումն է, այսինքն հասարակության բոլոր անդամներին միավորող որոշակի իրավունքների և պարտականությունների ճանաչում, նրանց «օբյեկտիվ», անձի անհատական կամքից անկախ, և սոցիալապես կարևոր /արժեքային/ բնույթը, նրանց բովանդակության և իրագործման կարգի հասկացում՝ ներառյալ պատժի հնարավորությունը՝ նման կանոնների

<sup>25</sup> Агацци Э. Моральное измерение науки и техники, М., 1998. С. 116-117.

<sup>26</sup> Алекси Р. Նշվ. աշխ., էջ 132-133:

<sup>27</sup> Նուն տեղում, էջ 60:

<sup>28</sup> Поляков А.В. Теория права в эпоху глобализации. Российский ежегодник теории права. Вып. 1. с. 374.

խախտման համար: Այս իմաստով իրավունք կա այնտեղ, որտեղ կան հարաբերակցվող իրավունքներ և պարտականություններ»<sup>29</sup>:

Ամբողջովին համաձայնվելով իրավունքի լեգիտիմության հետ՝ նկատենք, որ այդ հատկանիշը ածանցյալ է հասարակության գոյությունից, ինչպես նաև ազատությունը /ավելի ճիշտ ազատության, արդարության, հավասարության չափը<sup>30</sup>: Լեգիտիմության, արդարության, ազատության համար անհրաժեշտ է Ֆունկցիոնալ հասարակություն: Ուստի իրավունքը պետք է ապահովի, նախևառաջ, հասարակության բնականոն վերարտադրությունը, ինչի հետ կապված է նրա լեգիտիմությունը և ազատության, արդարության չափի հաստատումը:

**Իրավունքի երրորդ հատկանիշ է հանդիսանում նրա ձևական որոշակիությունը:** Նկատենք, որ ցանկացած հասարակական երևույթ պետք է արտաքնապես արտահայտված լինի որոշակի ձևով, քանզի ներքին բովանդակության գոյությունը հնարավոր չէ նրա արտաքին դրսևորումից, նշանակային միջնորդավորվածությունից զատ: Գիշտ այդպես իրավունքի նշանակությունը, էությունը, պետք է ստանա իր արտահայտման արտաքին նշանային ձևը: Այդպիսիք են նորմատիվ իրավական ակտերը, դատական և վարչական նախադեպերը /դատական-վարչական պրակտիկա/, իրավական ավանդույթները, նորմատիվ պայմանագրերը և այլն: Իրավունքի արտաքին արտահայտման նշված ձևերը /որոնք իրավունքի պոզիտիվիստական տեսության մեջ անվանում են իրավունքի աղբյուրներ/ բախվում են իրավունքի հետ իրենց բովանդակությամբ, քանի որ պետության մեջ ընդունված ոչ բոլոր օրենքները, ոչ բոլոր ավանդույթները և այլն օբյեկտիվորեն ծառայում են սոցիումի ամբողջությանը: Այս հատկանիշում պարունակվում է «**իրավունքի հաստատման պատշաճ կամ հեղինակավոր**» չափանիշը՝ **Ռ. Ալեքսիի** տերմինաբանությամբ<sup>31</sup>:

**Իրավունքի չորրորդ հատկանիշ է նրա**

**հարկադրականությունը իրավակիրառման փուլում** իրավաբանական կիրառման համար հիմքերի առկայության դեպքում, այսինքն՝ երբ տեղի է ունեցել իրավախախտում: Նկատենք, որ խոսքը գնում է ոչ թե պետական հարկադրանքի մասին, այլ հարկադրանքի՝ որպես այդպիսին, որը կարող է իրագործվել տարբեր սուբյեկտների կողմից և ընթանալ տարբեր ձևերով: Բանն այն է, որ մուսուլմանական երկրներում, օրինակ, հարկադրանքը իրականացվում է հաճախ կրոնական համայնքի ներկայացուցչի կողմից, որի ինքնադեկլարավոր գործունեությունը ճանաչվում է պետության կողմից: Շարիաթական դատարանների կարգավիճակը ստիպում է կասկածել, որ այնտեղ գոյություն ունի հենց պետական հարկադրանք: Մյուս կողմից, պետական հարկադրանքը արևմտյան իրավական համակարգում կիրառվում է բացառապես իրավախախտման առկայության դեպքում: Այսպիսով՝ իրավունքի հարկադրականությունը ոչ պարտադիր է հանդիսանում որպես պետական հարկադրանք և տեղ ունի միայն իրավակիրառման պրոցեսում՝ իրավախախտման դեպքում:

Այսպիսով, իրավունքի էական, ունիվերսալ, տրանսցեդենտալ չափանիշ է հանդիսանում նրա գլխավոր գործառնությամբ՝ սոցիումի ամբողջականության՝ բնականոն գործառնության վերարտադրության ապահովումը: Այս հատկանիշը տրանսցեդենտալ է, քանի որ դուրս է գալիս իրավունքի շրջանակներից և գտնվում է հասարակության մեջ: Այն կոնկրետացվում է իրավունքի իմմանենտ, փոփոխական, պատմական դարաշրջանի համատեքստից և մշակույթի-քաղաքակրթության տեսակից կախված հատկանիշներով, նորմատիվությամբ, որը ներառում է լեգիտիմությունը, սոցիալական գործնականությունը, բարոյական արդարացվածությունը, ձևական որոշակիությամբ և հարկադրանքի ապահովությամբ՝ իրավակիրառման համար հիմքերի առկայության դեպքում:

<sup>29</sup> Поляков А.В. Прощание с классикой или как возможна коммуникативная теория права. \\там же. С. 18.

<sup>30</sup> Թեև ճիշտ է և հակառակը, առանց սոցիումի լեգիտիմության վերջինս վերածվում է անարխիայի:

<sup>31</sup> **Алекси Р.** Նշվ. աշխ., էջ 19-22:

# ՇԱՐԻԱԹԸ՝ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՔ

## Քրիստինե ԽԱՆԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,  
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

*Ցանկացած համաշխարհային կրոն ունի իր կանոնները, որոնք ենթակա են իր նվիրյալների կատարմանը: Եթե օրենքը դադարում է իրականացվել, ապա կրոնը անկում է ապրում, տարալուծվում կամայականությունների անափ ծովում:*

*Հայտնի է, որ ցանկացած իսլամական պետություն ղեկավարվում է շարիաթով՝ Աստվածային Օրենքով<sup>1</sup>: Շարիաթի հիմնական խնդիրը՝ տարբեր կենսական հանգամանքների գնահատականն է իսլամական կրոնի տեսանկյունից: Շարիաթի օրենքները դա ուղղահավատների վարքագծի, նրանց մարդկանց, հասարակության և Ալլահի առջև պարտականությունների իրավական համակարգն է<sup>2</sup>:*

Իսլամական իրավունքը ենթակա է, համաձայն մուսուլմանական իրավաբանների (ֆակիհներ), Աստվածային հայտնությանը: Իրավունքը մարդու կամ պետության ստեղծագործությունն է, այլ **Ալլահի** կամքի արտահայտումը: Իրավունքի աղբյուր կարող է հանդիսանալ միայն **Ալլահի** խոսքը: Այդ իսկ պատճառով մարդկանց միայն թույլատրվում է որոնել իրավական լուծումներ շարիաթի ընդհանուր շրջանակներում: Այսպիսով, դա իրավաստեղծում է, այլ կանոնակարգված լիազորություններ: Շարիաթի էությունը կայանում է ոչ թե յուրաքանչյուր քայլի մանրամասն կարգավորման մեջ, այլ նրանում, որ սովորեցնի մուսուլմանին գնահատել իրավիճակը և դրանում գործել իսլամին հարկի՝ չմոռանալով սեփական շահերը:

Ամենից առաջ, խիստ կարևոր է թվում թուլցիկ կամգ առնել «Ի՞նչ է շարիաթը» հարցի վրա:

Շարիաթը՝ իսլամի կարևորագույն ինստիտուտներից մեկն է: «Աշ-Շարիա», կամ շարիաթ, որը արաբերենից թարգմանաբար նշանակում է «ուղիղ ճանապարհ, ճշմարիտ

ուղի» հանդիսանում է ամենից առաջ **Ղուրանով** և **Սուննայով** ամրագրված կանոնակարգեր, որոնք սահմանում են մուսուլմանների համոզմունքները, ձևավորում բարոյական արժեքները և կրոնական խիղճը, ինչպես նաև համոզես են գալիս կոնկրետ նորմաների աղբյուր, որոնք կարգավորում են մուսուլմանների վարքագիծը:

Ինչպես արդարացի նշում է իսլամական իրավունքի ռուս մասնագետ պրոֆեսոր **Լ.Ռ. Սուկիյանցենը** «իսլամական իրավունք» տերմինը կարող է կիրառվել երկու հիմնական նշանակություններով<sup>3</sup>: Լայն իմաստով դրա տակ պետք է ընկալել միմիայնց հետ սերտորեն փոխկապակցված և միմիայնց լրացնող նորմաների համալիր, որոնք դասվում են սոցիալական կարգավորումների տարբեր տեսակներին, դրանց շարքում կարող են հայտնաբերվել վարքագծի և սովորույթների ինչպես իրավաբանական, այնպես էլ կրոնական, բարոյական կանոններ: Սոցիալական կարգավորման ամբողջական իսլամական մեխանիզմի նշման համար թույլատրելի է կիրառել «շարիաթ» տերմինը:

<sup>1</sup> Տե՛ս Դոստեր, Աստված և հասարակություն: Թարգմ. Ալի Գուլշանի, Թեհրան, 1994, էջ 7-8:

<sup>2</sup> Տե՛ս **Մ. Հալի**, Իսլամի շարիաթը: Խմբ. Ա. Դունելփաժուհ, Թեհրան, 2003, էջ 114-115:

<sup>3</sup> Տե՛ս **Сюкиянен Л. Р.** Шариат и мусульманско-правовая культура. М., 1997, с. 4-5.

նը, որը նեղ իմաստով չի համապատասխանում իսլամական իրավունք հասկացությանը: Վերջին իմաստով տվյալ իրավունքը իրենից ներկայացնում է իրավաբանական նորմաների համակարգ, որոնք սերտորեն կապված են կրոնական գիտակցության հետ և ամենից առաջ հանդես են գալիս պետության կողմից ապահովվող իրավական կարգավորիչների դերում: Տվյալ թեմայում իսլամական իրավունքը դիտարկվում է գերադրապես լայն իմաստով, որպես «շարիաթ» տերմինի հոմանիշ:

Իսլամական իրավունքը շարունակում է մնալ ժամանակակից աշխարհի հիմնական իրավական համակարգերից մեկը: Այն պարունակում է նորմաներ, որոնք կարգավորում են մարդկային փոխհարաբերությունների բոլոր հիմնական կողմերը, ընտանիքի, հասարակության, պետության ոլորտներում: Շարիաթը դա վարքագծի կանոնների հա-

աշխատանքով, չսպանել, օգնել աղքատներին և կարիքավորներին, չգողանալ, մյուսներին չվիրավորել, պահել տրված խոստումը, հոգալ ծնողների մասին, կնոջն ու երեխաներին պահել, չդավաճանել ամուսնության մեջ, կարողանալ ներել, լինել համբերատար և արդարադատ, սպիրտային խմիչքներ չօգտագործել, չտարվել խաղամոլությամբ և այլն:

«Շարիաթ» բառը, որոշակի իմաստով նույնական է «վարքագիծ» բառին, այստեղից՝ հիմնավորված ընդունված որոշումը անվանում են «արդարացի»՝ «շարի», այսինքն շարիաթին համապատասխանող:

Շարիաթը բաղկացած է երկու հատվածներից. **ակիդա**՝ աստվածաբանություն կամ հավատքի սկզբունքներ, և **ֆիկհա**՝ իրավունք: Ֆիկհը, կամ իսլամական իրավունքը, իր հերթին տարանջատվում է երկու հատվածների, առաջինը ցուցում է մուսուլմանին, ինչպիսին պետք է լինի նրա վարքագիծը իր նմանների («մուսուլաթի») նկատմամբ, երկրորդ՝ վերագրում է պարտականությունները Ալլահի նկատմամբ («իբադաթ»):

**«...Շարիաթի հիմնական խնդիրը՝ կենսական տարբեր հանգամանքների գնահատումն է իսլամի տեսանկյունից...»**

մախումբ է ուղղահավատ մուսուլմանի համար ծննդյան օրվանից մինչև մահ: Այն պարունակում է կրոնական, բարոյական-էթիկ և իրավական նորմաներ, չտարանջատելով դրանք կրոնի, բարոյականության և իրավունքի: Շարիաթը սկիզբ է առնում **Ղուրանում** և համարվում է աստվածային հաստատումների պտուղ, այլ ոչ մարդկային գիտակցության և սոցիալական պայմանների արդյունք:

Շարիաթը իսլամի իրավունքի փիլիսոփայությունն է, որին բնորոշ է սինկրետիկությունը, այսինքն մուսուլմանի հոգևոր, աշխարհիկ և գործնական գործունեության բազմաթիվ ոլորտների անբաժանելիությունը՝ կրոնական և աշխարհիկ իշխանությունների միասնականությունը: Այն իր մեջ ներառում է ինչպես իրավունքը՝ ֆիկհ, բարոյական-վարքագծային ուսուցումներ, այնպես էլ մուսուլմանական կուռքի՝ աղոթքների, պասի, տոների, իսլամական հետևորդների այլ պարտականությունների կանոնակարգերը:

Շարիաթը պարունակում է բազմաթիվ կանոնակարգեր, որոնք կարգավորում են ուղղահավատ մուսուլմանի կյանքի գրեթե բոլոր ոլորտները, ապրել ազնիվ, սեփական

Ֆիկհայի այդ երկու հատվածները կազմում են իրավագիտության առարկան այն ձևով, ինչ ձևով այն սահմանվել և ուսումնասիրվել է տարբեր մազհաբների (արաբերեն «հետևան ուղիներ») կամ մուսուլմանական իրավական դպրոցների կողմից:

Իսլամում գիտելիքների բոլոր ոլորտները բաժանվում են երեք բաժնի, միմիայնցից տարբերվող գիտությունների երեք ոլորտների. «ալ-արաբիյաթ», «աշ-շարիաթ», «ալիհկամիյաթ»: Եթե «ալ-արաբիյաթը» ներառում է պոեզիան, լեզվաբանությունը և այլ կարգապահություններ, ապա «ալ-իհկամիյաթը»՝ փիլիսոփայությունը, մաթեմատիկան և այլն:

Շարիաթը ընդգրկում է վեց գիտական կարգապահություններ.

- 1) իլմ ատ-Տաֆսիր ալ-Ղուրան՝ Ղուրանի մեկնաբանման գիտություն,
- 2) ալմ ալ-հադիս՝ գիտություն, որը հավաքագրում և ուսումնասիրում է Մուհամմադի արտահայտությունները,
- 3) իլմ ալ-դարամ կամ Ուսուլ ադ-Ղին՝ գիտություն, որը ուսումնասիրում է կրոնի տարածքային հիմքերը,
- 4) իլմ ուսուլ-ֆիկհ՝ գիտություն, որը ուսումնասիրում է ֆիկհի հիմքերը և աղբյուրները,



5) իլմ ֆուրու ալ-ֆիկհ՝ ֆիկհի «ճյուղերի» (ուլորտների) վերաբերյալ գիտություն, գործնական ֆիկհ,

6) իլմ ալ-ֆարաիգ՝ ննջեցյալի գույքը նրա ժառանգորդների միջև բաժանման վերաբերյալ գիտություն (ժառանգական իրավունք):

Շարիաթի հիմնական հատվածը, որը իր մեջ միավորում է իրավական նորմաները, անվանվում է ֆիկհա, կամ «ֆուրու ալ-ֆիկհ» (ֆիկհայի ճյուղեր [ուլորտներ]), այսինքն կիրառական ֆիկհա: «Ֆիկհը» (արաբերեն՝ «պարզ պատկերացում», «գիտելիք») նույնականացվում է շարիաթի հետ և համարվում գիտություն իսլամական իրավունքի վերաբերյալ, այլ խոսքերով՝ «իսլամական իրավագիտություն»:

«Ֆակիհ» բառը սկզբում նույնականացվում էր «գիտնական» բառի հետ, որը հետագայում սկսեցին կիրառել **Ղուրանի** մեկնաբանությունների նկատմամբ, իսկ «ֆակիհը»՝ «իսլամական իրավունքի գիտակ» իմաստով:

Ֆիկհը զբաղվում է նուսուլմանական համայնքի իրավական նորմաների գործնական կիրառմամբ: Հատկապես գործնական-կիրառական պոստենցիալում ֆիկհը վերջինիս գլխավոր տարբերակիչ գիծն է միջին եվրոպական սխոլաստիկական իրավունքից: Ֆիկհի հիմնական գործառնությունը՝ նուսուլմանական պետության օրենսդրության և դրա նախնական աղբյուրների միջև անբախտելի կապերի պահպանումն է:

Իսլամի առանձնահատկությունը, ինչպես բոլոր կրոնական համակարգերը, կայանում է նրանում, որ նրա նորմատիվ-կարգավորիչ մասը կրում է ունիվերսալ բնույթ, տարածվում է գործնականում հավատացյալի կենսագործունեության բոլոր կողմերի վրա: Իսլամի կարգավորիչ ազդեցության հիմքում ընկած է շարիաթը, որը դիտարկվում է որպես իրավական, բարոյական և պաշտամունքային-կրոնական նորմերի միասնական համակարգ: Շարիաթը երբեմն

նույնացնում են նուսուլմանական իրավունքի հետ: Ինչպես նշում է **Հ. Սոհադեդը** «շարիաթը իրավունքի յուրօրինակ համակարգ է, որ բնութագրվում է բազմաթիվ առանձնահատկություններով: Այստեղ նա նշում է նաև, որ շարիաթը նուսուլմանի կյանքի ճշմարիտ ճանապարհն է: Այն ընդգրկում է և իրավական, և բարոյական, և կրոնական նորմեր»<sup>4</sup>:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ շարիաթի և նուսուլմանական իրավունքի հասկացությունները չեն համընկնում, և հատկապես այնքանով, որքանով շարիաթը արտաքին («պրակտիկ»), պայմանականորեն

**«...Շարիաթը պարունակում է բազմաթիվ կանոնակարգեր, որոնք կարգավորում են ուղղահավատ մուսուլմանի կյանքի գրեթե բոլոր ոլորտները...»**

րեն ասած, «իրավական» վարքին միացնում է կրոնական դոգմատիկայի և էթիկական պոստուլատների հիմունքներ, ուղղված նուսուլմանի խղճին: Իսլամական ավանդույթը շարիաթի հասկացությունը կապում է **Ղուրանում** այդ տերմինի օգտագործման հետ՝ նշելու համար **Ալլահի** գծած ճանապարհը, որով գնալով, հավատացյալը հասնում է աշխարհիկ բարեկեցության և կարող է ընկնել Դրախտ:

Տվյալ հասկացության ընդհանուր իմաստը պարզ է դառնում, եթե հաշվի առնվի նրա ծագումը «շա-ռա-ա» արմատից, որը բազմիցս հանդիպում է որպես պարտադրանք պատվիրելու, օրինականացնելու նշանակությամբ<sup>5</sup>: Միաժամանակ, ներկայումս իսլամական գրականության մեջ հաստատում է ստացել շարիաթին տրված ընդհանուր սահմանումը, այն է՝ շարիաթը մարդկանց ուղղված պատվիրանների հանրագումար է՝ Ալլահի կողմից սահմանված և Մարգարեի միջոցով հանձնված:

Ներկա ժամանակներում իսլամը որպես կրոն շարունակում է սոցիալ քաղաքական և մշակութային կյանքի վրա ազդեցություն ունեցող կարևոր գործոն մնալ ինչպես Իրա-

<sup>4</sup> Տե՛ս Հ. Սոհադեդ, Իսլամական շարիաթ: Թեհրան, 2005, 61-62:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Ղուրան: Խորհուրդ: 42.11-13, 20-21:

նում, թուրքիայում այնպես էլ արաբական երկրներում: Նշելով արաբական հասարակության կյանքի վրա 14 դարերի ընթացքում իսլամի անընդհատ ազդեցությունը, ակադեմիկոս **Ե. Մ. Պրիմակովը** գրում է, որ **Ղուրանը** և մուսուլմանական օրենքների ամփոփագիրը՝ շարիաթը, պարունակում են սկզբունքներ, որոնք օրինակարգում են ոչ միայն ընտանիքում ու հասարակության մեջ մարդու վարքի բարոյա-էթիկական նորմերը, այլ նաև անձնական, հասարակական և տնտեսական կյանքը: Հավատացյալների աչքին իսլամը երևում է ոչ թե պարզապես որպես կրոնական համակարգ, այլ նաև որպես կենսակերպ<sup>6</sup>:

Այդ նույն մոտեցմամբ է արտահայտվում **Լ.Ռ. Սյուկիայնեն**, որը շարիաթի և մուսուլ-

շարիաթի նորմերը, ըստ որի՝ ԻԻՀ իրավական համակարգն ամբողջովին հիմնված է իսլամի և շարիաթի կրոնաիրավական գաղափարախոսության վրա, որից հետևում է, որ բոլոր օրենքներն ու որոշումները պետք է բխեն իսլամի սկզբունքներից և շարիաթի նորմերից: Իրականում, ԻԻՀ Սահմանադրությունը համարվում է իսլամի հիմնական սկզբունքներին հավատարիմ մնալու և չշեղվելու երաշխավորը: Հետևաբար, կարելի է պնդել, որ ԻԻՀ իրավական համակարգի և պետական կառավարման գաղափարական հիմքերը՝ «վելյաթե Ֆադիհ» տեսությունն է, ինչը Իրանի նորագույն պատմության մեջ առաջինը կիրառեց **Այաթուլլա խոմեյնին**, իսկ իրավական հիմքն է՝ Սահմանադրությունը, որը համարվում է այդ

տեսության վերլուծության արդյունք և ամբողջովին հիմնված է վերջինիս վրա<sup>8</sup>:

**«...Շարիաթը՝ մուսուլմանի կյանքի ձգմարիտ ճանապարհն է...»**

Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգը առաջնորդվում է շարիաթի նորմերով, որն իր մեջ ներառում է նաև երկրի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը և մնացած օրենքները:

մանա-իրավական մշակույթի իր ուսումնասիրություններում պնդում է, որ ուրիշ կրոնների հետ համեմատած իսլամն ավելի մեծ ուշադրություն է դարձնում զուտ աշխարհիկ հարցերին, մարդկանց առօրյա արարքներին, նրանց փոխհարաբերություններին ամենատարատեսակ բնագավառներում<sup>7</sup>:

Այսպես, համաձայն ԻԻՀ Սահմանադրության առաջին գլխի 4-րդ հոդվածի՝ քաղաքացիական, քրեական, ֆինանսական, տնտեսական, վարչական, մշակութային, ռազմական և քաղաքական ոլորտներում. բոլոր օրենքները պետք է հիմնված լինեն իսլամական (շարիաթի) նորմերի վրա:

Հենց իսլամի տեսակետից իրավական և կրոնական հարաբերությունների միջև սկզբունքային տարբերություն գոյություն չունի, քանի որ մուսուլմանն իր վարքագիծը դրսևորելիս ղեկավարվում է **Ղուրանում** և **Սուննայում** պարունակվող նորմերի հանրագումարով:

Այս հիմնարար սկզբունքները տարածվում են Սահմանադրության բոլոր հոդվածների, ինչպես նաև բոլոր օրենքների, նորմատիվ ակտերի, դատական և իրավակիրառ պրակտիկայի վրա:

Իրանի 1979թ. հեղափոխությունից հետո ընդունվեց Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրությունը: Այն բաղկացած է 12 գլխից և 175 հոդվածից (1989թ. կատարված փոփոխություններից հետո գլուխների թիվը դարձավ՝ 14, իսկ հոդվածների՝ 177):

ԻԻՀ աստվածապետական (կրոնական) պետություն է, որտեղ իշխանությունն իրականացվում է աստվածային օրենքների համաձայն՝ հոգևոր առաջնորդի ղեկավարությամբ և վերահսկողությամբ:

Սահմանադրության հիմքում ընկած են

<sup>6</sup> **Примаков Е.М.** Восток после краха колониальной системы. М., 1982, С. 71-72.  
<sup>7</sup> **Сюкияйнен Л.Р.** Шариат и мусульманско-правовая культура. М., 1997, с 6.  
<sup>8</sup> Մանրամասն տե՛ս Մ. Մոթամենի, Վարչական իրավունք: Թեհրան, 2002, էջ 136-137:

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ - ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՅԱԿԱՐԳՈՒՄ

## Դիաննա ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտ

*Պետությունների տիպաբանության հիմնահարցը արդի իրավագիտության խնդիրներից մեկն է:<sup>1</sup> Դեռևս անտիկ դարաշրջանի իրավաբանական հայեցակարգերում քննարկվող թեմաներից էր պետությունների դասակարգման հիմնահարցը:<sup>2</sup> Անտիկ դարաշրջանի մտածողները (Հերակլիտես, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Կիկերոն և այլք) պետության (պոլիս) կառուցվածքը դիտում են որպես տիեզերական կառույցի (կարգի) արտացոլում: Աշխարհում տեղի ունեցող ամեն ինչի հիմքում ընկած է համընդհանուր աստվածային իրավունքը, որը նրանք նույնացնում էին տիեզերական լոգոսին (բանականությանը), քանզի «ամեն ինչ կատարվում է համաձայն այս լոգոսի»:*

Անտիկ մտածողները պետության տարբեր ձևերը բաժանում էին երկու խմբի՝ ճշմարիտ և ոչ ճշմարիտ: Ընդ որում, նրանք պետության ճշմարիտ ձևերի խմբում դասում էին այն ձևերը, որոնցում իշխանությունն իրականացվում է օրենքների հիման վրա և ի շահ ընդհանուրի, իսկ ոչ ճշմարիտ ձևերի խմբում՝ նրանց, որոնցում իշխանությունը չի հենվում օրենքի վրա և ծառայում է սուկ կառավարողների շահերին:<sup>3</sup>

Հենվելով նման մոտեցման վրա՝ այլաբազորասականները մեծարում էին օրինապաշտությունը և «լավ օրենքները», իսկ պետական կառավարման նպատակը համարում էին անհատական և ընդհանուր գործերի, մարդկային հարաբերությունների կարգավորումը: Պյութագորասականները կառավարման ազնվապետական ձևի կողմնակից էին

(փոքրաթիվ լավագույների, գիտակ մարդկանց), քանի որ լոկ քչերն են օժտված այդ ունակությամբ:

Այս առումով, Պլատոնն առանձնացնում է կառավարման երեք ճշմարիտ ձև՝ թագավորի իշխանությունը (օրինական միապետությունը, այսինքն՝ մեկ անձի կառավարումը օրենքների հիման վրա), ազնվականությունը (քչերի օրինական իշխանությունը) և օրինական ժողովրդավարությունը (դեմոսի իշխանությունը օրենքների հիման վրա) ու, համապատասխանաբար, երեք ոչ ճշմարիտ ձև՝ բռնատիրությունը (մեկի անօրինական իշխանությունը), օլիգարխիան (քչերի անօրինական իշխանությունը) և անօրինական ժողովրդավարությունը (օրենքների վրա չհիմնված դեմոսի իշխանությունը):<sup>4</sup>

Նույն դիրքերից Արիստոտելը գրում էր,

<sup>1</sup> Տե՛ս **Хабидулин А. Г.** Теоретико - методологические проблемы типологии государства. Дисс. ... док. юрид. наук. СПб., 1997; **Кульков М. О.** Теоретические проблемы типологии форм государства. Дисс. ... канд. юрид. наук. М., 2008.

<sup>2</sup> Մանրանախ տե՛ս **Нерсесянц В. С.** Политические учения Древней Греции. М., 1979.

<sup>3</sup> Տե՛ս **Дробышевский С. А.** История политических и правовых учений. Основные классические идеи. 2-е изд., доп. М., 2007, с. 26-27, 34-45, 48-55.

<sup>4</sup> Տե՛ս История государственно - правовых учений: Учебник. Отв. ред. **В. В. Лазарев.** М., 2006, с. 98-99.

որ երեք ճշմարիտ ձևերն են՝ թագավորի իշխանությունը, ազնվականությունը և պոլիտիան (մեծամասնության կառավարումն օրենքների հիման վրա), իսկ երեք ոչ ճշմարիտ ձևերն են՝ բռնատիրությունը, օլիգարխիան և ժողովրդավարությունը (օրենքների վրա չհիմնված դեմոսի՝ մեծամասնության կառավարումը):<sup>5</sup>

Տիրանիայի (ոչ օրինական միապետությունը, բռնակալությունը) հակադիր քաղաքական և իրավական ձևերի սկզբունքային ընդհանրությունը, միասնականությունը հետազոտողներին հիմք են տվել խոսել Արիստոտելի ուսմունքում իրավական պետության հայեցակարգի մասին:<sup>6</sup>

Յելլենիզմի դարաշրջանի մեծ մտածող Պոլիբիոսը (մ.թ.ա. 200-120թթ.) առավել հանգամանորեն է անդրադարձել պետական կառավարման ձևերի տիպականացման հիմնահարցին: Պոլիբիոսը կարևորում է պետական ձևերի փոփոխությունների գաղափարը: Յետևելով Պլատոնին՝ նա ընդգծում է պետության որոշիչ դերը. «Ինչպիսին էլ լինի ձեռնարկը, դրա հաջողության ու անհաջողության կարևորագույն պատճառ պետք է համարել պետական կառուցվածքը»:<sup>7</sup>

Պոլիբիոսը կարևոր նշանակություն է տալիս սովորության իրավունքի նորիմերին ու գրավոր օրենքներին՝ դրանք համարելով յուրաքանչյուր պետությանը բնորոշ հիմնական սկզբունքներ: Դրանք «բարեկրթություն ու չափավորություն են ներմուծում մարդկանց անձնական կյանքում, իսկ պետության մեջ հաստատում են հեզություն և արդարություն»:<sup>8</sup> Նա համապատասխանություն է տեսնում սովորույթների, օրենքների և պետական կարգերի միջև:

Պետության տիպաբանության չափանիշը հռոմեական նշանավոր գործիչ ու մտածող Կիկերոնը (մ.թ.ա. 106-43թթ.) տեսնում էր պետությունը կառավարող անձանց բնավորության ու կամքի մեջ: Յետևելով Պոլիբիոսին, Կիկերոնը ընդունում է պետության երեք պարզ ձևի գոյությունը՝ **թագավորական իշխանություն (միապետություն), օպտիմատների (լավագույնների, ազնվական-**

**ների) իշխանություն, ժողովրդի իշխանություն (ժողովրդավարություն):**<sup>9</sup>

Յետևելով Պոլիբիոսին, Կիկերոնն ընդունում է պետության երեք պարզ ձևի գոյությունը՝ թագավորական իշխանություն (միապետություն), օպտիմատների (լավագույնների, ազնվականների) իշխանություն, ժողովրդի իշխանություն (ժողովրդավարություն): Թագավորական իշխանությունը առանձնանում է իր բարի կամեցողությամբ, օպտիմատներիը՝ իմաստությամբ, ժողովրդավարությունը՝ ազատությամբ: Դրանցից ոչ մեկը կատարյալ չէ՝ յուրաքանչյուրը միայն հանդուրժելի է և բովանդակում է տարրեր, որոնք հանգեցնում են քայքայման: Թագավորական իշխանությունը միանձնյա է, քաղաքացիներից օտարված են օրենսդրական և որոշումներ կայացնելու իրավունքները: Օպտիմատների իշխանությունը ևս ժողովրդին զրկում է իշխանություն իրականացնելու իրավունքից, հետևաբար՝ ազատությունից: Ժողովրդի իշխանությունը խարսխված է հավասարության վրա:

Կառավարման ձևերի անկատարությունը Կիկերոնը տեսնում է այն բանում, որ դրանք չեն նախատեսում «հասարակական դրության աստիճանները» յուրաքանչյուր ձև առավելություն է տալիս քաղաքացիների որոշակի խմբին՝ անտեսելով մյուսների շահերը: Դրա հետևանքով՝ պետությունը զրկվում է հավասարակշռությունից և կայունությունից, միապետությունը վերածվում է բռնապետության, օպտիմատների իշխանությունը՝ մեծահարուստների ու ազնվականների խմբավորման՝ օլիգարխիայի, իսկ ժողովրդավարությունը՝ անիշխանության, ամենաթողության, ամբոխի բռնատիրության:

**Կառավարման վատթարագույն ձևը բռնապետությունն է**, քանզի դրա օրոք արդարությունը իսպառ բացակայում է, գոյություն չունի ժողովրդի ընդհանուր կապ՝ իբրև իրավունքի և մարդկանց համաձայնություն: **Լավագույնը խառը ձևն է**, որն առաջանում է երեք պարզ ձևերի առավելությունների «համաչափ միախառնման» միջոցով, մինչդեռ պարզ ձևերում այդ արժանիքները ներկայացված են միակողմանի և մեկուսի:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 114-115:

<sup>6</sup> Տե՛ս **Нерсесянц В. С.** История политических и правовых учений: Учебник. М., 2010, с. 84.

<sup>7</sup> Տե՛ս **Полибий.** Всеобщая история. Книга первая. Книга шестая, с. 5-9.

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>9</sup> Տե՛ս История государственно - правовых учений. Учебник. Отв. ред. **В. В. Лазарева.** М., 2006, с. 119.

Խառը ձևի շնորհիվ հաստատվում է հավասարություն և հատկապես՝ պետականության կայունությունը, որոնք օրինակելի պետական կառույցի չափանիշներն են:

Կիկերոնի քաղաքական դիրքորոշման էությունը հանգում է այն բանին, որ նա առաջադրում է ընդհանուր իրավակարգի շրջանակներում հռոմեական հասարակության սոցիալական բոլոր խավերի «համընդհանուր համաձայնություն» սկզբունքը: Այս «միջնակետային» դիրքորոշումն արտահայտվել է նաև նրա «օպտիմատների» և «պոպուլյարների» միջև խուսանավելու այն համոզմունքում, որ և՛ նրանց, և՛ մյուսների իրական շահերը կարող են համակցվել «ընդհանուր համաձայնության» շրջանակներում: Միայն ծայրահեղ դեպքում, երբ վտանգի առջև է հայտնվում պետության ողջ բարեկեցությունը՝ իբրև ժողովրդի ընդհանուր գործ, վերջինիս համաձայնությամբ պետական գործիչը կարող է «կարգ հաստատել պետությունում՝ իբրև դիկտատոր»:

Խառը հասարակարգի լավագույն օրինակը Կիկերոնը համարում է Գոմեական պետությունը, որը համակցում է թագավորության, ազնվապետության (սենատի) և ժողովրդավարության հատկանիշները:<sup>10</sup>

Պետության տիպաբանության հիմնախնդրին անդրադարձել է նաև միջնադարյան խոշորագույն մտածող, աստվածաբան **Թոմաս Աքվինացին** (1226-1279թթ.) հետևելով անտիկ դարաշրջանի ավանդույթներին առանձնացնում է պետական կառավարման երեք հիմնական («մաքուր») ձև՝ միապետություն, ազնվապետություն, պոլիտրա և երեք խեղաթյուրված ձև՝ բռնապետություն, օլիգարխիա և դեմագոգիա (ժողովրդավարություն): Պետության անդամների ընդհանուր բարիքի տեսանկյունից նա տարբերակում է արդար (բանական-պատշաճ) կառավարումը և անարդար կառավարումը: Այս սկզբունքով էլ նա տարբերակում է «քաղաքական» և «բռնապետական» իշխանությունը: Այսպես, քաղաքական միապետությունը, այսինքն՝ օրենքների և պայմանագրերի հիման վրա իրականացվող կառավարման միապետական ձևը Աքվինացին հակադրում է բռնապետությանը, այսինքն՝ այն կառավարմանը, որն իրականացվում է բռնակալի շահերից ելնելով և անօրինակամության տիրապետման

պայմաններում:<sup>11</sup>

Աքվինացին պետական իշխանության առավել բնական ձև համարում է միապետությունը, որի նպատակահարմարությունը հիմնավորում է համանմանության մեթոդով, գոյություն ունի մեկ Աստված, մեկ հոգի մարմնում և այլն: Ինչպես նաև է ընթանում քանուն հակառակ նավապետի կամքով, ճիշտ այդպես էլ պետական նավը ընթանում է ավելի լավ, երբ ունենում է մեկ կառավարիչ՝ միապետ: Այնուամենայնիվ, մաքուր միապետությունը բռնակալության վերածվելու հնարավորություն ունի (եթե չկան միապետի իշխանությունը զսպող հաստատություններ), որովհետև միապետությունն ընդգրկում է կառավարման թե՛ լավագույն, թե՛ վատագույն կողմերը: Ուստի, ելնելով մարդկային գոյության իրական պայմաններից և ժամանակի քաղաքական իրավիճակից, Աքվինացին առավել ընդունելի է համարում կառավարման խառը ձևը (երեք «մաքուր» ձևի հիմքի վրա): Ընդ որում, միապետը մարմնավորում է պետության միասնությունն ու հզորությունը, կառավարում համաձայն պետության օրենքների՝ իր գործողություններում սահմանափակված լինելով գործող իրավական նորմերով: Բացի այդ, կառավարողները պետք է հաշվի առնեն «ժողովրդի կամքը», բոլոր քաղաքացիներին ներգրավեն պետության կառավարման գործում, ինչը սոցիալական խաղաղության և համաձայնության, պետական կառույցի ամրապնդման անհրաժեշտ պայմանն է ու երաշխիքը: Այսպիսով, նա նախընտրում է միապետությունը՝ սահմանափակված ոչ միայն օրենքներով, այլև ազնվապետության ու ժողովրդապետության տարրերով:

Աքվինացու պետաիրավական հայացքները նշանակալի ազդեցություն թողեցին ոչ միայն իր, այլև նոր և նորագույն ժամանակաշրջանի իրավաքաղաքական ուսմունքների զարգացման վրա:

Պետության տիպաբանության նկատմամբ այդպիսի մոտեցումը, որը հիմնվում է օրինականության և օրինական կառավարումն անօրինականությանը հակադրելու վրա, այս կամ այն ձևով լայնորեն օգտագործվել է հետագա քաղաքական-իրավական մտքում ու որոշ չափով իր նշանակությունը պահպանել նաև Նոր և Նորագույն ժամանակաշրջանում:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Տե՛ս Христианские мыслители. СПб., 1997, с. 126-127.

Նոր և Նորագույն ժամանակաշրջանում պետությունների տիպաբանության հիմնական մոտեցումները (հայեցակարգերը) էին՝ **Չեզելի** պատմական-ֆորմացիոն տեսությունը (հոգևոր ֆորմացիաների հայեցակարգը),<sup>12</sup> **Մարքսի** պատմական-ֆորմացիոն տեսությունը (տնտեսական-արտադրական ֆորմացիաների հայեցակարգը),<sup>13</sup> **Թոյնբիի** քաղաքակրթական մոտեցումը<sup>14</sup> և պետության տիպաբանության ազատական-իրավաբանական հայեցակարգը:<sup>15</sup>

**Չեզելը** պետությունների տիպաբանության հիմնահարցը մեկնաբանում է ոգու ազատության զարգացման և պետության տարբեր ձևերում դրա օբյեկտիվացման համաշխարհային - պատմական գործընթացի դիրքերից: «Համաշխարհային պատմությունը, - գրում էր նա,- ամիրաժեշտություն է միայն ոգու ազատության հասկացությունից, բանականության պահերի և դրանով իսկ ինքնագիտակցության և ոգու ազատության զարգացում է՝ որպես համընդհանուր ոգու մեկնաբանում և իրականացում»:<sup>16</sup> Համաշխարհային ոգու այդպիսի իրականացման ձևերը, ըստ Չեզելի, «չորս համաշխարհային-պատմական թագավորություններն են՝

- 1) արևելյանը,
- 2) հունականը,
- 3) հռոմեականը,
- 4) գերմանականը»:<sup>17</sup>

Ըստ Չեզելի, այդ թագավորությունները համաշխարհային ոգու օբյեկտիվ -պատմական ֆորմացիաներ (ձևակազմավորումներ) են, այսինքն՝ համաշխարհային պատմության մեջ բանականության և ազատության զարգացման փուլների զարգացում:

Այդ համաշխարհային-պատմական թագավորությունների (համաշխարհային ոգու կազմավորումների) փոխարինմամբ փոխարինվում են նաև պետության համապատասխան ձևերը՝ արևելյան թագավորությանը համապատասխանում էր թեոկրատիան (մեկի,

գերագույն կառավարչի ազատությունը), հունական և հռոմեական թագավորություններին՝ ժողովրդավարությունը կամ ազնվականությունը (այսինքն՝ բնակչության մի մասի ազատությունը), գերմանական թագավորությանը՝ նոր ժամանակների միապետությունը ներկայացուցչական համակարգով (բոլորի ազատությունը): «Արևելքը, - գրում էր Չեզելը,- գիտեր և գիտի միայն, որ մեկն է ազատ, հունական ու հռոմեական աշխարհը գիտի, որ որոշ անհատներ են ազատ, գերմանական աշխարհը գիտի, որ բոլորն են ազատ»:<sup>18</sup> Ընդ որում, «գերմանական աշխարհ» ասելով Չեզելը նկատի ուներ հյուսիս-եվրոպական պետությունները, իսկ միապետություն ասելով՝ սահմանադրական միապետությունը ներկայացուցչական համակարգով և իշխանությունների բաժանմամբ:

Պետության և իրավունքի մարքսիստական տիպաբանության հիմքում ընկած է **Կ. Մարքսի** ու **Ֆ. էնգելսի** կողմից մատերիալիստական, պրոլետարական-դասակարգային, կոմունիստական դիրքերից մշակված ուսմունքը՝ հասարակական-տնտեսական ֆորմացիաների մասին: Ըստ մարքսիզմի, սոցիալ-պատմական զարգացման մեջ որոշիչ դեր են խաղում տնտեսական (արտադրական) հարաբերությունները, որոնք կազմում են հասարակության հիմնաքարը, որով և պայմանավորված է դրան համապատասխանող վերնաշենքը, ներառյալ պետությունն ու իրավունքը: Այդ մոտեցման համաձայն, **մարդկության ամբողջ պատմությունը բաժանվում է հինգ հասարակական-տնտեսական ֆորմացիայի. նախնադարյան համայնական կարգ, ստրկատիրական կարգ, ֆեոդալական կարգ, կապիտալիստական կարգ, կոմունիստական կարգ:**<sup>19</sup>

Մասնավոր սեփականության և դասակարգային բաժանման վրա հիմնված երեք դասակարգային հակամարտ (ամտագոնիստական) ֆորմացիաներին (ստրկատիրա-

<sup>12</sup> Տե՛ս **Нерсесянц В. С.** Философия права Гегеля. М., 1998.

<sup>13</sup> Маркситско-ленинская общая теория государства и права. Основные институты и понятия. М., 1970, с. 223-240.

<sup>14</sup> Տե՛ս **Тойнби А. Дш.** Постигание истории. М., 1991, с. 35-67.

<sup>15</sup> **Нерсесянц В. С.** Общая теория права и государства. Учебник. М., 2000, с. 241-244.

<sup>16</sup> **Гегель Г. Л.Ф.** Философия права. М., 1990. էջ 370.

<sup>17</sup> Նույն տեղը՝ էջ 374:

<sup>18</sup> **Гетель Г.В.Ф.** философия истории. М. Л. 1935. էջ 98

<sup>19</sup> Տե՛ս **Марксистко - ленинская общая теория государства и права. Основные институты и понятия.** М., 1970, с. 223-225.

կան, ֆեոդալական ու կապիտալիստական) համապատասխանում են պետության և իրավունքի երեք տիպ՝ ստրկատիրական պետությունը և իրավունքը, ֆեոդալական պետությունը և իրավունքը, կապիտալիստական) պետությունը և իրավունքը: Նախնադարյան կարգերի (նախնադարյան կոմունիզմի) ժամանակ դեռևս չկա պետություն և իրավունք, իսկ կոմունիզմի ժամանակ պետությունն ու իրավունքը, որպես դասակարգային երևույթներ, մահանում են: Կոմունիզմի առաջին փուլում (այսինքն՝ սոցիալիզմի ժամանակ) պետականության և իրավունքի վերաբերյալ աշխատանքի և սպառման չափի կարգավորման համար Մարքսը խոսում է պրոլետարիատի դիկտատուրայի ու բուրժուական «հավասար իրավունքի» մասին:

Հետագայում, խորհրդային մարքսիստական գրականության մեջ, մարքսիզմի հիմնադիրների կանխատեսող դրույթներին ակնհայտորեն հակադիր, սկսեցին առանձնացնել նաև պետության ու իրավունքի սոցիալիստական տիպը, որը, փաստորեն, ցույց է տվել առանց պետության և իրավունքի սոցիալիզմից լիակատար կոմունիզմին կանխատեսված անցման բացակայությունն ու հիմնագուրկ լինելը:

Տնտեսական ու դասակարգային հարաբերությունները, այլ գործոնների հետ միասին (հոգևոր, մշակութային և այլն), անկասկած, կարևոր նշանակություն ունեն պետության և իրավունքի ծագման, փոփոխման, զարգացման գործընթացում: Սակայն, դրանց դերի ուժեղացումը, որը բնութագրական է ամբողջ մարքսիզմին, ներառյալ նաև պետության և իրավունքի մարքսիստական տիպաբանությունը, հանգեցնում է էական արատների:

Նման արատներից է մարքսիզմի սկզբունքային բացասական վերաբերմունքը պետության և իրավունքի նկատմամբ, դրանք որպես դասակարգային ճնշման և հալածանքի գործիքներ, որպես տիրապետման ու ճնշման մեքենաներ մեկնաբանելը:

Այսպիսով, մարքսիստական մոտեցման մեջ անտեսվում է նաև այն սկզբունքային հանգամանքը և համաշխարհային պատմության ակնհայտ փաստը, որ այս աշխարհում մարդկանց ազատությունն ի հայտ է գալիս ու

զարգանում է հենց պետական-իրավական ձևերում: Ի հեճուկս մարքսիստական պատկերացումների ու գնահատականների՝ պետության և իրավունքի իրական պատմական զարգացումն ու տիպերի փոփոխումը (վաղ պետություններից մինչև ժամանակակից իրավական պետությունները) վկայում է մարդկանց ազատության, առաջադիմության (ազատության ոլորտի և չափի ընդլայնման, ազատների քվի մեծացման) և ոչ թե մեկ դասակարգի կողմից մյուսների նկատմամբ իրականացվող բռնության, ճնշման ու տիրապետման առաջընթացի մասին:

Պետության և իրավունքի մասին մարքսիստական ուսմունքը, ներառյալ՝ նաև պետության ու իրավունքի համապատասխան տիպաբանությունը, իր էությանը ժխտում է իրավունքի և պետության, որպես որոշակի արժեքի, որպես մարդկային մշակույթի, ազատության զարգացման մեջ նվաճման նկատմամբ ցանկացած դրական վերաբերմունք: Դա կրում է հակապետական ու հակաիրավական բնույթ, և սկզբունքորեն հակված չէ իրավագիտության ու իրավունքի և պետության իրավաբանական մեկնաբանմանը:

Հետխորհրդային իրավաբանական գրականության մեջ որոշակի տարածում գտան նաև հղումները պետության և իրավունքի տիպաբանության, այսպես կոչված, քաղաքակրթական մոտեցմանը: Ընդ որում, նկատի է առնվում **Օ. Շպենգլերի** և նրա «Վերոպայի մայրամուտը» գրքի գաղափարների զգալի ազդեցության տակ գտնվող անգլիացի պատմաբան **Ա. Ջ. Թոյնբրիի**<sup>20</sup> (1889-1975) ուսմունքը քաղաքակրթությունների մասին: Շպենգլերից հետո, որը ժխտում էր միասնական համամարդկային մշակույթը և խոսում էր տարբեր պարփակված մշակույթների մասին (ընդ որում, ստեղծագործական օրգանական մշակույթը, ըստ Շպենգլերի, մահանալով վերածնվում է անպտուղ մեխանիկական քաղաքակրթության), Թոյնբրին խոսում է մի քանի տասնյակ մասնատված, պարփակված քաղաքակրթությունների մասին և մարդկային պատմության մեջ ժխտում է քաղաքակրթական միասնությունը: Յուրաքանչյուր քաղաքակրթություն աչքի է ընկնում իր առանձնահատկությամբ, ունի իր սոցիալական և քաղաքական արժեքները, հայացքներն ու ձգտումները, իր պետական-իրավական

<sup>20</sup> **Тонной Л. Дж.** Постигание истории. М. 1991, с. 61-64; նաև՝ **Радько Т. Н.** Теория государства и права. М., 2010, с. 158-159.

ձևերն ու սահմանումները, մի խոսքով, պատմական «մարտահրավերներին» սեփական «պատասխանները»:

Ակնհայտ է, որ տարբեր ինքնավար քաղաքակրթությունների մասին նմանօրինակ ուսմունքի հիման վրա, լավագույն դեպքում, կարելի է խոսել համապատասխան մասնատված քաղաքակրթություններում իշխանության կազմակերպման և նորմատիվ կարգավորման միմյանցից կտրված տիպերի մասին, սակայն անհնար է (անգամ համանմանությանը և կրկնելիությանը հղումներ անելով) հիմնավորել պետության և իրավունքի մի ինչ-որ ամբողջական տիպաբանություն կառուցված բոլոր քաղաքակրթությունների համար ընդհանուր միասնական չափանիշի վրա: Եթե նման միասնական ընդհանուր քաղաքակրթական չափանիշ և սկզբունք հնարավոր է ու կա, ապա պետք է ճանաչեն (հենց թույնբին և նրա հետևորդները) մարդկության պատմության մեջ ինչ-որ միասնական քաղաքակրթության, համամարդկային քաղաքակրթության որոշակի հայեցակարգի առկայությունը, որի բաղադրատարրերն ու բաղադրապահերն առանձին հանրույթների և ժողովուրդների ինքնատիպ քաղաքակրթություններ (և մշակույթներ) են:<sup>21</sup>

Բացի դրանից, տարբեր քաղաքակրթությունների մասին թույնբի ուսմունքում, ինչպես նաեւ տարբեր մշակույթների մասին Շպենգլերի ուսմունքում չկա պետության և իրավունքի հիմնահարցերի որևէ հատուկ հետազոտություն, որի հիման վրա հնարավոր լինեի իրավագիտության մեջ կառուցել պետության և իրավունքի տեսական ու համապատմական նշանակություն ունեցող տիպաբանություն:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբներին ձևավորվեց իրավունքի և պետության ազատական - իրավաբանական հայեցակարգը, որի հեղինակն է ականավոր գիտնական ակադեմիկոս **Վ. Ս. Ներսեսյանցը:**

Համաձայն ազատական-իրավաբանական հայեցակարգի՝ պետության և իրավունքի տիպերն ազատության առաջընթացի փուլերն արտացոլող՝ մարդկանց ազատության ճանաչման ու կազմակերպման հիմնական պատմական ձևերն են:<sup>22</sup>

Իրավունքի և պետության՝ որպես մարդկանց ազատության ու ազատ անհատի՝ որպես իրավունքի սուբյեկտի և պետության (պետական իշխանության) սուբյեկտի անհրաժեշտ ձևերի ազատական - իրավաբանական հասկացողության ու մեկնաբանման դիրքերից սկզբունքային նշանակություն ունի իրավունքի և պետության տիպաբանությունն այն չափանիշներով (հիմքերով), որոնք որոշում են մարդկանց՝ որպես իրավունքի և պետության (պետական իշխանության) սուբյեկտների ճանաչման տարբեր պատմական ձևերի առանձնահատկությունը:<sup>23</sup>

Ինչպես նշում է ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցը. «Հին աշխարհի պետություններում անհատը (մարդը) ազատ է ու, դրա հետ միասին, պետության և իրավունքի սուբյեկտ է՝ էթնիկական չափանիշով: Այսպես, աթենական քաղաքացիներ և աթենական իրավունքի սուբյեկտներ կարող էին լինել աթենական դեմերի (տոհմերի) անդամները, հռոմեական քաղաքագիտական համայնքի (civitas-ի) անդամներ, հռոմեական քաղաքացիներ և հռոմեական իրավունքի (ius civile-ի) սուբյեկտներ՝ միայն քվիրիտները (բնիկ հռոմեացիները): Հին աշխարհի պետությունը և իրավունքն իր տիպով էթնիկական էր»:<sup>24</sup>

Պետության և իրավունքի այդ ելակետային տիպը հանդես է գալիս որպես մարդկանց՝ ազատների ու անազատների (էթնիկական հիմքով) բաժանման փաստի ճանաչման և ամրագրման անհրաժեշտ ձև, ընդ որում, ազատների տարբերությունն անազատներից իր արտացոլումն ու ամրագրումն է գտնում հենց նրանում, որ ազատներն իրավունքի և պետության սուբյեկտներ են, իսկ անազատները (ստրուկները), համապատասխանաբար, իրավունքի ու պետության օբյեկտներ: Այդ տարբերությունը, այլ կերպ, անհնար է արտահայտել:

Ստրկության հաղթահարումը միջնադարում տանում է դեպի դասային տիպի պետության և իրավունքի: Այստեղ մարդկանց ազատության առաջընթացն այն է, որ ազատության էթնիկական չափանիշը (այսինքն՝ մի մասի ազատությունը և մյուս մասի անազատությունը) իր տեղը զիջում է ազատության

<sup>21</sup> Տե՛ս **Рассолов М. М.** Актуальные проблемы теории государства и права. М., 2010, с. 74-75.

<sup>22</sup> Տե՛ս **Нерсесянц В. С.** Общая теория права и государства. М., 2000, с. 241-242.

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>24</sup> **Ներսեսյանց Վ. Ս.** Նշվ. աշխ., էջ 242:



դասային չափանիշին: Ջարգացման այս աստիճանում (եվրոպական ֆեոդալիզմ) ստրուկներ արդեն չկան և, այդ իմաստով, արդեն բոլորն ազատ են, սակայն այդ ազատության չափը տարբեր է առանձին խավերի ներկայացուցիչների մոտ: Այստեղ ազատությունը կրում է դասային սահմանափակումների և արտոնությունների բնույթ:

Իրավունքի և պետության այսպիսի դասային տիպի դեպքում յուրաքանչյուրը հենց որպես որոշակի դասի անդամ իրավունքի սուբյեկտ ու պետության սուբյեկտ է: Մարդկանց իրավասուբյեկտության և պետականասուբյեկտության ներդասային հավասարությունը համատեղվում է միջդասային անհավասարության՝ տարբեր դասերի ու դրանց անդամների պետական-իրավական կարգավիճակների անհավասարության հետ:

Նոր ժամանակներում ֆեոդալիզմի հաղթահարմամբ դասային կարգերին փոխարինելու է գալիս պետության և իրավունքի անհատական (անհատական-քաղաքական, անհատական-քաղաքացիական) տիպը: Պետության ու իրավունքի այդ տիպի ժամանակ մարդն իրավունքի և պետության սուբյեկտ է որպես ինքնուրույն քաղաքական անհատ (առանձին քաղաքացի), ոչ թե որպես որոշակի էթնոսի կամ դասի անդամ: Մարդկանց՝ որպես իրավունքի և պետության սուբյեկտների, այսպիսի անհատականացումը տեղի է ունենում միջնադարյան ֆեոդալիզմի քայքայման ու դասային բաժանման հաղթահարման գործընթացում, որպես հետևանք մասնավոր և քաղաքական կյանքի ոլորտների առանձնացման, ոչ քաղաքական քաղաքացիական հասարակության կազմավորման, քաղաքական պետությունից դրա տարբերակման:

Իրավունքի արդի (ներկայումս իրականորեն-պատմականորեն վերջին) տիպը և, համապատասխանաբար, սահմանադրականորեն ձևավորված ազատական-ժողովրդավարական իրավական պետության (ժամանակակից բառաօգտագործմամբ՝ իրավական պետության) տիպը խառը (կոմբինացված) տիպն է, որն իր մեջ զուգակցում է երկու տարբեր բաղադրատարր՝ բնական-իրավական և պոզիտիվ-իրավական: Իրավունքի և

իրավական պետության այդ ժամանակակից տիպը պայմանականորեն կարելի է անվանել բնական-պոզիտիվ (կամ մարդասիրական-քաղաքական), քանի որ այն որոշակի պետական ամբողջության տեսքով (մեկ պետության մեջ ամրագրված և գործող իրավունքի միասնական համակարգի ձևով) երկու, ավանդաբար հակադիր, հիմունքների՝ մասնավոր (անհատական - մարդկային, մարդասիրական) ու հանրային (քաղաքական, պաշտոնական - իշխանական) սկզբունքների, իրավունքի և պետության նկատմամբ բնական-իրավական ու պոզիտիվ - իրավական մոտեցումների պրագմատիկ համաձայնեցվածության և համագոյակցության արդյունք է:<sup>25</sup>

Տվյալ տիպի էական նորույթը որոշող բնական (բնական-իրավական, մարդասիրական) բաղադրատարրն այն է, որ այստեղ առաջին անգամ պետականորեն ամրապնդվում, պաշտոնեական-իշխանական ձևով հաստատվում ու պոզիտիվացվում են մարդու որոշակի բնական իրավունքները և ազատությունները, դրանց տրվում է իրավաբանական (պետական-հարկադիր) ուժ, ու ճանաչվում է դրանց գերապատվությունը գործող միասնական պոզիտիվ իրավունքի այլ աղբյուրների նկատմամբ: Նման տիպի շրջանակներում մարդու սահմանադրականորեն ամրագրված բնական իրավունքներն ու ազատությունները պարտադիր են պետության համար: Դրանք որոշում են և՛ ամբողջ պոզիտիվ իրավունքի, և՛ պետության իրավական բնույթը:<sup>26</sup>

Այսպիսով, անհրաժեշտ է արձանագրել, որ պետությունների տիպաբանության հիմնահարցը միշտ էլ գտնվել է փիլիսոփաների և իրավաբանների սևեռուն ուշադրության կենտրոնում, սակայն ինչպես նկատեցինք, մինչև այժմ քննարկվող հարցի վերաբերյալ միատեսակ մոտեցում գոյություն չունի, որը պայմանավորված է ոչ միայն հիմնախնդրի բարդությամբ, այլև մոտեցումների, հայեցակարգերի իրավափիլիսոփայական հիմքերի բազմազանությամբ: Այս բոլորը հիմնավորում են պետությունների տիպաբանության հիմնախնդրի հետազոտության արդիականությունը, նրա տեսական և կիրառական նշանակությունը:

<sup>25</sup> Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., Նշվ. աշխ., էջ 244:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 245:



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 79 2013

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

- «Քաղաքակիրթ» հասարակության մեջ մեկ անձի նկատմամբ կատարված հանցանքը՝ հանցանք է բոլորի նկատմամբ»  
Գևորգ Կոստանյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովի նիստում..... 2
- ՀՀ Ազգային ժողովում ..... 4
- ՀՀ Ազգային ժողովի որոշումը..... 5

### ԻՐԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նոր մոտեցումներ և աշխատանք..... 7
- Գևորգ Կոստանյան (կենսագրություն)..... 8
- Խորհրդակցում են Եվրոպայի դատախազները..... 9
- ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է մարդու իրավունքների հանձնակատարին..... 11
- Հանդիպում էի ՀՀ դեսպանի հետ..... 12
- Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում..... 13

### ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

- Արթուր ՂԱՄԱՐՅԱՆ Հետաքննություն և օպերատիվ-հետախուզական գործունեության բարեփոխումները իրավական ռեալիզմի հարթությունում..... 14

### ՔԱՂԱՔՑՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Վահրամ ԱՎԵՏԻՍՅԱՆ Կորպորացիայի լուծարման կապակցությամբ առաջացող կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները..... 26

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Եղիշե ԲԱԶՈՅԱՆ Պառլամենտական վերահսկողության ձևերն ու դասակարգման հիմքերը..... 37

### ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Յուրի ՂՈՒԿԱՍՅԱՆ Իրավունքի «հետդասական» հասկացման հիմնախնդրի շուրջ ..... 45

### ԳԼՈՒԲՈՒՄ

- Քրիստինե ԽԱՆԻԿՅԱՆ Շարիաթը՝ Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգի նորմատիվային հիմք..... 53

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Դիաննա ԲԵԳԼԱՐՅԱՆ Պետությունների տիպաբանության հիմնահարցը փիլիսոփայական-իրավական հայեցակարգում..... 57